

2556

ԿԱՐՄԻՐ ՊԵՏՐՈԳՐԱԴԻ  
ՀԱՄԱՐ  
ՄՆԱԾ ՄԱՐՏԵՐՈՒՄ

9(47)

4-29

24 JAN 2006

C ~~2039~~  
Գ. ԿԱՐԱՅԵՎ  
9(47)  
4-29

ԿԱՐՄԻՐ ՊԵՏՐՈԳՐԱԴԻ  
ՀԱՄԱՐ  
ՄՂԱԾ ՄԱՐՏԵՐՈՒՄ

21 MAY 2013

2556

Դ. ԿԱՐԱՅԵՎ. ԿԱՐՄԻՐ ՊԵՏՐՈԳՐԱԴԻ ՀԱՄԱՐ  
ՄՂԱՇ ՄԱՐՏԵՐՈՒՄ. Այս գիրքը նվիրված է ԽՍՀՄ  
մեջ Քաղաքացիական աճ պատերազմի ամենա-  
հիմնալի եջերից մեկին, այն ե' 1919 թ. Կարմիր  
Պիտերի հերոսական պաշտպանությանը, գործ ան-  
խզելիորեն կապված և ընկեր Ստալինի անվան հետ։  
Գիրքը մասսայական ընթերցանության համար և

30 MAY 2011



60152-67

## ԹՇՆԱՄԻՆ ԿԱՐՄԻՐ ՊԻՏԵՐԻ ԴՐՆԵՐԻ ՄՈՏ

«Հասել ե սոցիալիստական հեղափոխության ամենակրիտիկական մոմենտներից սեկրյամենայն հավանականությամբ, նույնիսկ ամենալրիտեկական մոմենտը։ Շահագործողների, կալվածատերների ու կապիտալիստների ոռուական և ոտարերկրյա պաշապանները (առաջին հերթին անգլիական և ֆրանսիական պաշապանները) հուսահատական փորձ են անում վերականգնելու ժողովրդական աշխատանքի թալանիչները՝ կալվածատերների ու շահագործողների իշխանությունը Խուսաստանում, գորպեսզի աժարացնեն նրանց կործանվող իշխանությունն ամբողջ աշխարհում» (Համ Կ (Բ) Կ կենտկոմի ասունից Վ. Ի. Լենինի գրած գիմումից, ուղղված կուսակցական բոլոր կազմակերպություններին, 1919 թ. հուլիսին):

### ՅԱՄԲՈՒՐԳԻ ՅԵՎ ՊՍԿՈՎԻ ԱՆԿՈՒՄԸ

Անմոռանալի տասնիններորդ տարին եր: Քաղաքացիական պատերազմի կը ակով բռնված Խորհուրդների Յերկրի վրա կախվել եր մահացու սպառնալիքը: Ինտերվենտների ու սպիտակ գվարդիականների հրոսակախմբերը կրակե ողակով շրջապատել եյին Խորհրդային հանրապետությունը, վորպեսզի վոչնչացնեն Հոկտեմբերյան սոցիալիստական հեղափոխության մեծ նվաճումները:


Արտասահմանյան բուրժուական ամբողջ մամուլն ու սպիտակ գվարդիական թերթուկները փող եյին փչում այն մասին, թե հաշըվ-ված են խորհրդային իշխանության որեքը:

«Խեղգել բոլշևիզմը մեկ հարվածով, զրկելով նրան իր կենսական կենտրոններից—Մոսկվայից և Պետրոգրադից»,—պահանջում եր Դենիկինից ժամանակավոր կառավարության նախկին զինվորական մինիստր սպիտակ գվարդիական Գուչկովը: «Պլիսավորն ե՝ կանգչառնել Վոլգայում, այլ խփել ափելի հեռու, բոլշևիզմի սրտին, Մոսկվային... Լենին իրենց գործը կկատարեն. իսկ ինչ վերաբերում ե Յուգանիշին, նա պատրաստ ե չի դանդաղի հարվածելու Պետրոգրադին»— իր հերթին գրում եր Դենիկինը Կոլչակին:

Անտանտը կազմակերպեց իր առաջին արշավը բանվորների և գյուղացիների իշխանության դեմ:

Կոլչակը գլխավոր հարվածը հասցնում եր Սրեկերից, Սիբիրից. Դենիկինը հարձակվում եր հարավից. նրա բանակների աջ թեր պետք ե միանար Կոլչակի բանակների հետ Սարատովի ուայնում: Հյուսիսից, Վոլգոգդայի և Վյատկայի ուղղությամբ, շարժվում եր գեներալ


Պուլի անգլո-ամերիկական եքսպեդիցիոն կորպուսը: Արևմուտքէց նեղում եյին սպիտակ լեհաստանի զորքերը (սխեմա 1):



Սխեմա 1. Անտանտի առաջին արշավը:

Սպիտակ գվարդիականության կողմից «համայն Ռուսաստանի գերագույն կառավարք» ճանաչված կոլչակը գեներալներ Ռուսական կողին և Յուղենիշին խնդիր առաջարկեց «տիրել Պետրոգրադին» և Արևելյան ճակատից դեպի իրեն քաշել կարմիր բանակներին: Անտանտը, և առաջին հերթին իմպերիալիստական Անգլիան, այդ ժամանակը՝

ձգուում եր Եստոնիայի ակտիվ մասնակցությունը հարձակվելու Ռուսական Ռուսաստանի վրա: Բուրժուական Եստոնիան դարձավ հակահեղափոխության բազա: Մայիս ամսի կեսերին գեներալ Ռուսական սպիտակ եստոնացիների, սպիտակ ֆինների և անգլիական նավատորմի ոգնությամբ անսպասելի կերպով հարձակում սկսեց Պետրոգրադի վրա, իսկ Բուլակ-Բալախովիչի ջոկատը ուղղություն վերցրեց դեպի Պուկով:



Սխեմա 2. Պետրոգրադի մատուցյները Ընկեր Ստալինի դնահատությամբ:

Ընկեր Ստալինը Պետրոգրադի ճակատը յեկած ժամանակ, վերաբերելով պարագան և սպիտակ գվարդիականների կողմից Պետրոգրադի վեկով:

Դը զավթելու հնարավորությունները, ոպերատիվ հմտությամբ տվեց Պետրոգրադի հնարավոր մատուցների հիմնալի բնութագիրը (սխեմա 2). «Պետրոգրադի մատուցները,— գրում եր ընկեր Ստալինը.— Դրանք այն կետերն են, վորտեղից հարձակվելով հակառակորդը, հաջողության դեպքում, կարող է շրջապատել Պետրոգրադը, անջատել նրան Ռուսաստանից և, վերջապես, տիրել այն։ Այդ կետերն են՝ Պետրոգրավոդսկի ճակատամասը, վորն ուղղություն ունի գեղի Զվանկա, նպատակը՝ շրջապատել Պետրոգրադը արևելքից։ Ոլոնեցի ճակատամասը, Լոդեյնովի Պոլե ուղղությամբ, նպատակը՝ անցնել Պետրոգրավոդսկի մեր զորքերի թիկունքը։ Կարելիայի ճակատամասը, վորն ուղղություն ունի ուղիղ դեպի Պետրոգրադ, նպատակը՝ Պետրոգրադը զրավել հարավ-արևմուտքից կամ, ծայրահեղ դեպքում, զրավել Գատչինա—Տունո գիծը և շրջապատել Պետրոգրադը հարավից։ Պոկովի ճակատամասը, Դնո-Բուլոգյե ուղղությամբ։ Նպատակը՝ Պետրոգրադը կտրել Մոսկվայից։ Վերջապես Ֆիննական ծոցը և Լադոգայի լիճը, վորոնք հակառա որդին հնարավորություն են տալիս զորքեր ափ հանել Պետրոգրադի տրեմուտքից և արևելքից»<sup>1</sup>.

1919 թվականի գարնանը հակառակորդը Պետրոգրադի վրա հարձակվելու համար ընտրեց Նարվի ճակատամասը։

Թշնամին հարձակում սկսեց սպիտակ գիշերներից մեկում, վորապիսի գիշերներ լինում են Մերձբալթիկում մայիսի կեսերին։

Մեր 53-րդ հրաձգային գնդի պահապան ուղեկալները ճակատում բացազատված եյին մոտ 20 կիլոմետրի վրա, Պլյուսա գետի մյուս կողմում, Մարինսկայա ագարակից մինչև Գոստիցի գյուղը։ Խիտ անտառն ու քիչ մատչելի ճահիճները նրանց բաժանում եյին Նարովա գետից, վորի գծի վրա եյին դասավորվել սպիտակ հասոնական դորամասերը։ Մեր հետախուզությունն այնտեղ չեր անցնում։ Յերկար ժամանակ այս ճակատամասում հակառակորդի հետ ընդհարումներ չեյին յեղել, և զորամասերը սովորել եյին հանգիստ կյանքի։

Սպիտակ գվարդիականների ջոկատներն ոգտվելով մեր ուղեկալների թմրած աշալը ջությունից և նրանց բավականաչափ իրարից հեռու գտնվելուց, կարմիր բանակայինների հագուստ հագած, մայիսի 13-ի գիշերը ներխուժեցին 19-րդ հրաձգային գիվիգիայի 3-րդ բրիգադի թիկունքը և անսպասելի կերպով հարձակվեցին մեր զորամասերի վրա։ Անսպասելիությունն այնքան մեծ եր, վոր փոքրաթիվ թշնամուն հաջողվեց քանդել յերկաթուղագիծը, զրավել Գալիքիլով-

սկայայի մոտ Պլյուսա գետի կամուրջը և գրավել այնտեղ զասավորված մարտկոցը (սխեմա 3)։ Սպիտակները միաժամանակ մի քանի տեղ կտրեցին լարերը և խափանեցին կապը մեր զորամատսերի միջև։ Սպիտակ գվարդիական ջոկատներից մեկը անտառային արահետներով հասավ Պոպկովա Գորա գյուղին և գրավեց այնտեղ զասավորված 19-րդ գիվիգիայի 3-րդ բրիգադի շտաբը։ Շտաբի հետ մեկտեղ գերի ընկավ նաև բրիգադի հրամանատար Նիկոլայեվը։


Այդ նույն գիշերը հարձակման անցան նաև գեներալալներ Ռուձանկոյի և Յուղենիչի գլխավոր ուժերը, վորոնք կենարոնացել եյին Նարովա գետի աջ ափին։ Ֆնդապետ Գեորգի ջոկատը գրոհեց 167-րդ հրաձգային գնդի 2-րդ գումարտակի վրա նիզի գյուղի մոտ և, տիրելով Պլյուսայի գետանցին, հեշտությամբ ջախջախեց նրա ուղեկալներին, վորոնք ցրված եյին մեկմեկուց բավական հեռավորության վրա կորտակվեց Նարվա—Գդով գծի վրա յերթեկող յերկու զրահագնացք։ Միաժամանակ գնդապետներ Պալենի և Վետրենկոյի ջոկատները հարձակվեցին 53-րդ հրաձգային գնդի վրա և ջախջախեցին այն։ 53-րդ հրաձգային գնդի հրամանատարն իր գնդին միացրեց 167-րդ հրաձգային գնդի հրամանատար միաժեկում 2-րդ գումարտակի մասցորդները և մի քանի տասնյակ մարտիկների հետ նահանջեց դեպի Արքնովկա գյուղը։ Այդ նույն ժամանակում Բուլակ-Բալախնովիչի ջոկատը ստիպեց մեր զորամասերին նահանջել Գդովի ուղղությամբ։

Այսպիսով՝ ճեղքվեց ճակատը Նարվայի տեղամասում։

Աչալը ջունը թուլացած եր վոչ միայն ուղեկալներում, այլև հրամանատարության մեջ, մինչև իսկ 7-րդ բանակի շտաբում։ 6-րդ գիվիգիայի պետը սպիտակների կողմից կատարած այդ ճեղքվածքը գնահատեց վորպես պատահական հարձակում։ 7-րդ բանակի շտաբը չհետաքրքրվեց ճակատի վիճակով և Արևմտյան ճակատի հրամանատարության հարցումին պատասխանեց գիվիգիայի պետի խոսքերով, թե «ուժեղացված և պահպանությունը, և հակառակորդի հարձակման գեղքում յենթադրվում են նրան հարված հասցնել թերից՝ ուղերվի մի գումարտակով, վարոյա գյուղի կողմից»։

Մինչդեռ «ուղերվի գումարտակի» հարվածի մասին խոսելն անգամ ծիծաղելի յեր, սպիտակները շեշտակիորեն առաջ շարժվեցին և յերկու որից հետո գրավեցին Պլյուսա և Լուգա գետերի միջև ընկած ամբողջ շերտը։ Միայն մայիսի 15-ի որվա վերջին սթափվեց հրամանատարությունը և սկսեց ուղերվները մոտեցնել Վեյմառն կայսրանին, նրանց միացնելով Վեյմառնական խմբավորման զորքերին։ Վատ եյին կազմակերպված այդ խմբի գործողությունները զորամասերը գալիս եյին ուշացումով։ Առաջինը յեկավ 171-րդ հրաձգային գունդը, վորը գրավեց Սրեգնեյն Սելո, Գորկի, Կրյակովո և Բեսեղի

<sup>1</sup> «Պետրոգրագակայա պրագրա» № 151, 1919 թ.



Մինչավ Յելլ ճակատական ճեղքեցք սպառական լուրջից 1919 թ. մայիսի 13-ի դեմքը:


Պյուղեբը: Համարյա միաժամանակ 54-րդ հրաձգային գնդի զորամասերը գրավեցին Լուգայի աջ ափին ընկած Կիևնա դյուղը: Լիչնայի մոտ գտնված գետանցին հասավ Ռեգեսինի վոլոստի կոմունիստական

կոկատը: Վեյմառնին մոտեցան Գատչինայից դիվիզիական դպրոցը և զրահամեքենաների մի դասակ: Մոլոսկովիցի յեկավ Պետրոպաղյան 2-րդ հրաձգային գունդը, վորն շտապով տեղափոխվել եր Կարելյան ճակատամասից: Սակայն կարգավորված չեր այդ զորամասերի ղեկավարությունը զորամասերը համախմբված չի ինչն, շտաբները ցուցաբերեցին անհանդուրժելի դանդաղկոտություն և ժամանակին չկազմակերպեցին զորքերի համագործակցությունը:

Այն ինչ՝ գեղքերը չեյին սպասում: Գնդապետ Պալենի ջոկատը, մայիսի 16-ի գիշերը, Մուրավեյնոյի մոտ անցնելով Լուգա գետը, հարձակվեց Սրեդնեյե Սելո-Գորկիի վրա և ջախջախեց 171-րդ հրաձգային գունդը: Ոգնության ուղարկված դիվիզիական դպրոցը հերոսական գիմադրություն ցույց տվեց սպիտակ գվարդիականներին Մանուկիլի մոտ, բայց կորցնելով իր կազմի յերեք քառորդ մասը՝ յետ քաշվեց գետի վեյմառ՝ հակառակորդի գերազանց ուժերի ճնշըման տակ: Ուշացավ Մոլոսկովիցից 2-րդ Պետրոպաղյան գնդի ողնությունը: Վեյմառնի խմբավորման պետը ժամի 18 անց 30 ըուեկ հարկադրված յեղավ նահանջել գետի Ոպոլյու գյուղը իր մոտ մնացած մեկ զրահամեքենայով, չորս գնդացրով և հարյուրից պակաս մարտիկներով: Վեյմառն կայարանն անմիջապես գրավեց գնդապետ Պալենի ջոկատը: Նրա հետեւ անմիջապես յեկավ նաև գնդապետ Վետրենկովի ջոկատը: Սպիտակ գվարդիականներն սկսեցին արագորեն բացազատվել արեմայան և հյուսիսային ուղղություններով: Այդ նույն որը նրանք գրավեցին Տիկոպիս կիսակայարանը, իսկ յերեկոյան դեմ՝ Մալլի, Կիլլի և Կերստովս գյուղերը: Դրանով ալարտվեց Նարվայի մարտական ճակատամասի զորքերի ձախ թևի և թիկունքի շրջանցը, փակելով Բալթյան յերկաթուղագծի և Պետրոպաղյան իճուղու յերկայնությամբ ընկած ճանապարհները (սխեմա 4):

Նարվայի ծոցում մայիսի 14-ին, նույնական անսպասելի կերպով, հայտնվեցին թշնամու նավերը, վորոնք կրակ բաց արին առափնյա գյուղերի վրա: Մի քանի ականակիրների կրակով ավերվեց Սան-Գալլի պոստը, իսկ քիչ հետո յեկած թշնամու հածանավը իր աշտարակային հրանոթներով կրակ բաց արեց Ռոպշայի և Կուղեմկինի վրա: Մայիսի 15-ին, մոտ ժամը 8-ին թշնամու նավերը մտան Լուգայի ծովախորը և կուգա զետը և զորքեր ափ հանեցին Ոստրով գյուղի մոտ: Այդ գետանտը յերեկոյան դեմ գրավեց Կրակոլյեն և սկսեց տարածվել Բոլ. Կուղեմկինոյի և Պոլուչյեյի ուղղությամբ: Հետեւ որը համար մարտեր սկսվեցին Իլինո—Ֆյոդորովկա ճակատամասը գրաված 166-րդ հրաձգային գնդի և Գունդերուրդից հարձակման անցած սպիտակ եստոնական զորամասերի միջև: Արվա յերկրորդ կեսին հա-

առակորդը գրավեց ինկինոն։ Այդ ժամանակ Ռուսովի մոտ շարունակվում եր նոր զեսանտի ափ հանելը։ Նրանց դեմ ամբողջ որը շարունակվեց մարտը Կուղեմկինո գյուղի համար։ Միաժամանակ սպիտակների հետախուզական ջոկատները հայտնվեցին Պոլուչյե և Գլուբոկայտ այլ յունում, այդպիսով ցուցաբերելով ակնհայտնի կերպով ձգտում միանալ Պալենի ջոկատի հետ կերպով լոյթ։



Սխեմա 4. Գործողությունները ճակատում 1919 թ. մայիսի 13-22։

Այդ դժվարին պայմաններում, մայիսի 17-ի գիշերն սկսվեց նարվայի մարտական ճակատամասի զորքերի նահանջը դեպի Կոսկուլսկա—Խաբորով—Բարինո—Կոլիխնա—Ուլույե—Կարպով—Կրյակով գիծը։ Կարճատե սպիտակ գիշերվա թույլ լույսի տակ տեղի ունեցավ զորամասերի անցումը Լուգա գետով Յամբուրգի մոտ։ Զուրը բարձր եր կանգնած։ Դժվար եր լաստանավերով գետանց կատարել։ Գետանցն ավարտվեց մայիսի 17-ին ժամի 5-ին։ Առավոյան սպիտակները դրավեցին Յամբուրգը։ Նրանց առաջավոր զորամասերը շարունակեցին արագաթափ շարժվել դեպի արևելք, դեպի Պիտեր։

\* \*

Պակովի ուղղության վրա պաշտպանությունն ավելի լավ չեր կազմակերպված, քան Յամբուրգի տակ։ Գուղի ճակատամասի զորամասերը, վորոնք շատ ելին յերկարաձգված Զուրի և Պակովի լճերի յերկայնքով (սիեմա 5), ի վեճակի չելին լուրջ դիմադրություն ցույց

տալու սպիտակներին։ Հենց առաջին որը, մայիսի 13-ին, Բալտիավիչի ջոկատը, սպիտակ եստոնական լճային ֆլոտիլիայի հրանոթների կրակային աջակցությամբ, հարձակում ծավալեց Սկամյեյի ույսինից։ Կարմիրների 163-րդ հրաձգային գնդի վաշտերը № 38 դրահաթուցիկի հետ միասին յետ քաշվեցին Զերմա գետի մյուս կողմը։ Յերմակովով և Ռուսի գծի վրա։ Մայիսի 14-ի ամբողջ որը մարտ եր տեղի ունենում Պուլի համար։ Հետեւյալ որն արդեն պարզվեց, վոր Բալտիավիչը կարող ե շրջանցնել մեր աջ թեր և զորքեր ափ հանել լճի կողմից։ Այս հանգամանքը հարկադրեց մեր զորքերին մայիսի 15-ին մաքրել Գուղի և քաշվել Կունեստ գետի մյուս կողմը, իսկ հետո, մայիսի 18-ին, անցնել Զակրոպիվենկա և Կամենկա գծի վրա, Ժյուշա գետի գետից հետին հյուսիս։

Ճակատի գրությունը խստորեն բարդացավ նախկին սպաներից մի շարք հրամանատարների, այլ և սպիտակների կողմն անցած առանձին զորամասերի մատնությամբ և դավաճանությամբ։


Մայիսի 20-ին Զուր լճի Փլոտիլիային հրաման տրվեց Ռասկուպել գյուղի բազայից անցնել Պոկովի լիճը։ «Ուգա» և «Յերմակ» նավերը, գույքով բարձած բեռնանավը բուքսիրի վերցրած մի կատերի հետ դուրս յեկան Պոկով, բայց, հասնելով մինչև Ոստրովեց գյուղը, կրակ բաց արին Ոստրովեցի և Պողբորովյեյի վրա ու, բարձրացնելով սպիտակ գվարդիական անդրեյվյան զրոշակ, ուղղություն վերցրին գետի կունեստի գետաբերանը, վորտեղ և հանձնվեցին սպիտակներին։

Մայիսի 23-ի առաջին գիշերը հրաձգային գունդը, վոր գիրքեր եր գրավել Իգբրուկի ույսուում, դավաճանորեն անցավ սպիտակների կողմը։ Սպիտակ եստոնացիներն անմիջապես հարձակման անցան և գրավեցին Իգբրուկը։ Այսպիսով, գուրս յեկավ, վոր մեր ճակատը Պոկովի մոտ ճեղքված է։

Այդ կանխորոշում եր Պոկովի անկումը։

Քաղաքի եվակուացիան տեղի ունեցավ բացառիկ ծանր պայմաններում։ Ոգտվելով ճակատում կրած մեր անհաջողություններից՝ սկսեցին խլրտալ հականեղափոխական տարրերը թե քաղաքում և թե շրջակա գյուղերում։ Սպիտակ գվարդիական ազենաները եյին կատարում։ Տերտերա-կուլակային ագիտացիալի ազգեցության տակ գյուղերում բռնկվեցին կուլակային խոռվություններ։

Պլյուսա—Ստրուգի (այժմ Կարմիր Ստրուգի) կայարանամիջում պայթեցվեց յերկաթուղարիծը և կտրվեց հաղորդակցությունը Պետրոգրադի հետ։ Այնուհետեւ այդ նույն ճանապարհը կտրվեց՝ 72-րդ վերստի վրա կամուրջը պայթեցնելով։ Պոկով կայարանում ծագեց հրդեհ, վորի հետեւանքով պայթեցին մի քանի պայթուցիկ ականներ։ Դրանից հետո դասաւլիքները խռովություն բարձրացրին Սելեզյովա կայարանի ույսուում։ Այդ խռովության պատճառով գաղարեց Պոկով—




Սինծա 5. Ինագմական գործողությունները Գրով - Պոկովյան ռազդության վրա.

Պոլոցկ գծով կատարվող հաղորդակցությունը, բայց շուտով այդ խռովությունը լիկվիդացիայի յնթարկեցին՝ այնուեղ ուղարկված զորքերը՝ Մայիսի 23-ի լեռեկոյան պայթեցվեց Պոկով - Բոլոգոյե դիմը 14-րդ

վերստի վրա՝ ռազմասահմարական գնացքն անցնելուց առաջ՝ Գնացքը խորտակվեց, և ջարդված վագոնները խափանեցին ճանապարհը։ Այսպես՝ հարձակում գործող սպիտակ գվարդիականությանն ողնում եր թիկունքում թագնված հականեղափոխությունը։

Մեր զորամասերը գեռ քաղաքից չելին դուրս յեկել, յերբ Վելիկայա գետի ափին հայտնվեց սպիտակ եստոնական հետեակը։ Նա շարժվեց գետի Ոլգինսկի կամուրջը (այժմ Կարմիր Բանակի կամուրջ) զրահապատի պաշտպանության տակ։ Սկսվեց կրակային մարտը։ Այդ վճռական մոմենտին լսվեց ուժեղ պայթյունի ձայն։ Կամուրջը նստեց ջրի մեջ և արգելեց թշնամուն անցնել Վելիկայա գետի աջ ափը։ Այդ պայթյունը կատարեց ականապայթուցիկ վաշտի հրամանատար ընկ. Ա.



Կարմիր Բանակի կամուրջը (Նախկին Ոլգինսկի) Պոկովյան նկարում յերեսում և այն մասի վերանորոգումը, որը պայթեցվեց 1919 թ.։

Ա. Զեպուրինը, վորը հենց այդտեղ ել զոհվեց՝ իր մարտական պուտում։ Դրանից հետո մեր զորամասերը մաքրեցին քաղաքը։

Ոլգինսկի և Միկայիլ յերկաթուղային կամուրջները պալթեցնելուց հետո, սպիտակ եստոնացիները, վախենալով նոր պայթյուններից, այլև չհետապնդեցին նահանջողներին։ Ականատեսները պատմում են, վոր «Քաղաքում գեռ հազիվ շրջում ելին անհատ կարմիր բանակայինները, հյուծված ու հոգնած, իսկ յետ մնացած դավաճան սպաները, վորոնք առաջ կարմիր Բանակում և հիմնարկություններում ելին ծառայում, արդեն ուսադիրներ ելին կպցրել, խթաններ ելին դրել ու թիկ կապել սպիտակներին դիմավորելու համար։ Սկսվեց թալանը։ Բուրժուազիան իր տներն եր անզափոխում փափուկ կահւկարասիք, ոոյալներ ու դաշնամուրներ, տրյումոններ։ Գետը ողավոր

սկայա փողոցում շարդեցին մախորկայի, լուցկու, ծխախոտի, յուղի նավթի պտղեսաները: Սկսվեց մեծ ջարու:

Մայիսի 26-ի առավոտյան սպիտակ եստոնացիները գրավեցին քաղաքը: Մեր զորամասերն այդ ժամանակ նահանջեցին գետի Զերնյակովիցի և Պոդորելկա գիծը և այնունետե կետ և Զերյոխա գետի մյուս կողմը: Միաժամանակ Զուղի ճակատամասի այն զորամասերին, վորոնք գեռ շարունակում եյին իրենց ձեռքում պահել Ժյոլչա գետի բնագիծը, հրաման տրվեց հեռանալ գետի Կվաշենկինա Գորա, Ստարկովա, Պետրի գյուղերը և այդպիսով արևմուտքից պաշտպանել ճակատը Պետրոգրադի հետ կապող յերկաթուղագիծը:

### ՍՊԻՏԱԿՆԵՐԻ ԳԱԶԱՆՈՒԹՅՈՒՆԵՐԸ

«Սպիտակ գորքերը յեկել են ազատագրելու իրենց յեղբայրներին», — այսպես եր սկսվում գեներալ Ռոձյանկոյի մայիսի 15-ի հրամանը: Հրամանի հետեւալ պարագրաֆներում պարզապես մատնանշվում եր, թե սպիտակ հրամանատարությունը «յեղբայրներ» ասելով ում եր հասկանում: Հրամանում կախաղանի միջոցով մահվան պատճիռ եր, հայտարարվում կոմունիստներին, խորհրդային իշխանությանը համակրողներին, խորհրդային հիմնարկությունների ծառայողներին և այլն, առանց բացառելու և կանանց: Սպիտակ լրագրերը բացարձակապես կոչ եյին անում հրեաներին ջարդելու:

Սկզբնական շրջանում սպիտակները հայտարարեցին, վոր գյուղացիներին իրավունք են տալիս հավաքել իրենց գրաված հողերի բերքը: Սակայն հետո հայտարարվեց, վոր բոլոր հողերը պետք ե վերաբարձնել իրենց նախկին տերերին և «Հողերի վոչ մի ինքնակամ գըրավում չի թույլատրվում»: «Դեմոկրատական» ճռուան ֆրազներով սպիտակներն իրենց գրաված վերականգնում ելին կալվածատիրական իշխանությունը: Ամենուրեք կալվածատերերը վերադառնում եյին իրենց կալվածքները և իրենց հաղիներն եյին մաքրում գյուղացիների հետ: Գյուղերում կատարվում եյին մասսայական խուզարկություններ, պատանդներ եյին վերցվում, մարդկանց ձերբակալում և գանակոծում եյին՝ խորհրդային իշխանությանը համակրելու մեջ ամենանշան կասկածանքի համար: Չեյին խնալում վհչ կանանց, վհչ ծերունիներին:

Անա թե ինչպես են նկանատեսներն այդպիսի բռնություններից մեկը:

«Ֆալեյեփո գյուղում ընկեր Մարինա Գրիգորյեվային ձերբակալեցին վորպես խորհրդային իշխանության համակրողի: Ցերը նրան հարցըին, թե «Ո՞վ ես դու, կոմունիստ չես արդյոք», Մարինան խիստ վրդովված, համարձակ ու բացարձակ հալտարարեց: «Սպանելու լեք

յեկել, ճիվաղներ, սպանեք ելի, յեթե այդպես ե. յես կոմունիստ եմ»: Գյուղացիների բազմության ներկայությամբ նրան գլորեցին ցեխի մեջ և սկսեցին ծեծել: Սակայն նա մտրակի տակ ել բղավում եր. «Դահիճներ, մարդասպաններ, հոգեսպաններ»: Ցերը վերջացրին գանակոծել նրան, նա ընկած եր գետնին արյունաշաղախ, ամբողջու վին ցեխի մեջ կորած, մերկացված մարմնով: «Դուք չեք կարող սպանել ինձ, հոգեսպաններ», — ասաց Մարինան՝ վեր կենալով: Նրան կըրկին գետին գլորեցին և նորից սկսեցին ծեծել... Այդ խոշտանգումներից հետո Մարինան հաշմանդամ մնաց իր ամբողջ կյանքում»:

Տեղական բնակչությունը լավ և հիշում այն գաղանային բըռնությունները, ծաղրանքներն ու ծեծերը, վորոնցով սպիտակները հավերժացրին իրենց ներկայությունը: Համարյա գյուղ չկա, վորտեղ պահպանված չլինեն կոշմարացին հիշողություններ սպիտակների տիրապետության մասին: Սովորաբար սպիտակների գալուստը ուղեկցվում եր նրանով, վոր տերտերներն ու կուլակները մատնում եյին գյուղական չըավորության ակտիվիստներին: Այդպես ձերբակալվեցին ու հետո գնդակահարվեցին չըավոր գյուղացիներ Անտիպ Ռոտաչովը և իվան Լուկաշովը Յամսկովիցի գյուղում, իվան Կորոլկովը և Յեգոր Յուրիկինը Նովեստի գյուղում, չըավորության կոմիտեյի անդամ բառակ Պոլիտը Ոպոլյէ գյուղում և այլն:


Բուլակ-Բալախովիչի շատրի ու պարետային վարչության գալուց հետո Պակովում անմիջապես սկսվեցին մասսայական խուզարկություններն ու ձերբակալությունները: Մայիսի 28-ի գիշերը, Վելիկայա գետի ափին, նախկին պաշտոնատների շենքի յետևում տեղի ունեցավ խորհրդային ծառայողների խմբի առաջին գնդակահարությունը: Գնդակահարվածների թվում եյին Կոտլյարովը—սոցապահովագության վարիչը, Պողեմսկին—փորագրիչը, վորը շատամպներ ու կնիքներ եր պատրաստում խորհրդային հիմնարկությունների համար, Մարյան Բելորոկովան—Պակովի Արտակարգ հանձնաժողովում անձնադիր գրողը և մյուսները: Գնդակահարվածների գիտելիքները նետվեցին Վելիկայա գետը և մի քանի որ հետո միայն յերկացին Պակովայի գետաբերանում:

Բնակչությանը սարսափեցնելու համար 9 մարդու կախեցին կենտրոնական փողոցների լապտերների սյուներից: Քաղաքում անդադար գործում եր սպիտակ հականետախուզությունը: Բանտերն անմիջապես լիքը լցվեցին բանտարկյաներով: Մշտական մահապատիժների տեղը հեղափոխության զոհերի հրապարակն եր (նախկին Սեննայա): Այստեղ Բալախովիչի հրամանով կախաղան եր կանգնեցված: Ամեն շաբաթ՝ շաբաթ որերին մահվան դատավճիռներ ելին կալացվում, իսկ



կիրակի որն առավոտյան շուկա յեկած շրջակա բնակչությանը «լուրատելու համար» մահապատիճներ եյին կատարում: Դատավճիռը կատարում եր ինքը Բալախովիչը: Մահապատիճի յենթարկվածներին հենց այդտեղ թաղում ելին հողի մեջ: Բացի դրանից, բազմաթիվ գնդակահարություններ եյին կատարվում Դիմիտրովսկի գերեզմանատան ցանկապատի յետևում:

Տեղական բնակչուհի Վ. Վ. Անտիպովան պատմում է. «Յերբ յես Սովետսկայա փողոցը դուրս յեկա և տեսա լապտերների սյուներից կախված դիակները, իսկույն ինձ վատ զգացի ու հենվեցի անկյունի




1919 թվին Բարեխովիչի պատրաստած կախաղանը Հեղափոխության գոհերի հանու. Սեննայա) հրապարակում, Պակովում:

մետաղի սյունին (այդ սյունն այժմ ել կա, թեև անկյունի տունը քանդել են), Քիչ հանգստանալով յես նկատեցի, վոր ինչվոր մի բան խփում և իմ ուսերին: Ինչպես պարզվեց, այդ սյունին նույնպես մարդ եր կախված... Յես փախա դեպի Սովետսկայա հրապարակը: Սակայն եր կախված... Յես փախա դեպի Սովետներից կախված ելին յերկու մարդ»: այնտեղ ես լապտերների սյուներից կախված ելին յերկու մարդ»:

Սպիտակներն այդպես գաժանորեն վարվեցին նաև Յամբուրդում: Սպիտակները քաղաք մտան թե չե, սկսվեցին ձերբակալություն-ներ: Կալանավորում եյին բոլոր նրանց, ովքեր թեկուզ անշան չաներ: Կալանավորում եյին բոլոր նրանց, ովքեր թեկուզ անշան չաներ: Կախածանքի եյին յենթարկված խորհրդային իշխանությանը փող կատածանքի եյին յենթարկված խորհրդային շամականությունը գովակածական բարձրացրին խորհրդային շատ ծառահամակերու մեջ: Կախաղան բարձրացրին խորհրդային շատ ծառահամակերու մեջ: Կախում եյին յողների: Կախում եյին քաղաքի գլխավոր փողոցում, կախում եյին յողների: Կախում եյին քաղաքի գլխավոր փողոցում, կախում եյին յողներից զինվորական զորանոցների մոտ: Այստեղ կախաղան բարձրառությունը գոհերը կախում եյին բոլոր կոմունիստներին և

բացրին հետաքննչական հանձնաժողովի նախագահ ընկեր Լուսեյին, արհմիութենական աշխատող ընկե. Բուստրոսմին և շատ ուրիշների: Մահապատիճի մյուս վայրը գտնվում եր կայարանից վոչ հեռու: Ներկայումս այդ վայրը վոչ մի բանով չի նշված: Առաջ այստեղ սեմաֆոր կար, և տեղական բնակիչները լավ եյին ճանաչում այդ վայրը: Այստեղ, անտառի յեզրին, սպիտակները գնդակահարում եյին իրենց զոհերին: Մահապատիճի յենթարկվածներին կիսաթաղ եյին անում հողում: Յերբ մեր զորամասերը վերագրավեցին Յամբուրդը, այդտեղ հայտարերվեցին հողի տակից դուրս ընկած սպիտակ գվարդիական տեսողի զոհերի ձեռքերնու վոտքերը:



Սպիտակ տեսողի զոհերի հուշարձանը Դմիտրովյան գերեզմանոցի պատի յետևում, Պակովում:

Յամբուրդ եյին քշում տանում սպիտակներն իրենց գրաված գյուղերից վերցրած բազմաթիվ պատանդներին: Դրանք չքավոր եյին: Քիչ չեր նաև նարվայից վերցրած բանվորների թիվը, մեծ մասամբ կրեմքումի մանուֆակտուրայից: Նրանց կալանքի տակ եյին տռել սպիտակ գվարդիականների թիվունքում կատարած ընդհատակյա հեղափոխական աշխատանքի համար: Նրանց թվում եր նաև նարվայի կուսկազմակերպության ակտիվ աշխատող ընկե. Վելլրախը (Կախաղանով մահապատիճի յենթարկված): Մարդկանց մեծ կուտակումների և վատ սննդի հետևանքով կալանավորների մեջ սկսվեցին համաձարակ հիվանդություններ:

Սպիտակներն առանձնապես անզորք դատաստան եյին տեսնում գերիների հետ: Անխում կախում եյին բոլոր կոմունիստներին և

խորհրդային իշխանությանը համակրողներին, Մնացած մարդկանց առաջ հարց երին դնում անցնել իրենց մոտ՝ ծառայության, և հրաժարվելու դեպքում կամ գնդակահարում ելին:

Սպիտակներն իրենց հարձակման սկզբին գերի վերցրին 19-րդ հրաձգային դիվիզիայի Յ-րդ բրիգադի հրամանատարին, ցարական բանակի նախկին գեներալ Նիկոլային: Նա մեկն եր այն հին սպաներից, վորոնք առանց տատաշնութիւնի, պրոլետարական հեղափոխութիւն առաջին որերից անցան խորհրդային իշխանության կողմը և իրենց գիտելիքներն ու փորձերը ազնվորեն նվիրեցին Բանվորակուղացիական Կարմիր Բանակի ստեղծման և ամրապնդման գործին:

Սպիտակներն առաջարկեցին ընկ. Նիկոլայեվին, վորպես նախկին սպայի, անցնել իրենց մոտ ծառայության: Ընկ. Նիկոլայեվը կտրականապես հրաժարվեց դրանից: Մահապատժի սպառնալիքները չփոխեցին նրա վորոշումը: Այն ժամանակ սպիտակները նրան տարան Յամբուրդ և քաղաքի ու շրջակա գյուղերի ամբողջ ընակլությանը հայտնեցին ընկ. Նիկոլայեվի առաջիկա մահապատժի մասին: Առավոտից սկսած բռնիկերպով շուկայի հրապարակն եյին քշում ժողովրդին:

Քաղաքում այժմ ել ապրում են այդ մահապատժի շատ ականատեսներ, վորոնք յերիտասարդ սելնդին պատմում են քաջարի հրամանատարի մասին, թե ինչպես նա զոհվեց բանվոր դասակարգի գործի համար: Ահա ինչ են պատմում ականատեսներն այդ մահապատժի մասին:

Հրապարակում 1919 թ. սկզբից կանգնեցված եր Կարլ Մարքսի հուշարձանը, Սպիտակները, գրավելով քաղաքը, քանդեցին այդ հուշարձանը և նրա տեղը կախաղան կանգնեցրին: Այդ հենց այն տաճ դիմաց եր, վորտեղ գտնվում եր սպիտակ գվարդիական շտաբը: Պատը



19-րդ հրաձգային դիվիզիայի Յ-րդ բրիգադի հրամանատար Ա.Պ. Նիկոլայեվը, զորին սպիտակները գերի վերցրին մահապատժի բնությունից:

գամբ, ողուրս յեկավ գեներալ Ռուճյանկոն՝ համհարդներով շրջապատված: Ընկ. Նիկոլայեվին հրապարակ բերին պահակով շրջապատված: Նա իրեն շատ հանդիսատես եր պահում: Քանի դեռ թմբուկ եյին հարում, նա կանգնած նայում եր իրեն շրջապատողներին: Յերբ վերջացրին դատավճար ընթերցումը, բոլորի առաջ շարդեցին նրա «գեներալական սուրբ»: Կախաղանի տակ տարուրեատ եր դրված: Ընկ. Նիկոլայեվին ինքը բարձրացավ տարուրեատի վրա, բացեց տուժուրեատի ոճիքը, ողն իր վիզը գցեց, ձգվեց ու ասաց. «Դուք խլում եք ինձնից իմ կյանքը, բայց դուք չեք կարող խել ինձնից իմ հավատը մարդկանց գալիք յերջանկության նկատմամբ»: Յետակից մոտ վագեց դահճճը՝ յենթասպաներից մեկը, և վոտքով խփեց տարուրեատին, վորպես զին դուրս գցի ընկ. Նիկոլայեվի վոտքերի տակից: Ինչվոր պատճառով այդ չհաջողվեց յենթասպային: Կողքին կանգնած սպան բղավեց նրա վրա, պարանը բռնած զինվորները ձիգ տվին այն զեպի վեր, իսկ դահճճը յերկուրդ հարվածով դեն շպրտեց տարուրեատը... Պարանը կապեցին յերկաթե սյունին, վոր կանգուն եր մնացել Կարլ Մարքսի քանդված հուշարձանի ցանկապատից:

Սպիտակ գվարդիական ավանդուրան լիկվիդացիայի յենթարկելուց հետո, ընկ. Նիկոլայեվի մարմինը կիսաթաղ վիճակում գտնըվեց քաղաքային գերեզմանատանը, տեղափոխվեց Պետրոգրադ և թաղվեց այնտեղ: Տեղական բնակչությունն այդ ժամանակից շուկայի հրապարակն անվանեց Նիկոլայեվյան հրապարակ:

### ՃԱԿԱԾԼ ՏԱՏԱՆՎԵՑ

Յամբուրդ հանձնելուց հետո մեր զորքերը յերկար զորասյունով ձգվեցին գետի կերպով տանող անտառային ձանապարհի վրա: Նեղ ձանապարհը ըրճնված եր մարդկանց համատարած հոսանքով, հրանոթների, սայլերի հոսանքով: Տեղանուղան զորամասերն իրար եյին խառնըվում: Վոչ վոք չեր մտածում հետախուզության և պահպանության միջոցների մասին: Մինչդեռ կերպով գյուղն արդեն գրավել եյին սպիտակ գվարդիականները:

Սպիտակները թույլ տվին, վոր մեր զորասյունը մոտենա կերպով գյուղին և կրակ բաց արին նրա վրա: Նահանջողների մի մասը նետվեց գետի կոտլի և բոլ. Ոգերտիցի: Մյուս մասերը նեղն ընկան անտառում և կողմանակի ձանապարհով գուրս յեկան կոպորյեյի մոտ: Ծանր հրետանին թաղվեց ձահճի մեջ: Հրանոթների մի մասը նետվեց Սոլվա գետի մեջ: Զկար դեկավարության միասնություն և կապ զորամասերի միջև: Զորամասերից մի քանիսը, ընդհանրապես, հետո յերկար ժամանակ վորոնում եյին իրար: Որինակ՝ 6-րդ հրաձգային դիվիզիայի 1-ին բրիգադի մասցը դիվիզիայի շտաբը գտավ միայն մայիսի 19-ին Վիտինոյում: Ընդվորում, դիվիզիայի շտաբի գընահատականով, զորամասերն այնքան են քայլաված, վոր վոչ մի

լուրջ խնդիր չեն կարող կատարել և նրանց ոգտագործելու բոլոր փողձերը կարող են միայն վերջնականապես վոչչացնել գնդելը»:

Այդ ժամանակ լավ չեր դրությունը նաև ձախ թեռում, վեյմառն կայարանի ույշնում:

Մայիսի 18-ին, կեսօրին, սպիտակները, վրուդա կայարանը պաշտպանող կարմիր զորամասերի խոր թիկունքը շրջանցնելով, հանկարծակի գրոհեցին նրանց վրա արևելքից: Հարվածն այնքան անսպասելի յեր, վոր կարմիրները համարյա առանց մաքտի բռնվելու թողեցին կայարանը, զրահագնացքը և պարենի բաղան:

Այդ նույն որը կոպորյեցի ծովախորշում հայտնվեցին թշնամու հրետանավում մեկ ականակիր, իսկ սրանց յետեւից հայտնվեց 6 տրանսպորտային նավ՝ գետանտով: Համարյա միաժամանակ գետանտոյին ջոկատներ ափ հանվեցին Պեյպիա, Սիստա-Պալկինո և Դոլգովո գյուղերի մոտ: Թեև նրանցից մեկը Դոլգովոյի մոտ հաջողությամբ գրոհի յենթարկվեց Կրոնշտադտի բերդային գնդի կողմից և նետ շվրտվեց գետի Սիստա-Պալկինո, մնացած յերկու ջոկատները կոպորյեցի ուղղության վրա կատարած իրենց գործողություններով ել ավելի գրժվարացրին նարվայի մարտական ճակատամասի զորամասերի նահանջը (սխեմա 4):

Կիսահալ ջրերից տակավին չչորացած ճանապարհներով ձգվել ելին գումակները: Հոգնած ձիերը գժվարությամբ ելին դուրս քաշում սայլերի ու հրանոթային հրետասայլերի անիվները կազուն կավահողից: Նրանց յետեւից շարժվում եր հետեւակը մարտիկների խիստ նոսրացած շարքերով:

Մեր զորամասերի նահանջը գեղի Պետրոգրադի մոտակա մատուցները շարունակվեց մինչև մայիսի վերջը՝ առանց կանգ առնելու: Զեյին կատարվում հարձակման անցնելու վերաբերյալ զանազան ժամանակներում տրված հրամանները, Համալրումները գալիս ելին մեծ ուշացումներով, մանր զորամասերով և վատ ելին վարժված ու սպառագինված: Այդ պատճառով նրանք չելին կարող բեկում առաջ բերել ճակատի մարտական գործողությունների մեջ: Հաճախակի ելին դարձել նախկին սպաններից կազմված հրամկազմի, նրանց հետ նաև ամբողջ ստորաբաժանումներով սպիտակների կողմն անցնելու դեպքերը: Ճակատն ակնհայտորեն կորցնում եր իր կայունությունը:

\* \*

Այդ ժամանակ սպիտակների հարձակողական թափն սկսել եր սպառվել:


Սպիտակների հյուսիսային կողուսի ուժերի սահմանափակ լինելը, 5-6 հազար մարդուց վոչ ավելի, այլև կապի միջոցների ու

կազմակերպված թիկունքի բացակաչությունն ավելի և ավելի խըստորեն ելին դժվարացնում սպիտակ գվարդիականների հետագա աւաջխաղացումը: Գեներալ Ռոձյանկոն հետագայում գրում եր իր հիշողություններում: «Այդ ամենը մեզ համար վատ հետեւանք կարող եր ունենաւ: Վոչ իմ և վոչ մի ուրիշի մտքով անգամ չեր կարող անցնել գրավել Պետրոգրադն այնքան աննշան ուժերով. սակայն և յետալ արդեն բոլշևիկներից աղատագրված վայրը ցանկալի չեր»:

Սպիտակ գեներալը չի գրում այն պլանների մասին, վոր նաև նրա գործակիցները նշում ելին, չի գրում և այն ուժերի մասին, վորոնց վրա նրանք հույս ելին գնում: Ընկեր Ստալինը բացահայտեց այդ պլանների իսկական իմաստը և սպիտակ հրամանատարության հաշիվները:

«Բոլոր ավյալներով,— գրում եր ընկեր Ստալինը «Պետրոգրադ-սկայա պրավդայում» 1919 թ. հուլիսի 8-ին,— հակառակորդը հույս եր գնում վոչ միայն, կամ, ավելի ճիշտ, վոչ այնքան իր սեփական ուժերի վրա, վորքան իր կողմանկիցների, այն ե՛ մեր զորքերի թիկունքում, Պետրոգրադում և ճակատներում սպիտակ գվարդիականների ուժի վրա: Ամենից առաջ Պիտերում ալբորդ բուրգուական պետությունների (ֆրանսիական, ցիցյարական, հունական, իտալական, հոլանդական, գանիփական, ուռմինական և այլն) այսպիս կոչված գետպանությունները, վորոնք, հոգուտ Յուզենիչի և անգլո-ֆրանս-Փիննա-եստոնական բուրգուազիայի, զբաղված ելին սպիտակ գվարդիականներին ֆիննասպորելով ու լրտեսությամբ, Այդ պարոնները աջ ու ձախ առատորին գրամներ ելին շոայլում մեր բանակի թիկունքում կաշառելով այն ամենը, ինչ կարելի յեր կաշառել: Այնուհետև ոռուս սպայության այն ծախլած մասը, վորը մոռացել եր Ռուսաստանը, կորցրել եր պատիվը և պատրաստ եր անցնելու բանվորացյուղացիական Ռուսաստանի թշնամինների կողմը: Վերջապես, Պետրոգրադի պրոլետարիատի կողմից վիրավորանք ստացած նախկին մարդիկ, բուրգուան ու կալվածատերերը, վորոնք, ինչպես հետո պարզվեց, զենք ելին կուտակել և հարմար մոմենտին ելին սպասում մեր զորքերի թիկունքին հարված հասցնելու համար: Հենց այդ ուժերի վրա յեր հույս դրել հակառակորդը՝ հարձակվելով Պետրոգրադի վրա: Գրավել կրասնայա Գորկան, կրոնշտագտի ալդ բանակին, և դրանով իսկ թուլացնել ամրացված սալոնը, ապստամբություն բարձրացնել ամրոցներում և կրակ բանալ Պետրոգրադի վրա այն հաշվով, վոր, ընդհանուր խառնաշփոթության մոմենտին, ընդհանուր հարձակումը միացնելով ապստամբության հետ Պետրոգրադում, շրջապատի և գրավի պրոլետարական հեղափոխության ոջախը, — ահա վորոնք ելին հակառակորդի հաշիվները»:

Մայիսի վերջին նահանջող կարմիր զորամասերի ճակատը հասալ Դոլգովո (Կոպորյեյի ծովախորշը)՝ Վորոնինո—Մեդուշի—Մուլիցի—Պուլյեվո—Դիվենսկայա գծին:



Այդ ժամանակ սպառակների ճնշումն այնքան թուլացավ, վոր 7-րդ բանակի հրամանատարությունը, վերջապես, իր մեջ այնքան ուժ գտավ, վոր փորձ արեց հարձակման անցնել կազմակերպված ձևով (սխեմա 6):

Մայիսի 27-ին 7-րդ բանակի հրամանատարությունը հրաման տվեց հարձակման անցնելու մայիսի 29-ի լուսաղեմին: Նարվայի խըմբավորմանը խնդիր առաջադրվեց՝ ճեղքել սպառակների ճակատը Յամբուրգի խճուղու ուղղությամբ և, մտնելով թիկունքը, ջախջախել նրանց գլխավոր խմբավորումը — զնդապետ Պալենի ջոկատը, — վորը Կիկերինոյից շարունակում եր հարձակումը Յելիզավետինովի վրա:

19-րդ հրաձգային դիվիզիայի 2-րդ բրիդագից, 1-ին Կրոնշտադտի բերդային գնդից և 6-րդ բանակից նոր յեկած 77-րդ հրաձգային գնդից կազմված բալթյան հավաքական դիվիզիան հարված պետք և հասցներ բեղունիցի և իլեշի ուղղությամբ և դուրս գար կուգա գետի վրա:



Ս. Ս. Ռակով:

Հգային դիվիզիայի յերկու գունդ:

Ռազմական լրտեսությունն ու դավաճանությունները ցանցապատել եյին խորհրդային զորքերի շտաբներն ու շատ զորամասեր, վորի հետևանքով սպառակներին հայտնի դարձան վոչ միայն նարվայի զորամասերի կազմն ու խմբավորումը, այլ և նրանց առաջադրված խնդիրները և նույնիսկ նրանց տրամադրությունները: Նախկին սպառակներից հրամակազմի մեջ քիչ դավաճաններ չեղան, վորոնք կապված եյին սպառակ հրամանատարության հետ: Սիվերսկայայի ուսյոնում,

Բոժդեստվենո գյուղում, գավաճանորեն սպիտակների կողմն անցավ Պետրոգրավից նոր լեկած 3-րդ Պետրոգրադյան գնդի 3-րդ գումարտակը: Այդ գումարը կազմակերպված եր ցարական պահեստային Սեմյոնովյան գվարդիական գնդի մասցորդներից և աղտոտված եր անհարազատ տարբերով՝ վաճառականների, նախկին տնատերերի և առևտրականների վորդիներով: Սպիտակ գվարդիականները տեղեկանալով այդ գնդի արամադրության մասին, Թալարյան գնդով հարձակում գործեցին նրա վրա և մայիսի 29-ի գիշերը մտան Վիլա գյուղը: Գյուղում դասավորված 3-րդ գումարտակի խոռվարաններն սպանեցին գնդի համարնատար ընկ. Տավրինին, գնդի կոմիսար ընկ. Կուռպելին և գնդի բոլոր գումարտակների կոմիսարներին: Այդուղ գտնված բրիգադի կոմիսար ընկ. Ա. Ռակովը, իմանալով գավաճանության մասին, դիրք մտնելով շտաբի շենքում պաշտպանվեց սպիտակներից գնդացրով և նագանով մինչև վերջին փամփուշտը: Բոլոր փամփուշտները ծախսելով, ընկ. Ռակովը սպանեց իրեն վերջին գնդակով: Կոմունիստների հետ գատաստան տեսնելուց հետո գավաճաններն անցան սպիտակների կողմը: Հետազոտման միացան նաև գնդի մյուս ստորագրաժանումները:

Այդ գավաճանությունն ոգնեց սպիտակ գվարդիականներին առաջ շարժվել մինչև Մեծնո և պայթեցնել Սիվերսկայա կայարանի մոտ գտնված լերկաթուղային կամուրջը: Բայց և այնպես նարվայի խմբավորման մասցած ճակատում, առանձնապես աջ թեում, մեր զորամասերն անցան հարձակման և սկսեցին նեղել լայն ճակատով յերկարածված սպիտակներին:

Մայիսի 31-ին Բալթյան դիվիզիայի ճակատի հանդեպ դասավորված սպիտակների գլխավոր ուժերը քշվեցին դեպի կյուղի ուղղությունու: 6-րդ հրաձգային դիվիզիայի աջ թերեց թեգունիցի գյուղին: Հունիսի 3-ին Բալթյան դիվիզիայի աջ թերեց դուրս յեկավ Սումմա գետի դժի վրա, Ռւսացի և Պալլովո ճակատամասում: Դիվիզիան յեկած պիտերյան կուրսանտների հավաքական ջոկատը վերցրեց Ռւսուու, Սիստա, Կորոստովիցի, Նեկոդիցի գյուղերը: Այդ ժամանակ 6-րդ հրաձգային դիվիզիայի աջ թեում գործող 158-րդ հրաձգային գումարն առաջ շարժվեց գեպի Բրիգգովո—Ռիսովո—Ռունկովիցի գիծը, իսկ դիվիզիայի այն զորամասերը, վորոնք հարձակվում եին Բալթյան լերկաթուղագծի լերկայնքով, մարտ մղելով զրավեցին Մինկովոն, Կիեվիցիոն և Խոլոպովիցին:

Սպիտակ հաջողությունը յերկար չտեսց: Բոլոր հանգամանքները հարկադրում են յենթադրել, վոր այդ հարձակումը դիտավորյալ կերպով ձեռնարկվեց, առանց բավարար չափով կենտրոնացնելու հուսավառքում աջ թեում—Բալթյան դիվիզիայի ճակատամասում—գլխավոր հարվածի ուղղության վրա: Հարձակման համար ստեղծված չեյին նաև

անհրաժեշտ ուեզերվներ: Որինակ՝ 6-րդ հրաձգային դիվիզիայի դիվիզիական ուեզերվում փաստորեն կար միայն մի փոքրիկ ջոկատ՝ բաղկացած 80 մարդուց: Ոգնության համար ուղարկված համալրումը տեղ չհասավ: Վատ եր կազմակերպված նաև զրամասներին պարենի անհրաժեշտ տեսակներով մատակարարելու գործը: Բալթյան դիվիզիան նույնիսկ թիկունք չուներ: Այդ բոլորի հետեւանքն արտահայտվեց շուտով: դրանով մի անգամ և ապացուցվեց՝ ինչպես այն ժամանակակից զինվորական ղեկավարության անընդունակությունը՝ կատարելու իր խնդիրներն այդ ժամանակակի ճակատում ստեղծված պայմաններում, այնպես և մեր շաբանների աղտոտվածությունը՝ լկտիորեն երենց քայլքայիչ աշխատանքն անցկացնող գավաճաններով ու լրտեսներով:

Սպիտակները, տեղեկանալով մեր զրամասների հարձակման պլանի մասին, Ոստրովսկան և Ռեվելյան գնդերը կենտրոնացրին իրենց համար կարենոր Նեգոդիցի—Բեգունիցի ուղղության վրա և անցան հականարձակման: Այդ նույն որը սպիտակները մեր զրամասներին հարկադրեցին նահանջել գեպի Մեստանովո, Գոլուբովիցի, Լուկովիցի, Մուրատովու: Տեղի ունեցան մարտեր փոփոխակի հաջողություններով: Բեգունիցին ձեռքիձեռք եր անցնում: Սպիտակ ուեզերվներ չկային: Ուշանում եյին ոգնական ուժերը: Փորձ արվեց ծավալել հարձակումը 6-րդ հրաձգային դիվիզիայի ճակատում, բայց այդ փորձն եյական արդյունքներ չտվեց: Մարտամթերքներն սկսեցին ստացվել ընդհատումներով: Սպիտակ գվարդիականները շարունակելով հարձակվել իրենց ճախ թեսվ, ստիպեցին 97-րդ հրաձգային գնդին, իսկ նրանիդ հետո և Բալթյան դիվիզիայի մյուս զրամասներին նահանջել գեպի Գոտորուժի—Վորոնինո գիծը, հունիսի 5-ի լերեկոյան գեմ: Դիվիզիայի շտաբը զեկուցում եր, վոր յեթի անմիջապես ոգնական ուժերը չուղարկվեն, նա հույս չունի զորամասների նահանջն այդ բնագծում կանգնեցնելու: Սպիտակ չստացվեցին հարկավոր ոգնական ուժերը: Ինչպես հարկն և չապահովված հարձակումը ստիպեց մեր զրքերին յետ քաշվել նախորդ նրանց կողմից զրաված ճակատի գծից և հետապայում վերածվեց նահանջի: Յեվ իրոք, մեր զրամասները հունիսի 11-ին նահանջեցին Կովաչ գետի աջ ափը: Այդ նույն որը, ճախթեում, Վերեստի ռայոնում, գավաճանորեն սպիտակների կողմն անցագ Պետրոգրադյան հեծյալ բրիգադի 2-րդ հեծյալ գունդը նախկին սպահ հրամանատարների գլխավորությամբ: Յերբ գնդի կոմիսարն ու կոմունիստները փորձեցին կանգնեցնել դավաճաններին, սպանվեցին նրանց ձեռքով:

Սարբիցի գյուղի (Լուգա քաղաքի մոտ) կուլակների դավաճանության պատճառով զոհվեց 1-ին Լուգայան գումարտակի կոմիսար ընկ. Գալբերգը:

Սպիտակները հարձակման համար այնպիսի ժամանակ ընտրեցին, յերբ ջոկատը, զենքը թողնելով բնակարաններում, միտինդի յեր հաշվաքվել տեղական զպրոցը։ Պահպանություն չեր նշանակված։ Ազատութեն գյուղ մտնելով՝ բանդիտները տներից վերցրին հրացանները և, զինվելով նրանցով, հանկարծակի հարձակվեցին կարմիր բանակայինների վրա։ Առաջ յեկավ խառնաշփոթություն։ Բնկ. Գալբերգը նետվեց դեպի գումարտակի շտաբը, բայց գումարտակն արդեն անձնատուր եր յեղել սպիտակներին։ Բնկ. Գալբերգին շրջապատեցին և գերի վերցրին վիրավոր։ Նա սպանվեց՝ զզվելի ծաղրանքներից հետո, իսկ նրա մարմինը ձգեցին գյուղի մոտից հօսող Վելիդեմա գետի ափը։

Մշտական անհաջողությունները ճակատում, նողկալի մատնություններն ու գավաճանությունները, կուլակա-դասալիքների խըսովությունները, — այս բոլորն անշափորեն քայլայում եյին Շարդ բանակի մարտունակությունը։ «Շփոթմունք եր տիրում ամբողջ Շարդ բանակում, ճակատը տատանվեց, թշնամին մոտենում եր Պետրոգրադին Հարկավոր եր անմիջապես փրկել գրությունը»<sup>1</sup>։

## Ի. Վ. ՍԱԱԼԻՆԸ ՊԵՏՐՈԳՐԱԴԻ ՃԱԿԱՏՈՒՄ

Պիծերի ձԱԿԱՏԸ, ՎՈՐՊԵՍ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԱՄԵՆԱԿԱՐԵՎՈՐ ՁԱԿԱՏԸ

Լենինյան կուսակցության կենտրոնական կոմիտեն մի կոչով գիմեց Պետրոգրադի, Պակովի, Նովորոպոդի և Պիտերին մոտակա մյուս նահանգների կուսակցական և խորհրդային կազմակերպություններին։

«Կարմիր Պիտերը գտնվում է լուրջ սպառնալիքի տակ—ասված եր այդ կոչում։ — Պիտերի ճակատը դառնում է Հանրապետության ամենակարևոր ճակատներից մեկը։

Խորհրդային Ռուսաստանը չի կարող Պետրոգրադը հանձնել նույնիսկ ամենակարճ ժամանակով։

Պետրոգրադը սկսաք ե պաշտպանել ինչ գնով ուզում ե լինի։ Զափաղանց մեծ ե այդ քաղաքի նշանակությունը։ Նա առաջինը բարձրացրեց ապատամբության գրոշը բուրժուազիայի դեմ, և առաջինը նաև տարավ վճռական հաղթանակը»։

Կենտրոնական կոմիտեն պահանջում եր լարել բոլոր ուժերը՝ մոքիլիզացիայի յենթարկել և Պիտերին ոգնության ուղարկել բոլորին, ովքեր ընդունակ են զենք կրելու։

Միաժամանակ կենտրոնը վրոշեց Կարմիր Պիտերի պաշտպանությունը կազմակերպելու համար այնտեղ ուղարկել ընկեր Ստալինը։

«1918—1920 թ.թ. ժամանակաշրջանում ընկեր Ստալինը հանդի սանում եր, թերես, միակ մարդը, վորին կենտրոնական կոմիտեն մարտական մի ճակատից մյուսն եր գցում, ընտրելով հեղափոխության համար ամենից ավելի վտանգավոր, ամենից ավելի ահավոր վայրերը։ Այնտեղ, վորտեղ համեմատաբար հանդիսա եր ու բարեհաջող, վորտեղ մենք հաջողություններ եյինք ունենում, — այնտեղ Ստալինը չեր յերեւմ։ Սակայն այնտեղ, վորտեղ ամբողջ մի շարք պատճառների ուժով կարմիր բանակներն եյին ճարճատում, վորտեղ հականեղափոխական ուժերը, զարգացնելով իրենց հաջողությունները, սպառնում եյին խորհրդային իշխանության գոյությանն իսկ, վորտեղ շփոթությունն ու խուճապը կարող եյին ամեն բոպե վերածվել անշարժակության, կատաստրոֆի, — այնտեղ հայտնվում եր ընկեր Ստալինը։

<sup>1</sup> Ա. ՑԵ. Վարուժիս, «Սաալինը և Կարմիր Բանակը». Կուսիրատ, 1935 թ., հջ 29 (ռուս.)։

Նա գիշերները չեր քնում, նա կազմակերպում եր, նա իր հաստատուն ձեռքն եր վերցնում ղեկավարությունը, նա կոտրում եր, անողոք եր և—բեկում եր ստեղծում, առողջացնում եր պարագան։ Ինքը ընկեր Ստալինն այդ մասին գրում եր 1919 թ. Կենտկոմին ուղած նամակներից մեկում, ասելով, վոր իրեն «դարձնում են ուղարկան գերատեսչության ախոռները մաքրելու մասնագետ»<sup>1</sup>։

1918 թ. ամառն ու աշնանը ընկեր Ստալինը կազմակերպեց Յարիշինի հերոսական պաշտպանությունը, նախորոք սպիտակ գվարդիական լրտեսներից մաքրելով Հյուսիսային Կովկասի ուղղմական շրջանի շտաբներն ու թիկունքները։ 1918—19 թ. թ. ձմեռը ընկեր Ստալինը կենտրոնական Կոմիտեյի հանձնարարությամբ, Ֆ. Ե. Զերժինսկու հետ միասին վերացրեց Յ-րդ բանակի քայլքայումը և կազմակերպեց Արևելյան ճակատի կարմիր բանակների հաղթական հարձակումը Կոլչակի դեմ։

Պիտեր ժամանելով՝ ընկեր Ստալինն այդտեղ Պետրոգրադի ճակատի շտաբներում և գորամասերում հանդիպեց չափազանց ծանր պայմանների, մատնությունների ու դավաճանությունների, լրտեսության, հականեղավորխական դավադրությունների, հանդիպեց Յ-րդ բանակի ղեկավարության անձարակությանն ու լիակատար խառնաշփռության, ճակատի քայլքայմանն ու Կարմիր Պիտերը սպիտակներից պաշտպանելու անընդունակության։ այս բոլորը դավաճանական նպատակներով մեր կուսակցության մեջ սողոսկած Տրոցկու «ղեկավարության» պառուներն եյին։

Ընկեր Ստալինը հենց առաջին որերից անցավ յեռուն գործունեցության։ Նա իսկույն եեթ իր ձեռքը վերցրեց ղեկավարությունը և կազմեց չափ ու սահմանն անցած թշնամուն կործանիչ հարված հասցնելու պլանը։

Ընկեր Ստալինի ստրատեգիական պլանն արմատապես տարբերվում եր այն պլաններից, վորոնք կազմվում եյին զինվորական մասնագետների կողմից մինչև նրա ժամանումը։ Այդ մասնագետների պլաններում գլխավոր տեղը հատկացվում եր ողնական ուժեր ուղարկելուն (հաճախ առանց հաշվի առնելու նրանց վորակը), զորքերի վերախմբավորմանը և այլն։ Ընկեր Ստալինն իր պլանում ամենից առաջ յելնում եր այն բանից, վոր անհրաժեշտ և անխնա վոչնչացնել լրտեսական և դավաճանական սպիտակ գվարդիական բները, ինչպես Պետրոգրադի ճակատում գործող մեր զորամասերի թիկունքում, այնպես և այդ զորքերի ներսում։ Նա մոբիլիզացիայի յենթարկեց Կարմիր

<sup>1</sup> Կ. Յե. Վորոշիլով, «Ստալինը և Կարմիր Բանակը», Կուսաքառ, 1935 թ. էջ 7—8։

Պիտերի հերոսական պրոլետարիատի հեղափոխական յեռանդը նրան թշնամուց պաշտպանելու համար։ Բայց դրանից, ընկեր Ստալինը նախատեսեց զորքերի մարտունակությունն ամրացնելու միջոցները՝ զեկավարության սխատեմը վերակազմելու միջոցով, անհուսալի հրամանատարներով փոխարինելու միջոցով, վորոնք անսահմանորեն նվիրված եյին պրոլետարական հեղափոխության զործին, գնդերում կուսակցական և կոմյերիտական կորիզն ուժեղացնելու, մարտիկների մեջ քաղացխատանքը ծավալելու միջոցով, վոր վերջին ժամանակ փաստորեն ընդհատվել եր նահանջելու պատճառով և այլն։ Վերջապես, ընկեր Ստալինի պլանը նախատեսում եր այն, վոր հարկավոր և բավարար չափով ուժերը ու միջոցներ կուտակել լայնորեն մտածված վճռական հարձակման համար։

Ընկեր Ստալինն արտասովոր ներթափանցությամբ հայտաբերեց բոլոր խոցերը, անխնա վոչնչացնելով այն ամենը, ինչ վարակված եր ու փատած, նա առողջացրեց ճակատն ու թիկունքը և բանակային որպանիզմն ապահովեց անհրաժեշտ ուժերով և միջոցներով՝ վճռական մոմենտին թշնամուն իետ մղելու համար, յերբ նա մոտենա Կարմիր Պիտերի մոտակա մատուցներին։

Ընկեր Ստալինը պրոլետարական հեղափոխության ամրոցի՝ Պետրոգրադի վրա կախված մահացու վտանգի որերին աշխատում եր առանց ձեռքերը ծալելու, շրջապատղներին ապշեցնելով իր անսպառ յեռանդով և ընդունված վորոշումները յերկաթե հաստատակամությամբ կենապործելով։ Ականատեսներն իրենց հիշողություններում նկարագըրում են ընկեր Ստալինին, թե ինչպես նա զեկուցումներ եր ընդունում շտաբային համեստ վագոնում, վոր կանգնած եր Բալթյան յերկաթուղարձի պահեստի գծերից մեկի վրա, ինչպես նա ուշ գիշերներին վլուխը կռացրած աշխատում եր քարտեղի վրա, ինչպես խորհրդակցություններ եր անցկացնում ուղղմածովային մասնագետների իետ և մերժում եր նրանց «խորհուրդները», թշնամու կրակի զռնայում ովերացիաներն եր ղեկավարում ճակատում, յելույթներ եր ունենում միտինգներում... Վորտեղ ել նա լիներ, ամենուրեք ստեղծագործական բոլշևիկյան թափ ու յեռանդ եր մտցնում, վորորելով շրջապատղներին՝ թշնամուն վոչնչացնելու աննկուն վճռականությամբ։

### ՀԱՐՎԱԾ ԹԻԿՈՒՆՔԻ ՀԱԿԱՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ

Բնութագրելով պարագան, վոր ստեղծվել եր այն ժամանակ Պետրոգրադի ճակատում, կենինը բոլոր աշխատավորներին ուղղած դիմումի մեջ գրում եր։

«Սպիտակ գվարդիականների հարձակումը Պիտերուրգի վրա՝

ակնհայտորեն ապացուցեց, վոր ամբողջ ճակատամերձ շերտում, յուրաքանչյուր մեծ քաղաքում լայնորման զարգացած ևն լրտեսության, դավաճանության կազմակերպությունները, կամուրջների պայմանագումամբ կազմակերպելը, կոմունիստաների և բանվորական կազմակերպությունների ակնառու անդամների սպանությունների կազմակերպումը...»

1919 թ. ամառվա դեմ Պետրոգրադի բնակիչների թիվը խիստ նվազեց՝ հասնելով մինչեւ 800 հազար մարդու: Նրանցից ավելի քան 200 հազարը, այսինքն՝ բնակչության մեկ քառորդը կազմում եցին բանվորներն իրենց ընտանիքներով: Պիտերի պրոլետարների մասին վաղիմիք իլլիչ Լենինը բազմիցս հիացմունքով և արտահայտվել, վորպես Խուսաստանի բանվոր դասակարգի ամենից լավագույն, առաջավոր, ամենից ավելի գիտակից ջոկատներից մեկի մասին: Պիտերի պրոլետարները յերեք չեյին յենթարկվում դատարկ ֆրազներին, բուրժուազիի կողմից վախեցնելուն:

Պետք է նկատի ունենալ, վոր 1919 թ. ամառը Պետրոգրադում կային բավական թվով պրոլետարական դիկտատուրային թշնամի տարբեր: 1917 թ. հոկտեմբերին ջախջախված բուրժուազիան նորից գլուխ եր բարձրացնում Յուլյենիչի հաջողությունների կապակցությամբ: Բուրժուազիայի մի մասը, վոր առաջուց փախել եր Պիտերից, այժմ վերադառնում և պատրաստվում եր միանալու սպիտակ գվարդիական ճակատի հետ: Սպիտակ գվարդիական գործակալներն ու ոտարերկրյա հետախույզները բնակչության մեջ տագնապալի, պրովոկացիոն լուրեր եյին տարածում, սերտ համաձայնությամբ աշխատելով ոտարերկրյա դեսպանությունների ու հյուպատոսությունների հետ:

Ընկեր Ստալինի ցուցումով ուժեղացվեցին պահպանության և հսկողության միջոցները, ինչպես ճակատամերձ շրջանում, այնպես և Պետրոգրադում: Շուտով Վ.Չե-ան հայտաբերեց լրտեսական և հակա-հեղափոխական կազմակերպության Պետրոգրադի բաժանմունքը, վորը կոչվում եր «ազգային կենտրոն»: Այդ կազմակերպությունը սերտորեն կապված եր Կոլչակի, Յուլյենիչի և Դենիկինի հետ:

Այդ սառը կազմակերպությունը հաջողվեց հայտաբերել հետեւյալ հանդամանքի ջնորհիվ: Լուղայի ուղղության վրա սպանվեց մի անհայտ մարդ, վորը փորձեց անցնել սպիտակների մոտ: Կարմիք բանակայինները մանրամասն խուզարկության յենթարկելով սպանվածին, նրա մոտ գտնված զիանակներից մեկի խողովակում գտան մի տոմս, վորը հասցեազրկած եր գեներալ Ռուձյանկոյին: Այդ տոմսում իմիջի այլոց գրված եր:

«...Զեղ հանձնված զորքերը Պետրոգրադի նահանգը մտնելիս

կարող են սխալներ լինել, և այն ժամանակ կտուժեն այն անձնավորությունները, վորոնք գաղտնաբար մեղ չափաղանց խոշոր ոգուտ են տալիս (այստեղ առաջին հերթին նկատի ելին առնված սպիտակ գվարդիական դավաճանները, վորոնք գտնվում եյին մեր զորքերի շարքերում: — Ք. կ. ): Այդպիսի սխալներից խուսափելու համար արդյոք հնարավոր չեք գտնում նշանաբան (պարոլ) մշակել: Առաջարկում ենք հետեւյալը. յիթի մեկը վորոնք ձևով կամ ֆրազով կասի այս խոսքերը՝ «ինչ գնով ուղղում ե լինի» և «Վիկ» բառը, և միենույն ժամանակ աջ ձևոք դիպյոնի աջ ականջին, նաև հայտնի կլինի մեզ...»

Կարմիք բանակայինները տոմսը ներկայացրին վերադասության կարգով: Մի քանի որից հետո Փինչանդական սահմանի վրա բռնկեցին յիրկու լրտես, վորոնք փորձում եյին անցնել սահմանը: Նրանց մոտ գտնվեցին Պետրոգրադի «ազգային կենտրոնի» ղեկավարների նամակները, սառը բարգավաճած «Վիկ» պայմանական նշանով:

Այդ դավագրության հանցագործ թերթի ծայրը հասավ մինչեւ Պետրոգրադի մի խոշոր կապիտալիստ Շտեյնինգերի բնակարանը: Խուսդարկության ժամանակ նրա մոտ գտնված նամակների բազդատումը և ձերբակալվածների ցուցմունքները հնարավորություն տվին հաստատելու, վոր Շտեյնինգերը յեղել և «ազգային կենտրոնի» Պետրոգրադի բաժանմունքի ղեկավարը և ճակատում կատարվող քայլքայիչ հանցավոր աշխատանքի վոգենչողներից մեկը:

«Ազգային կենտրոնի հանցագործ թերթը ձգիւ եյին դեպի Պետրոգրադում գտնված ոտարերկրյա գևսպանություններն ու հյուպատությունները և այդ սպիտակ լրտեսական կազմակերպությունը սերտորեն կագում եյին արտասահմանյան լրտեսության նշանավոր ներկայացուցիչներ Պոլ Դյուկսի, Կյուրցի և մյոււնիերի հետ: Ինչպես հետաքննությունը պարզեց, դավագանությունը մասնակցել են Շ-րդ բանակի շատարից, Բալթյան տորմիդից և Պետրոգրադի ամրացված ուսայոնի ամբողջ մի շարք աշխատողներ, այդ թվում նաև Պետրոգրադի ողպային պաշտպանության պետ Լիշինը, բանակի ավտորանսպորտի պետ Լիխտերմանը, հրետանու տեսուչ Լեբեդիկը, բանակային ուղղիու կայաններից մեկի պետը և ուրիշները: Դավադիրների մեջ աշքի ըսկ-նող դեր եր կատարել եներունի Պետրովկայան, վորի վորդին՝ Վիլեհ-Վալին թագնվել եր կուսակցական տոմսով և պատասխանատու աշխատանքի յեր սողոսկել Շ-րդ բանակի քաղրածնում:

Այդ դավագրության հայտաբերումը ակնառու կերպով ցուց ավեց, վոր լրտեսությունն ու դավագանությունը թափանցել են ամեն տեղ, վորտեղ բթացած ե յեղել աշալրջությունը, վորտեղ չի յեղել պատշաճ կարգավահություն, վորտեղ խախտվել են բոլեկիյան կուսակցության

և կառավարության ցուցումները, վորտեղ հանցագործ անհոգությունն ե թագավորել:

Գետրոգրադի Արտակարգ հանձնաժողովի հավաքած փաստական առատ նյութից յենելով՝ վճռական միջոցներ ձեռք առնվեցին Պետրոգրադը բոլորովին մաքրելու հականեղափոխական տարրերից։ Քաղաքի բուժութական թաղամասերը զլիսովին յենթարկվեցին խուզարկության։ Այդ խուզարկության հետևանքով ձերակալվեցին այն բոլոր անձնավորությունները, վորոնք հրազեն ունեյին առանց համապատասխան թույլտվության, և այն բոլոր անձնավորությունները, վորոնք յենթակա եյին կասկածանքի հականեղափոխության, լրտեսության և սպեկուլյացիայի մեջ։

Այդ խուզարկությունը նոր փաստական ամենահարուստ նյութ տվեց Պետրոգրադում հականեղափոխական կազմակերպությունները հայտաբերելու և նրանց կապը թշնամու հետ հաստատելու համար։ Թրանսիական, իտալական, հունական, շվեյցարական, հոլանդական, գանդիական և ուռմինական գեսապանություններում հայտարերվեցին գնդացրեր, հրացաններ և հրապաշարներ։ Ռումինական գեսապանության մեջ նույնիսկ թնդանոթ գտան։ Խուզարկության ժամանակ ընդամենը վերցվեց 6626 հրացան, 142 հազար փամփուշտ, 644 ատրճանակ, հաստոցավոր գնդացրեր, մեծ քանակությամբ նոնակներ, պիրոկսիլինի գլաններ պայմենական համար և այլն։

Մատնության և լրտեսության մեջ բռնվածները գնդականարվեցին, մնացած կասկածանքի յենթակա անձինք աքսորվեցին։

Յերկաթե հետեղականությամբ անցկացված ստալինյան միջոցառումներն ավելորդ անգամ ընդգծեցին ժողովրդի թշնամիներ, ներկայումս գնդականարված Զինովյեվի ու Յեգորիմովի՝ Պետրոգրադի կազմակերպության այն ժամանակվա ղեկավարների մնանկությունը վերահաս վտանգի դեմ պայքարելու գործում և նրանց դավաճանական դիրքավորումը։ Ստալինյան միջոցառումները միանգամից առողջացրին մատնություններով ու դավաճանություններով թունավորված Պետրոգրադը և կրիտիկական մոմենտին ամրապնդեցին Պիտերի պրոլետարիատի շարքերը ճակատում և թիկունքում՝ դասակարգային թշնամու դեմ վճռական պայքար մղելու համար։

Պետրոգրադի ճակատում լրտեսության, դիվերսիայի և դավաճանության դեմ մղած պայքարի փորձը լիովին հաստատում է ընկեր Ստալինի այն խոսքերը, վոր նա ասել և 1937 թ. բոլշևիկյան կուսակցության կենտրոնական կոմիտեյի Փետրվար-մարտյան պլենումում։

«Պատերազմի ժամանակ ճակատամարտը շահելու համար կարող ել ալահանչվել կարմիր բանակայինների միքանի կորպուս, իսկ նրա համար, վորակեսզի ճակատում այդ շահումը ձախողվի, դրա համար

բավական են միքանի լրտեսներ վորեւ տեղ բանակի շաբառում կամ նույնիսկ դիվիզիայի շաբառում, վորոնք կարող են գողանալ ոպերատիվ պլանը և հանձնել այն հակառակորդին։ Յերկաթուղային մեծ կամուրջ կառուցելու համար պահանջվում են հազարավոր մարդիկ։ Սակայն այդ կամուրջը պայմենական համար բավական և ընդամենը միքանի մարդ։»

1919 թ. Պետրոգրադի ճակատի դեպքերը ցույց տվին, վոր լայնորեն ճյուղավորված լրտեսական-դիվերսանտական թշնամական կազմակերպության լիկվիդացիան համարժեք եր խոշոր ճակատամարտ շահելուն։

### ԲՈԼՈՐԸ ԴԵՊԻ ՊԻՏԵՐԻ ՊԱՇՏՈԱՆՈՒԹՅՈՒՆ

Ընկեր Ստալինի առաջարկությամբ բոլցիկյան կուսակցության կենտրոնական կոմիտեն վորոշեց Պետրոգրադի ճակատը ճանաչել առաջինն իր կարեռությամբ։

Այդ վորոշման համապատասխան, կենտրոնական կոմիտեն նշեց և ուժերի բաշխումը, այսինքն, վորոշեց՝ Արևելյան ճակատից տեղափոխված դիվիզիաներից յերկու յերրորդը տալ Պիտերին, մեկ յերրորդը Հարավային ճակատին։

Պետրոգրադին ոգնելու համար Սիմբիրսկից ուղարկվեց 4-րդ հրաձգային դիվիզիայից 3 բրիգադ, Սամարայից՝ մեկ բրիգադ 2-րդ հրաձգային դիվիզիայից մեկ հրետանական դիվիզիոնի հետ միասին, Կոտենիչից՝ 3 բրիգադ 10-րդ հրաձգային դիվիզիայից, Կոստրոմայի, Ռիբինսկի, Իվանովո-Վոլոնեսենսկի և Տվերի դասընթացների կուրսանտներից կազմված ջոկատը, քողարկման դպրոցը, Մոսկվայից՝ մեկ մարտկոց և յերկու պահակային վաշտ, Կազանից՝ մեկ հեծչալ բրիգադ և միքանի այլ զորամասեր։

Հունիսի ամսի ընթացքում Պետրոգրադի ռազմական շրջանում մորիլացիայի յենթարկվեց 21.168 բանվոր, իսկ հունիսին՝ 11.929 բանվոր։

Կենտրոնական կոմիտեյի դիմումին ի պատասխան՝ Պիտերին մոտակա նահանգների կուսակցական կազմակերպությունների նաև նանգկումներն ուղարկեցին զգալի քանակությամբ կոմունիստներ համարման համար։ Ամրացան զորամասերի կուսակցական կազմակերպությունները՝ Կարմիր բանակայինների մեջ ծավալվեց կուսակցական—քաղաքական լայն աշխատանքը կարմիր Պետրոգրադի պահանության լողունզի կապակցությամբ։

Բոլշևիկյան ազիտացիայի հրավառ խոսքը, կուսակցականների և կոմիտեականների բարձր ակտիվությունն իրենց անմիջական պազեցությունն ունեցան մեր զորամասերի գրության վրա։ Նահանջի

պատճառով հուսալքված դնդերում սկսեցին վերականգնել կարգապահությունն ու ներքին կարգը: Տեղական միքամի կուսակցական կազմակերպություններ չբավականացան միայն կոմունիստներին ճակատուղարկելով: Պետրոգրադի նահանգի կուսակցական կազմակերպությունների, տեղական գործկոմների և արհմիությունների նախաձեռնությամբ սկսեցին կազմակերպվել կամավորական ամբողջ ջոկատները: Այդ ջոկատները, ճակատ գալուց հետո, մանում ելին այնտեղ գտնված զորամասերի կազմի մեջ կամ բանակային նոր կազմակերպված մասերի մեջ, և այնուեղ կազմում ելին ամուր կորիգ: Այսպես, որինակ, այդ ժամանակ Գատչինայում կազմակերպվեց 1-ին համահավաք հրաձգաշին գունդը, վորը համալրվել եր կալինինի, նովոլադոգայի, Շվաելուրուգի, Լուգայի և կուսակցական մյուս կազմակերպությունների կոմունիստներով: Այդպիսի շատ ջոկատներ ստացան ինքնուրույն նշանակում: Այդ ջոկատները մարտնչում ելին արագ վրա տվող թշնամու դեմ՝ Կարմիր բանակի գնդերի հետ կողք-կողքի և ցուցաբերեցին ինքնազոհության և քաջազործության անզուգական որինակներ:

Ընկեր Ստալինը միջոցներ ձեռք առավ կարգավորելու այն դորքերի ղեկավարությունը, վորոնք նահանջից հետո քառասույին զրության մեջ ելին գտնվում: Ֆիննական ծոցի հարավային ափի (բացի Կրամոգորոսկի ամրացված ռայոնից) և մինչև Գդովի զուգահեռը Պլյուսակետին հոսանքի միջև դասավորված զորամասերը մտան Նարվայի խմբավորման մեջ: Այս խմբավորման մեջ մտան Երգ հրաձգային դիվիզիան, Բալթյան դիվիզիայի զորամասերը, Լուգայի հրաձգային բրիգադը և մի շարք ուրիշ մանր զորամասեր: Նարվայի խմբավորման շտաբը գտնվում եր Գատչինայում:

Ընկեր Ստալինի հոգատարության շնորհիվ բարելավվեց զորքերի բոլոր անհրաժեշտ մատակարարումը և առաջին հերթին մարտամթերքներով: Այդ նպատակով սահմանվեց նոր պաշտոն—Նարվայի ճակատամասի թիկունքի պետի պաշտոնը: Այս միջոցառումը միանգամայն անհրաժեշտ եր, վորովհետեւ մեր զորքերի թիկունքում գործում ելին սպիտակ գվարդիական լրտեսներն ու դիվերսանտները, վորոնք մայթ, հունիս և հուլիս ամիսների ընթացքում կազմակերպեցին կուլակների և դասալիքների մոտավորապես 30 յելույթ: Այդ յելույթները սերտութեն կապված ելին ճակատի մարտական զործողությունների հետ և նրանց նպատակն եր ողնել սպիտակ գվարդիականությանը: Նրանք շուտով լիկվիդացիայի յենթարկվեցին թիկունքի կազմակերպվածության շնորհիվ:

Թիկունքի շտաբի խնդիրն եր՝ պահպանել հեղափոխական կարգը թիկունքում, հայտարերել դասալիքներին, Պետրոգրադի պաշտպանության կոմիտեյի ուղարկած համալրումներից գնդեր կազմել թիկունք-

թահպանության համար: Հետագայում ստալինյան այդ միջոցառման փորձը հաջողությամբ կիրավեց նաև մյուս ճակատներում:

\* \*

Քաղաքի կուսակցական կազմակերպությունները, արհմիությունները և Պետրոգրադում կազմակերպված ներքին պաշտպանության շտաբը, անձամբ ընկեր Ստալինի ցուցումներով, յեռանդուն պատրաստություններ տեսան Պրեերը պաշտպանելու համար:

Պետրոգրադի Խորհուրդը, արհմիությունների խորհուրդը և բանվորուհիների համարագաքային կոնֆերանսը մի դիմում ընդունեց, ուղղված աշխատավորներին, վորի մեջ ասված եր.

«Մի նոր կորնիլով և շարժվում մեր կարմիր Պետերբուրգի վրաց Յարական յերկու գեներալներ—Յուդենիչն ու Ռոծյանկոն, ցարական գնդապետ Բալախովիչի հետ միասին, կապիտալիստներից կաշառված, հավաքել են միքանի հազար սպիտակ գվարդիական սպաների և Պետերբուրգի վրա լին գալիս, վորպեսզի թալանեն այն, կոտորեն բանվորներին ու բանվորուհիներին, կարմիր բանակայիններին ու նավաստիներին: Դրան կարող ե միայն մի պատասխան լինել, նույնպիսի պատասխան, ինչպիսի պատասխան իր ժամանակին մենք տվինք կորնիլովին:»

Մորիլիզացիայի յեն յենթարկվում բոլոր բանվորները, մորիլիզացիայի յեն յենթարկվում ամենապատասխանատու աշխատողները: Միքանի որով հետաձգվում ե ընթացիկ աշխատանքը, մինչև վոր մենք կը ենքներ նորաբուս կորնիլովականներին: Սպառազինվում են բոլոր բանվորները:

Զերբակալել դասալիքներին, արհամարհել յերկշուներին: Վոչընչացնել բոլոր նրանց, ովքեր կհամարձակեն խանգարել քաղաքի հանգիստը:

Պետերբուրգը պաշտպանող կարմիր բանակայինները չեն համարձակվի նահանջել: Ամբողջ Խորհրդային Ռուսաստանն ե գալիս մեզ ոգնության: Պետք ե մի անգամ ընդմիշտ վերջ տալ սպիտակ բանդաներին, վորոնք թրեռում են Պետերբուրգի շրջակայքում: Պետք ե կոտրել Փիննական ու եստոնական սպիտակ գվարդիականների ձըգտումները՝ Պետերբուրգի դեմ վոտնձգություն անելու:

Կարմիր Պետերբուրգը հանգիստ ու վստահորեն հայտարարում ե,

«Պետերբուրգը կպաշտպանի իրեն և կլրատի նրա վրա հարձակվող բոլոր լպիրշներին»:

Ամբողջ քաղաքում, բոլշևիկյան կուսակցության ուայոնական կոմիտեներում, զործարաններում ու Փաքրիկաններում կազմակերպ-

վեցին կոմունիստական վաշտեր ու գասակներ, վորոնցից կազմվեց Պետրոգրադի կոմունիստական գումարտակը։ Այդ գումարտակում նշանակված կուսակցության բոլոր անդամները պարտավոր ելին ռազմական ուսուցումն անցնել առանց կարգելու իրենց ծառայության պարտականությունները կատարելուց։

Մարտիկները կուսակցական կոմիտեների որապահությունն ու պահպանությունն եյին կատարում, կատարում ելին ներքին պաշտպանության շտաբի, կուսակցական որդանների և Արտակարգ Հանձնաժողովի որդանների հանձնարարությունները:

Ընկեր Ստալինի ղեկավարությամբ կազմակերպվեց քաղաքի ներքին պաշտպանությունը, Ներքին պաշտպանության շտաբը մշակեց մի պլան, վորով նախատեսվում եր Պետրոգրադի բոլոր մարտական առկա ուժերի ու միջոցների տակտիկապես նպատակահարմար բաշխումը:


Ամբողջ քաղաքը բաժանված եր չորս մարտական ճակատամասի, ինչպես այդ ցույց ե տրված 7-րդ սկսեմայում:

Ն 1 ճակատամասն ուներ պաշտպանողական յերեք գիծ և պաշտպանում եր Պետրոգրադը հյուսիսից, վիճանդական սահմանի կողմից ճակատամասի պաշտպանության համար նշանակված եր 2 գումարատակ՝ գաշտային հրետանու յերկու հրանոթով։ Ն 1 ճակատամասի հետ սերտ համագործակցության մեջ եր Ն 2 մարտական ճակատամասը պաշտպանողական յերկու գծով, Այդ ճակատամասի խնդիրն եր—արգելք հանդիսանալ հակառակորդի հնարավոր փորձերի՝ ծովի կողմից դեսանտ ափ հանելու, իսկ մյուս կողմից՝ պահպանել Ն 3 ճակատամասի թիկունքը «հնարավոր հարձակումներից, ինչպես հականեղափական տարրերից, նույնպես և հակառակորդից»։ Ն 2 ճակատամասի ուժերն եյին՝ 2½ գումարտակ յերկու հրանոթով և տասներկու գնդացրով։ Ն 3 ճակատամասի վրա խնդիր եր դրվում՝ արգելակել թշնամու դեսանտային գործողությունները ծովի կողմից։ Յամաքային հակառակորդի դեմ մղած կոփներում նա պետք ե սերտ տակտիկական համագործակցության մեջ լիներ Ն 4 ճակատամասի հետ ճակատամասի ուժերն եյին՝ 7 գումարտակ և դաշտային 5 թնդանոթ։ Վերջապես, Ն 4 ճակատամասը, վորի ուժերն ելին կազմում 5 գումարտակ, 4 հրանոթ և 36 գնդացրիր, այս ճակատամասը պետք ե պաշտպաներ քաղաքը հարավից և հարավ-արևելքից։ Նրան պետք ե աջակցեր ականակիր «Սամսոնը», վոր կանգնած եր Նեալի նավաշինական գործարանի մոտ։

Պարետային աելոդը ուժում անընդհատ որապահություն ելին առնում սավառնակները:

Հյուսիսից անմիջապես Պետրոգրադին կից ռայոնը հայտարարված

Եր կարելյան մարտական ճակատամասի թիկունք։ Այդ կողմից քաղաքի մարտական ճակատամասերին մոտենալուն արգելվ եյին հանդիսանում ուժեղ խափանման ջոկատները, վորոնց կազմի մեջ եյին մտնում 1-ին (Ստարայա և Նովայա գյուղերը), 2-րդ (Սոսնովկա և Գրաֆդանկա) և 3-րդ (Բոլշայա և Մալայա Ոխտա) կոմունիստական առանձին գումարտակները։



Ախեմա 7. Գետը դրադի ներքին պաշտպանության պյանը 1919 թ. ամբանու

Միաժամանակ 17—45 տարեկան բոլոր բանվորների մորիլիզացիա հայտարարվեց։ Զորակոչվածները համալրում եյին Պետրոգրադի Խորհրդի բանվորական գնդերը։ Գնդերի գասակներն ու վաշտերը կազմակերպվում եյին այն հաշվով, վոր նրանց կազմի մեջ մտնեն միևնույն

արհեստանոցի կամ ցեխի քանվորները։ Այս միջոցառման հետևանքով ուժեղ կերպով բարձրացավ Պիտերի պրոլետարների կազմակերպվածութունը թշնամու գեմ մղած պայքարում։ Գնդերի կազմի մեջ եյին նշանակվում միայն այն մարդիկ, վորոնք հճախոնի եյին վորպես ազնիվ և հուսալի մարդիկ, վորոնք ընդունում եյին խորհրդային իշխանության պլատֆորմը։ Առ 18-ը հունիսի պիտանի ճանաչվեց և գնդերը նշանակվեց 12,906 մարդ։

Պաշտպանողական գծերում ամրություններ կառուցելու համար հարկադրական կարգով մորիլիզացիայի յևնթարկվեց մոտ 10,000 մարդ բնակչության անաշխատ տարրերից։

Այս բոլոր միջոցառումների շնորհիվ քաղաքն ապրում եր մարտական լարված կյանքով։ Մինչև ուշ գիշեր հրապարակներում ուղղմական ուսուցում եր անցկացվում կոմունիստական գումարտակների և Պետրովրադի Խորհրդի բանվորական գնդերի հոտ։ Որ ու գիշեր չեր դադարում աշխատանքը ՌկԿ(ը) ուայոնական կոմիտեներում և Աշխատանքի պալատում, վորտեղ տեղափորձած եր արհմիությունների մարզային խորհուրդը։ Քաղաքի ներքին պաշտպանության սույնական շտաբները ղեկավարում եին ամրություններ կառուցելու աշխատանքը։ Փողոցներով շարունակ անցնում եյին թարմ զորական մասերը, վորոնք գալիս եյին Պետրովրադը պաշտպանելու և ճակատ ուղարկվող համարումները։

Հանճարեղ առաջնորդ ընկեր Ստալինի ղեկավարությամբ՝ ահա այսպես եյին պատրաստվում բանվորական Պիտերի ճակատն ու թիւ կունքը թշնամուն վճռական հականարված տալու և ջախջախելու համար։

### ԽԾՈՎՈՒԹՅԱՆ ԼԻԿՎԻԴԱՑԻԱՆ «ԿՐԱՍՆԱՅԱ ԳՈՐԿԱՅՈՒՄ»

Այնինչ, սպիտակների սկզբնական հաջողությունները ճակատում ու մեր միքանի ստորաբաժանումների թշնամու կողմ անցնելն ու մատնության դեպքերը գլխավտույտի բերին սպիտակ հրամանատարությանը։ Յուղենիչն ու Ռոճյանկոն ձեռնամուխ յեղան սպիտակ կորպուսի վերակազմությանը՝ ստեղծելով նրանից Հյուսիս-արևմայան բանակ։

Գնդապետ Պալենի ջոկատը վերանվանվեց 1-ին կորպուս։ Արակազմի մեջ ելին մտնում, յուրաքանչյուրը չորսական գնդերից բաղկացած, 2-րդ և 3-րդ գիվիդիաները և հեծյալ յեգերական գունդը։ 2-րդ գիվիդիան կազմված եր թալարյան, Սեմյոնովյան, Ռոտորվան և Ռերյան գնդերից։ 3-րդ գիվիդիան կազմված եր Վալթյան, Բեկվելյան, Բալթյան և «Կրասնայա Գորկայի» գնդերից։ Կազմակերպել «Կրասնայա Գորկայի»

մեր կայագորի կազմից, վորտեղ դավաճանները խռովություն եյին պատրաստել և ուղում եյին անցնել սպիտակների կողմը։ 2-րդ կորպուսի կազմի մեջ եյին մտնում 1-ին գիվիդիան, վորը կազմված եր Գիորգելյան, Կոլիվանյան և Գիովլիցի գնդերից և Բալախովիչի ջոկատը, վորը նույնպես յենթագրվում եր գիվիդիայի վերածել։

Սպիտակները Պետրոգրադի համար մղած պայքարում նշում եյին տիրել կրօնշտագար անգլիական նավատորմի աջակցությամբ։ իսկ մինչ այդ նրանք պատրաստվում եյին հականեղափոխական խռովությունը բարձրացնել «Կրասնայա Գորկա», «Սերայա Լոշադ», «Արբուչե» ամրոցներում։

«Կրասնայա Գորկա» ամրոցում խռովություն բարձրացրեց ամրոցի պարեստ, ցարական ծառայության նախկին պորտչիկ նեկլյուգովը, վորն իր շուրջն եր համախմբել նախկին սպաներից մի խռովը։ Նեկլյուգովը, խռովություն նախապատրաստելով, գործում եր «ազգային կենտրոնի» ուղղակի ցուցումներով, իսկ վերջինս իր հերթին կատարում եր անգլիական լրտես Պոլ Դյուկսի առաջադրանքները։ Դավադիրները ձգտում եյին ապատամբեցնել «Կրասնայա Գորկայի» կայազրի մարտիկների անգիտակից մասին, ընդգեմ կոմիսարների և կոմունիստների։ Այդ նպատակին համար գավաճանները դիմեցին ղեմագորիկ հանցագործ պրիոնների։ Այսպես, որինակ, նեկլյուգովը թույլ եր տալիս, վոր ամրոցում խախտվեն պահակային և ներքին ծառայության կանոնագրքային կանոնները։ Այդ բացահայտորեն թույացնում եր կարգապահներունը կայազրում։ Յերբ կոմունիստները դեմ գուրս յեկան այդ քայլքայիչ գործողություններին, նեկլյուգովն ու նրա արբանյակներն սկսեցին մեղադրել կոմունիստներին, վոր, իբր թե, նրանք ճնշում են գործ դնում և «կողմնակից են» հին ռեժիմին։ Այդ կազմալուծիչ տակտիկան գրգռում եր կարմիր բանակայինների ամենից ավելի հետախաց տարրերին կոմունիստների և խորհրդային իշխանության գեմ։ Մարտիկների վրա ել ավելի մեծ ազգեցություն ունենալու համար, վորոնց մեծ մասը մորիլիզացիայի յեր յենթարկված շրջակա գյուղերից, նեկլյուգովը, պրովոկացիայի յենթարկելով նրանց անբավականությունը, պարբերաբար հրետակոծության եր յենթարկում այդ գյուղերը, հենվելով, իբր թե, իբրեն տրված հրամանի վրա։ Նման պրիոններով գավաճաններին հաջողվեց իրենց կողմը գրավել խարված մարտիկներին։ Այդ խարվածների մեջ եյին ամրոցի գնդացրային խմբի կարմիր բանակայինները և 12 դյույմի մարտիկոցի հրետավորները։

Այս ամենը կատարվում եր «Կրասնայա Գորկայի» կայագորի կուսակցական կազմակերպության ղեկավարների աչքի առաջ, վորոնք ցուցաբերեցին հեղափոխական զգոնության լիակատար բացակայություն և հանցագործ անհոգություն։ Այդ տեսակետից ցուցաբերելի յե-

Պետրոգրադի պաշտպանության կոմիտեյին ներկայացրած Կրոնշտադտի ծովային բազայի կոմիսարի գեկույցը: Այդ գեկույցը բազայի կոմիսարը կազմեց Կրոնշտադտի բերդի ամրոցների հետազոտման հիման վրա, կատարված ընկեր Ստալինի ցուցումով, ընկեր Ստալինի Պետրոգրադի ճակատ ժամանելու հենց առաջին որերին: Այդ գեկույցում տրված ե «Կրասնայա Գորկա» ամրոցի գրության բնութագիրը և ասված ե բառացիորեն հետևյալը:

«Թե՛ հրամանատարական կազմի և թե՛ խմբի տրամադրությունը միանգամայն բավարար ե: Բերդը կարող ե հույս գնել ամրոցի վրա, վորպես միանգամայն հուսալիք հենարանի վրա... Վոչ մի տեղ չնկատվեցին դաշտանության մեջ կասկածանը հարուցող նշաններ»:

Այնինչ թշնամին մոտենում եր, Ամրոցի առաջավոր մատուցումները պաշտպանող Կրոնշտադտի 1-ին և 2-րդ գնդերը և 105-րդ հրաձգությին գունդը, իրենց գլուխն անցած նախկին սպաներից խարված, առանց մարտ մղելու անցան սպիտակների կողմը: Հունիսի 12-ին հակառակորդն արդեն հայտնվեց ամրոցից 7 կիլոմետրի վրա:

Այդ մատնություններն ու ամրոցի քաղաքական կազմի հեղափոխական զգոնության բացակայությունը հնարավորություն տվին դաշտաններին հունիսի 13-ի գիշերը ձերբակալելու ամրոցում գտնված բոլոր կոմունիստներին, մոտ 200 հոգու, և խարեւայությամբ գինաթափ անելու Կրոնշտադտից նոր յեկած կոմունիստական ջոկատին: Բոլոր ձերբակալվածները, ընդհանուր թվով՝ մինչեւ 375 հոգի, բանտարկվեցին բետոնե կաղեմատներում:

Դաշտաններն անմիջապես ռադիոդիր ուղարկեցին սպիտակ հրամանատարությանը, վոր ամրոցը պատրաստ ե նրա հրամանները կատարելու: Այնուհետև Նեկլյուզովը դիմեց մյուս ամրոցներին՝ միանալու խորվությանը: Հականեղափոխական տարրերը կրոնշտադտում և ամրոցներում սկսեցին ծավալել տենդային գործունելություն, սերմանելով խառնակություն և խուճապ: Հունիսի 13-ի ցերեկը խռովությունն իր արձագանքը գտավ նաև «Որբուչն» և «Սերայա լոշադ» ամրոցներում, իսկ նույն որը մոտ ժամի 15-ին Նեկլյուզովը հեռախոսով դիմեց Կրոնշտադտին՝ անձնատուր լինելու ուլտիմատումով, հակառակ դեպքում սպառնում էր հրետակոծել Կրոնշտադտը ծանր հրանոթներով: Վորովինետև պատասխան չստացվեց, ամրոցի 12 դյույմանոց մարտկոցը կրակ բաց արեց քաղաքի վրա: Ի պատասխան խռովարանների կողմից սկսած հրետանական կրակի, Բալթյան նավատարրմի «Պետրոպավլովսկ» և «Անդրեյ Գերլոզվաննի» նավերը, վորոնք կանգնած եյին նավահանգըտում, սկսեցին հրետակոծել Կրասնայա Գորկան: Սակայն այդ հրետակոծական կրակը բազայի պետը և ծովային մյուս «մասնակտուները», վորոնք, ինչպես հետո պարզվեց, խռովարանների կողմեցին և նախորոք համաձայնության եյին յեկել խռովարարների հետ,

Նավերի ծով գուբու գալուն գեմ արտահայտվեցին, համարելով այդ ռաննպատակահարմարը, վորը հակասում և ծովային տակտիկային: Կրոնշտադտի բնակչության մեջ խուճապ սկսվեց:

Շփոթության մեջ ընկան նաև ամրոցի շատ զինվորական աշխատավոներ:

Դրությունը փրկեց ընկեր Ստալինի յեռանդուն միջամտությունը: Նա ինքը ճակատ գնաց և ղեկավարեց խռովարար ամրոցի գեմ կատարվող գործողությունները: Ամենից առաջ նա փոխեց ծովային մասնագետների կարգադրությունը նավեր ծով գուբու չըերելու մասին:


«Պետրոպավլովսկ» և «Անդրեյ Գերլոզվաննի» գծանավերը ծով դուրս յեկան ամրոցին մոտիկ: Հունիսի 14-ին նրանց միացան «Ուեգ» հածանավը և սկսագրային ականակիրները: Ամրոցն սկսեցին հրետակոծել ուղղակի ճակատից: Այդ հրետակոծությունը խռովարարներին զգալի կորուսուներ հասցրեց: Ընդամենը ամրոցի վրա արձակվեց 12 դյույմանոց յոթհարյուր յերեսունությամբ արկ «Պետրոպավլովսկ» և «Անդրեյ Գերլոզվաննի» գծանավերից, 130 միլիմետրանոց յոթհարյուր հիսունարկ՝ «Ուեգ» հածանավից և 100 միլիմետրանոց հարյուր քառասունին արկ եսկադրային ականակիրներից:

Ամրոցում կալանավորված կոմունիստները հետագայում պատմում եյին: «Ծովից կրակը քանի գնում ուժեղանում եր, Նեկլյուզովը պատասխանում եր ավելի ու ավելի թույլ Ամրոցում ավելի ու ավելի հածախ եյին պայմում արկերը: Սպիտակ գվարդիականները ջղայնանում եյին: Նեկլյուզովը պատրաստվում եր փախչելու: Կալանավորներին կամ գնդականարություն եր սպասում կամ կործանում ամրոցի հետ միասին, վորը սպիտակները մտադիր ելին պայմենակին: Կալանավորները, վճռելով, վոր հասել ե ժամանակը, նրանք սկսեցին ձիգերի ու պայմունների դրդոցի տակ քանդել պատուհանների մեջ ամրացված սելսերը: Յեւլյան ազատ եր, մուռ եր միայն խաբել պահակին: Առաջին ընկերը, վոր դուրս թավալ պատուհանից, շփոթվեց և նկատվեց ժամապահի կողմից: Առաջին անհաջողությունը տեսնելով և գտնելով, վոր գործը տանուլ չի տրված, թառվ մյուս ընկերը, վորը մոտ վազեց ժամապահին և բղավեց: «Կյանքդ փրկիր, ամրոցը պայմենական են»: Դրանից հետո նա վազեց հողաթմբի վրա և նույնը հայտնեց նաև խրամատներում գտնվածներին:

Պահակն ու խրամատներում գտնվածները սկսեցին փախչել իրենց կյանքը փրկելու համար, Կալանավորներն ոդտվեցին այդ մոմենտից, և մոտ հիսուն ընկեր փախչելով ազատվեցին»:

Մի քանի հազար մարդուց բաղկացած ամրոցի կայազորը, ոմբակոծման ազգեցության տակ սկսեց այս ու այն կողմ փախչել: Արդեն հունիսի 15-ի առավոտից մի քանի խմբեր յեկան Որանիենբաում,


Աղորտեղ այդ ժամանակ ավարտվում եր Առաջինյա խմբավորման կազմակերպումը, վորը նշանակված եր խռովությունը ցամաքից ճնշ-չելու համար Առաջինյա խմբավորման սեղեցին մանում նաև աստիճաների 1-ին եքսպեդիցիոն ջոկատը՝ 500 մարդու կազմով, նա-



«Անդրեյ» Պերվոզգաններ» գծանալը հրետակոծում և «Կրասնայա Ֆորկայի» խոսքաբառերին:

վաստիների 2-րդ եքսպերիմենտ ջոկատը՝ 800 մարդու կազմով, Պետքող բարձրագույն աշխատիների ջոկատը մեկ դրահապատով և մեկ դրահանարթակով:

Հունիսի 15-ի մոտ կեսորին Առավինյա խմբավորման գորամասերն անցան հարձակման։ 1-ին ջոկատը, զրավելով Լանզելովոն և Մալ. Կոնովալովոն, գրոհի գնաց Տեմենգոնտը զրաված հակառակորդի վրա։ Այդ ժամանակ Պետրոգրադի բազայի նավաստիների ջոկատը, ծովից տջակցություն ստանալով «Գալուստյան» ականակիրից, սկսեց հարձակվել «Կրասնայա Գորկայի» վրա։ «Ողը թնդում եր արկերի գորգոցից ու շտաչից, —պատմում եյին հետո այդ հարձակման մասնակիցները՝ Մեր ջոկատը հարձակվում եր Բոլ. Բորկիի վրա։ Գետինը դըրդում եր արկերի պայմանական երից, վորոնք ողն եյին բարձրացնում ծառերն ու զեսուգեն շպրտում հողն ու խճերը յերկաթուղու գծից տասնյակ սաժեն հեռու։ Առջեից ընթանում եր զրահագնացքը, վոր կրակում եր հակառակորդի ամբացված դիրքերի վրա։ Մի քանի ժամ տեղող հրացանային, գնդացրային և հրետանական մարտից հետո և նավաստիների շտուրմային շեշտակի հարձակումից հետո, հակառակորդը գուրս քշվեց ամբացված դիրքերից և ստիպված յեղավ հեռանալ Բոլ. Բորկիից



Ստեմա 8. Խոսունիթյան ճշշգումը չկրասնոյա քորիա ամրոցուն:

թողնելով այնտեղ յերկու սայլ անդիմական մահուրե հանդերձանք և մի քանի տասնյակ գնդացիր»:

Հնկեր Ստալինը, դանվելով կրակի զոնայում, անձամբ դեկավարում եր թե Առաջնա խմբավորման այդ հարձակումը և թե ծովի կողմից խռովարար ամրոցի ոմբակոծումը:

Նավաստիների շեշտակի հարձակման տակ խռովարարները նաև հանջում եյին ամբողջ ճակատով: Հաճախակի դարձավ հակառակորդի պինվորների փախուսալ մեր կողմը: Հունիսի 15-ի ուշ յերեկոյան խռովարարների ջոկատը, Նեկլյուդովի գլխավորությամբ, հեռացավ ամրոցից՝ իր հետ վերցնելով վորպես պատանդներ ձերբակալված կոմունիստներին և խորհրդային իշխանությանը բոլոր համակրողներին:

Խրուտ ճահճների միջով ձգված անտառային ճանապարհներով խռովարարները, իրենց միացած ինդերմանանդիների հետ միասին հեռացան Կալիչեյի ուղղությամբ: Ամեն մի կանգառման ժամանակ այս կամ այն գյուղում նրանք տասնյակներով գնդականարում եյին ձերբակալվածներին: Գնդականարվածների մեջ կային և նրանց կանայք, վորոնք ճաշ եյին բերել իրենց ամուսինների համար: Զոհվածների մեջ եր կրոնշտագույնի Խորհրդի նախագահ Մ. Մ. Մարտինովը, վորը կրոնշտագույնից ճակատ եր յեկել կոմունիստական այն ջոկատի հետ, վորին շեկլյուդով գերի վերցրեց խարերայական միջոցով:

Կալիչե, Կովաշի և մյուս գյուղում մինչև որս ել պահպանվել են զոհված ընկերների գերեզմանները: Սպիտակ զվարդիականները ձերբակալվածների վերջին խմբին գնդականարեցին գնդացրով կերնովոյի մատ, անտառի յեղին: Մեր հարձակուղ զորամասերն այստեղ գտան խոշտանգված դիմումների ամբողջ կույտեր:

Հունիսի 16-ին, գիշերվաժամի 12 անց 30 րոպեյին «Կրասնայա Գորկա» ամրոցը գրավիցին Առաջնա խմբարման զորամասերը: Այդ ոույն ժամանակ ամրոցին մոտեցավ մեր զրահագնացքը: «Մերայա լոշադ» և «Ուրուչե» ամրոցները դեռևս ավելի շուտ զղացին իրենց մեղքը: Նահանջի ժամանակ սպիտակ զվարդիականները

Խորձեցին վոչնչացնել ամրոցի ամբողջ հրետանին, բայց նրանց հաջողվեց փչացնել միայն 5 հրանոթ:



Գորձեցին վոչնչացնել ամրոցի ամբողջ հրետանին, բայց նրանց հաջողվեց փչացնել միայն 5 հրանոթ:

«Կրասնայա Գորկա» ամրոցը վերցնելուց հետո ընկեր Ստալինը գրում եր լենինին:

«Ծովային մասնագետները հավատացնում են, վոր «Կրասնայա Գորկայի» գրավումը ծովից՝ գլխիվայր ե բերում ամբողջ ծովային գիտությունը: Ինձ մնում ե միայն վողբալ այդպես կոչված գիտությունը: «Գորկայի» արագ գրավումը բացատրվում ե իմ և ընդհանրապես վոչ զինվորականների կողմից ոպերատիվ գործերին ամենակոպիտ կերպով միջամտելով, վոր հասնում եր մինչև ծովի ու ցամաքի ուժերին տրված հրամանները փոխելուն և մեր սեփական հրամաններն ընդունել տալուն: Իմ պարտքն եմ համարում հայտնել, վոր յես այսուհետեւ նույնական պետք ե գործեմ այդ ձեռվ, չեայած գիտության նկատմամբ իմ ունեցած ակնածությանը»:

#### ԿԱՐՄԻՐ ՆԱՎԱՏԻՒՆԵՐԻ ՀԵՐՈՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Մեր զորքերն այնուհետև դուրս յեկան Կովաշի գետի, Կալիչե և Լոմոնսովով գծի վրա: Պետրոգրադից յեկած պետրոգրադյան բազայի նավաստիների ջոկատը և կրոնշտագույնից 97-րդ հրաձգային գունդը հարձակումը շարունակեցին Ուստ-Մուլդիցիի վրա (սխեմա 8):

«Հարկ յեղավ հարձակվել գիշերը դժվարին պայմաններում՝ ճահճներով, յերբ տեղ-տեղ ընթանում եյինք մինչև գոտիներս ջրի միջով,՝ պատմում են մասնակիցները, — նավաստիների յերկրորդ վաշտը հարձակվում եր Ուստ-Մուլդիցիի վրա գիշերը: Երա հրամանատարն եր ջոկատի պետի ոգնական ի. Լեաչելը: Գյուղին մոտեցանք լուսագեմին: Վաշտը պառկեց գետնին. առաջ շարժվեց յերեք հոգուց բաղկացած հետախուզություն: Ճահճի կողմից անտառը ձգվում եր մինչև գյուղի բանջարանոցները: Հետախուզությունը մտավ բանջարանոցները և, վոչ վոքի չտեսնելով, սկսեց զգուշությամբ մոտենալ խրճիթներին: Հանկարծ կալերից մեկի մոտ հայտնվեց մարդկանց մի խումբ: Հետախուզությունը հազիվ կարողացան թագներ լիրամում, վորը տանում եր ուղիղ գետի անտառը. սպիտակները կրակ բաց արին և առաջ շարժվեցին: Սակայն սպիտակները գետնին պառկեցին, կորցնելով մեկ սպանված և մեկ վիրավոր հետախույզների կրակից: Սկսվեց անկարգ հրաձգություն: Նավաստիները, կրակելով լիրամի միջով, սողալով անցան դեպի անտառը: Յեղ ահա հետախույզներից մեկին ծանր վիրավորեցին: Նա այլևս հեռու սողալ չեր կարող: Հետախույզներից մեկը սկսեց կապել վիրավոր ընկերող վերքը, իսկ մյուսը կրակելով պաշտպանվել մոտեցող սպիտակներից: Վիրավոր ընկերը տեսնելով, վոր քիչ պամփուշտներ են մնացել, խնդրեց ընկերներին գնդականարել իրեն

իսկ իրենք հեռանան: «Կմեննենք բոլորս միասին և չենք թողնի մեր յեղորը», —պատասխանեցին նրանք:

Ամենալրիտիկական մոմենտին, յերբ մեացել եր միայն մի պահունակ փամփուշտ և ատրճանակը լցրած վեց փամփուշտով, լսվեց միահամուռ «ուռայի» ձայն: Այդ շրջ վաշտն եր՝ առաջից վազող ընկեր էնվաչի հետ, վոր ներխուժեց գյուղը: Սպիտակները կարճատե դիմադրությունից հետո փախան, թողնելով մեկ հրանոթ և յերթային խոհանոցներ: Մարտի ժամանակ սպանվեց ընկեր լեաչնը:

Այդ հարվածից հետո սպիտակները կանգ առան վյարեպելեռում: սակայն նավաստիները վոգեռված Ռւստ-Ռուգիի մոտ տարած հաղթությամբ և վոգեշնչված ներխուժած թշնամուն Պետրոգրադից դուրս քշելու և ջախջախելու ցանկությամբ, կործանեցին սպիտակներին իրենց շեշտակի հարվածով»:

Սպիտակները նահանջում ելին ամբողջ ճակատով:

Բալթիական նավատորմը համառ մարտ մղեց ինտերվենտների դեմ վոչ միայն ցամաքում, այլև ծովում պահպանելով Պիտերին մոտիկ ջրային մատուցյները: Հունիսի յերկրորդ կեսից սկսած թշնամուն սպիտակները համարյա ամեն որ թոփշքներ ելին կատարում կրոնշտագտի վրա: «Գավրիիլ» և «Ազարտ» ականակիրները գրոհի յենթարկեցին անգիտական «55» ոռոգանավից, բայց վերջինս խորտակվեց նրանց կողմից: Հունիսի 18-ի գիշերը անգիտական կատերը, անցնելով մեր պահպան նավերի միջով, աննկատելի մոտեցավ «Ռլեդ» հածանավին և նրա վրա տորպեդ արձակեց: Հածանավը խորտակվեց:

Հարկ լեղավ ամբողջ ժամանակ պատրաստ լինել. ամենափոքը անփությունն անգամ աղետ եր սպառնում:

Յամբուրզը մեր զորամասերից զրավելուց հետո՝ հակառակորդն առանձնահասառուկ համառություն ցուցաբերեց նրոնշտագտի նավահանգստում կանգնած մեր նավատորմը խորտակելու փորձերի մեջ: Սկսվեցին մութ գիշերներ: Բատ յերկույթին, թշնամին վորոշեց հոնց զրանից ել ոգտվել: Ոգոստոսի 18-ին, մոտ ժամի 3 անց 45 րոպեյին՝ ողում լսվեց պրոպելլերների աղմուկը: Նավերին տրվեց տագնապի աղդանշան: Շուտով լսվեց այն ոռումբերի պայթյունների խուլ հարվածների ձախնը, վոր նետում եր հակառակորդը: Նավերի անձնակաղմերը և ամբակարոցների հրանոթային համարների մեջ Անկարին մութ գիշերներ: Այդ ժամանակ սավառնակներից բացվեց գնդացրալին կրակ լուսատու գնդակներով: Բազմաթիվ լուսավոր աղմուկներ ակուստ ելին յերկինքը հրթիռների նման: Հանկարծ լսվեցին հրետանական ձիգերի ձայներ «Գավրիիլ» պահապան ականակրի վրայից: Այդ տեղի ունեցավ ժամի 4-ն անց 20 րոպեյին: Պարզվեց, վոր «Գավրիիլ» կրակում եր թշնամու յերկու կատերների վրա: «Գավրիիլ» ականակիրը

ջրասույզ անելով նրանցից մեկը, սկսեց կրակ բանալ և յերկու կատերների վրա, վորոնք փորձում ելին դուրս գալ նավահանգստից: Համարյա միաժամանակ լսվեցին տորպեդների պայթյունի ձայներ: Ռողակի մյուս նավերի նավաստիների աշքի առաջ թեքվում ու արագ ջրասույզ յեղավ «Պամլատ Ազովա» վարժական նավը: Ճեղքվածք ստացավ նաև «Անդրեյ Պերվոզվանին» գծային նավը: Հարձակմանը մասնակցող անդիւդական յոթ կատերներից խորտակվեց յերեքը: Մարտից հետո «Գավրիիլը» գերի վեցըրեց ջրի վրայից 9 անգլիացի, վորոնցից յերեքը սպա ելին:

Բալթյան նավաստորմի քաջարի նավաստիների գործողությունները բարձր գնահատականի արժանացան ընկեր Ստալինի կողմից:

«Զի կարելի չվողջունել, ասում եր նա, վոր Բալթյան նավատորմը, վորը կործանված: Եր համարվում է ամենաիրական կերպով: Այս բանը խոստովանում են վոչ միայն բարեկամները, այլև հակառակորդները: Նույնքան ուրախալի յե և այն, վոր սուսական սպայության խոցը—նրա ծախվածությունը—ամենից քիչ և վնասել նավատորմի հրամանատարական կաղմին: այնպես վոր գտնվեցին մարդիկ, վորոնք ի պատիվ իրենց, ավելի բարձր գնահատացին նուստանի արժանապատվությունն ու անկախությունը, քան անզիւական վոսկին: Ել ավելի միիթարական և այն, վոր Բալթյան նավատորմի նավաստիները կրկին գտան իրար և իրենց սիրազործություններով վերակենդանացրին ուստական հեղափոխական նավատորմի լավագույն տրագիցիաները: Առանց այդ պայմանների Պետրոգրադը պահպանված չեր լինի ամենավտանգավոր անակնկալներից՝ ծովի կողմից»:

Կարմիր Պիտերի համար մղած նավաստիների հերոսական պայքարը պայմանական արտացոլված և «Մենք կրոնշտագից ենք» և «Բալթիկիցներ» հիանալի կինոնկարներում:

### ԴԵՊԻ ՀԱՐՁԱԿՈՒՄ ԱՄԲՈՂՋ ՃԱԿԱՏՈՎ

Կովաշի գետի գծի վրա Առափնյա իմբավորման դուրս գալուց հետո, հունիսի 21-ին մեր զորամասերն անցան գետը և մի քանի որ տեղ կոփներից հետո գրավեցին Դուլովոն, Լուժկին, Պետրովկիցին, Գլորիցին: Զախ թեում կուրսանտների ջոկատը համառ կոփներից հետո վերցրեց Տերենտեվոն և Ստարոգորյեն, վորից հետո մեր զորքերն առաջ շարժվեցին մինչև Վորոնինո, Մարտինովո, Սավուրին, Ա. Բուրյա, Ն. Դոբրյանիցի: Հակառակորդը փորձեց հականարձակման անցնել և վերադասել այս անգամ իր կորցրածը, բայց հաջողություն չունեցավ: Նույնիսկ կասկովո—Ռոգոլիցի—Լիսինո—Զապոլյե

ճակատում, Բալթիական յերկաթուղու յերկայնքով հարձակման անցած սպիտակ գվարդիական թալաբրան ու զոլինյան լավագույն գընդերն այս անգամ չկարողացան ճեղքել մեր ճակատը և հարկադրված յեղան նահանջել:

Այդ որերին ընկեր Ստալինը գրում եր Լենինին.

«Մեր զորամասերում բեկումն սկսվել ե: Մի շաբաթվա ընթացքում մեզանում չե յեղել մասնակի կամ խմբովին անցնելու վոչ մի դեպք: Դասալիքները վերադառնում են հազարներով, Հաճախակի յեն դարձել հակառակորդի բանակից մեր բանակն անցնելու դեպքերը: Մի շաբաթում մեր կողմն ե անցել 400 մարդ, մեծ մասամբ գենքով: Յերեկ ցելեկով սկսվեց մեր հարձակումը: Թեև խոստացված համարումը տակավին չի ստացվել, այնուամենայնիվ, այլևս չեր կարելի կանգնած մնալ նույն գծի վրա, վորի վրա մենք կանգ եյինք առել—չափազանց մոտ եր Պիտերին: Առայժմ հարձակումն ընթանում ե հաջողությամբ. սպիտակները փախչում են. այսոր մենք վերցրինք կերնովո—Վորոնինո—Սլեպինո—Կասկովո գիծը: Վերցրել ենք գերիներ, 2 կամ ավելի հրանոթ, ավտոմատներ, փամփուշներ: Թշնամու նավերն այլևս չեն յերեսում, ըստ յերեսութին, վախենում են «Կրասնայա Գորկայից», վորն այժմ լիովին մերն ե: Շտապ կարգով ուղարկեցեք իմ տնօրինության տակ 2 միլիոն փամփուշտ»:

Ընկեր Ստալինն անձամբ ղեկավարում եր այդ հարձակման բացատումը: Վոչ մի բան չեր վրիպում նրա սեեռուն ուշադրությունից: Որինակ՝ յերբ «Կրասնայա Գորկայի» խոռվությունը ճնշելուց հետո 7-րդ բանակի հրամանատարությունը հրաման ավեց կուրսանտների ջոկատին ճակատից վերադառնալու մասին, ընկեր Ստալինը առաջինն եր, վոր դրանում նկատեց այն վտանգավոր սխալը, վոր հենց սկզբում թուլացնում եր մեր զորքերի հարձակման հաջող զարգացումը: Այդ առթիվ նա իսկույն եեթ հեռազրեց:

«Բանակի հրամանատարի հրամանը՝ կուրսանտներին յետ ուղարկելու մասին, գտնում եմ անտեղի, գործի համար վնասակար ստորակետ այդ հրամանը կատարման յենթակա չե վերջակետ կոմիսար Լեպսեյին հայտարարում եմ նկատողություն հեղափոխական զգոնության բացակայության համար 230:

Պաշտպանության խորհրդի լիազորությամբ Ստալին:

Այս հեռագիրը ճակատի գործողություններն ընկեր Ստալինի կողմից կոնկրետ ղեկավարելու բազմաթիվ որինակներից մեկն ե: Բացի դրանից, այդ հեռագիրը ցույց է տալիս, թե ընկեր Ստալինը ինչպիսի խոշոր նշանակություն եր տալիս զինվորական կոմիսարի գերին: Բոլցիկյան զգոնության սուր սրած զենք, մշտական զգուշություն դեպի թշնամու դավերը, անսահման նվիրվածություն և սեր դեպի իր հայ-

ըենիքը, սերտ կազ մասսաների հետ, մշտական պատրաստակամություն իր բոլոր ուժերը նվիրելու, իսկ յեթե հարկավոր լինի, նվիրելու նաև իր կյանքը կուսակցության գլխավոր գծի համար մղած պալքարում, — ահա ինչպիսի հատկություններ եր դաստիարակում ընկեր Ստալինը, հոգատարությամբ ամեցնելով խորհրդային իշխանության համար մարտնչողների հիմնալի կադրեր:

Մեր հարձակումը շուտով ծավալվեց 7-րդ բանակի ամբողջ ճակատով մեկ: Հյուսիսային խմբավորման զորամասերը, հաղթահարելով սպիտակ գվարդիականների կատաղի գիմադրությունը, հուլիսի 5-ի յերեկոյան դուրս յեկան Սիստա—Պալկինո—Կոպորյե—Մալլակովա—Դոլոբովիցի—Բեգունիցի—Կանարշինա—Ռոնկովյիցի գծի վրա: Մեր զորամասերը, հարձակվելով Բալթիական յերկաթուղարձի յերկայնքով, նույն որը համառ կավից հետո գրավեցին Վոլոսովով կայանը: Սպիտակ գվարդիականները նահանջելիս պայթեցրին կայարանի շենքերը: Այդ մարտերով հաջողությունը հուսալիորեն ամբապնովեց մեր զորամասերի ոգտին:

Նահանջի սասին այլևս վոչ վոք չեր մտածում:

Հուլիս ամսին մեր հարձակումը շարունակվեց ծավալվել: Այդ առթիվ ընկեր Ստալինը գրում եր «Պետրոգրաֆսկայա պրավդայում»: «Սպիտակ ֆինները Ռոնկովյի մոտ, ձգտելով գրավել լոգեյնոյե Պուեն, յետ են մղված և քշված դեպի Ֆինլանդիայի սահմանները: Պետրովակովովսկից մի քանի վերատի վրա կանգնած հակառակորդի Պետրովակովովսկի խմբավորումն այժմ արագաթափ նահանջում ե մեր զորամասերի շեշտակի հարձակման տակ, վորոնք անցել են այդ խմբավորումն թիկունքը: Հակառակորդի Պակովի խմբավորումը ձեռքից բաց թողեց նախաձեռնությունը՝ կանգ առնելով միայն մի տեղում, իսկ տեղականույնիսկ նահանջելով: Ինչ վերաբերում ե հակառակորդի նարվայի խմբավորմանը, վորն ամենից ակտիվն ե, վոչ միայն չհասավ իր նպատակին, այլ ընդհակառակը, նահանջում ե առանց կանգ առնելու մեր զորքերի շեշտակի հարձակման տակ, քայլայվելով ու հետզիտեն նվազելով կարմիր Բանակի հարվածների տակ, դեպի Յամբուրդ տանող ճանապարհների վրա: Այդպիսով պարզվեց, վոր վաղաժամ եյին Անտանտի ճիշերը հաղթության մասին: Զարդարացան Գուչկովի և Յուղենիչի ակնկարությունները...

Ռուծանիկովի և Յուղենիչի դժբախառությունն այն ե, վոր նրանց չի բավականացնում վոչ տարածությունը, վոչ մարդկային նյութը, վոչ հացը: Ֆինլանդիան ու Խուլանդիան, ինարկե, վորոշ բազա կարող են լինել ուսւական ուղմագերիներից սպիտակ գվարդիական զորամասեր կազմակերպելու համար, սակայն նախ վոր այդ ուղմագերիները սպիտակ գվարդիական զորամասերի համար չեն կարող լինել

բավարար և միանգամայն հուսալի մատերիալ. յերկրորդ՝ հենց իրազգայությունը Ֆինլանդիայում և Եստլանդիայում, նկատի ունենալով այնաեղ գարգայող հեղափոխական խմբումը, բարեհաջող պայմաններ չեն ներկայացնում սպիտակ գվարդիական զորամասեր կազմակերպելու համար, յերրորդ՝ կամաց-կամաց և սիստեմատիկ կրծառվում եւ մոռձյանկոյի և Բալտիովիչի գրաված տերիտորիան (ընդամենը մոտ յերկու դավան) և տիրանչակ «Հյուսիս-արևմտյան բանակի» համար, յեթե ընդհանրապես վիճակված եւ նրան ստեղծվելու շուտով տեղ չի ունենա բացաղատվելու և մանյուլիրելու: Վորովիչետե, պետք եւ խոստովանել այդ, վոչ Ֆինլանդիան, վոչ Եստոնիան, առայժմ գոնե Ռուձյանկո-Բալտիովիչ-Յուգինիչի համար չեն ներկայացնում «նրանց սեփական տերիտորիան»: Բանակ առանց թիկունքի — այսպիսին եւ «Հյուսիս-արևմտյան բանակը»: Ի՞նչ խոսք, վոր այդպիսի «բանակը» չի կարող յերկար ապրել, եթե, ինարկե, դեպքերի շղթայի մեջ չներխուժի վորեւ նոր, լուրջ, հակառակորդի համար բարենպատ՝ միջազգային լնության հանգամանք, վորի վրա, բոլոր տվյալներով, հակառակորդը հույս դնելու վոչ մի հիմք չունի:


Կարմիր բանակը պետք եւ հաղթանակի Պետրոգրադի տակ:

### ՍՊԻՏԱԿՆԵՐԻ ԶԱԽԶՈՒՄՈՒՄԸ 1919 ԹՎԱԿԱՆԻ ԱՄԱՐԾ

Ոգոստոսի սկզբներին ճակատի գիծը հետղեատե մոտենում եր Յամբուրդին, չայցած վոր սպիտակները բազմիցս կատաղի փորձեր արին՝ մեր ձեռքից նախաձեռնությունը խլելու և հարձակման անցնելու: Ոգոստոսի 4-ին 48-րդ հրաձգային գունդը և կուրսանաների ջոկատը մարտ մղելով անցան Սոլիկա գետի ճահճային հովիտը և տիրեցին Զապոլյյե և Ալեքսեյևկա գյուղերը, իսկ 46-րդ հրաձգային գունդը գրավեց Կերսոտովոն և Կիլին (սինմա 9):

Մեր զորամասերն առանձնապես գժվարության հանդիպեցին Կիլի մոտ: Սկզբում 46-րդ հրաձգային գնդի հարձակումն այդ գյուղի վրա յիտ մղվեց սպիտակ գվարդիականների հրացանա-գնդացրային ուժեղ կրակով, փորոնք ամրացել եյին այդ գյուղի մատուցներում: Գնդի ստորաբաժնամեները յիտ քաշվեցին՝ մարտադաշտում թողնելով սպանվածներ և վիրավորներ: Սակայն այդ ժամանակավոր անհաջողություն եր: Հրամանատարներն ու կոմունիստները վերականգնեցին կարգը գետնին պառկած զորաշղթաների մեջ: Վաշտի հրամանատար ընկ, Կալինինը հակառակորդի կրակի տակ իր յետեկց զետի նոր հարձակում տարավ մը բուիկներին: Մարտիկ-կոմունիստներ Լուկինն ու Բոգդանովը կարմիր բանակայինների խմբուկով գարանում հայտաբերեցին սպիտակների դաշտունային գնդացիրը, անցնելով նրա թիկուն-

քը, հանկարծակի սվինահար անելով՝ գրավեցին գնդացիրը և գերի վերցրին մի քանի սպիտակ գվարդիականների: Այդ տեղի ունեցավ



Սկզբան 9. Մարտի Յամբուրդի համար և նրա գրավումը 1919 թ. սպատառի ճիխ:

Հենց այն մոմենտին, յերբ մեր շղթաները զետի գրոհ եյին շարժվում: Առաջինը դյուլ ներխուժեց 3-րդ գումարտակը: Գումարտակը, զյուղի ծայրում հակառակորդից մի գնդացիր վերցնելով, նույն տեղում մար-

ատական պատրաստության բերելով գնդացիրը, խոշոր կորուստներ պատճեց սպիտակ գվարդիականներին, յետ մղելով նրանց հակագրոնք այդ դյուդի վրա:

Զնայած սպիտակ գվարդիականների բոլոր ջանքերին, նրանց չաշղողվեց կանգնեցնել մեր հարձակումը, Միաժամանակ 154-րդ, 156-րդ և 158-րդ գնդերի մասերը, 46-րդ հրաձգային դնդի հետ միասին գրավեցին Լիտիզնան, Լյալիցին, Ոպոլյեն, Ռեշենիցին, իսկ 155-րդ և 157-րդ հրաձգային գնդերը դուրս յեկան Խոտինիցին դժի վրա և սկսեցին հարձակվել Կոլոժիցիի և Մոլոսկովիցի կայարանի վրա, Մեր հեծելադրը, ոգտվելով սպիտակների նահանջից, կուրսանաների վաշտի հետ միասին Ռուլյեյից շարժվեց դեպի Տիկոզիս կիսակայարանը և գրավեց այն: Այդ ժամանակ 2-րդ հրաձգային դիվիզիայի ձախ թեռում 16-րդ և 17-րդ հրաձգային գնդերը հարձակվեցին սպիտակ գվարդիականներին թողնել Ռատյոն, Գանկովկան և Ռեզեֆին:

Հետեւալ որը, ոգոստոսի 5-ին, 46-րդ և 48-րդ հրաձգային գնդերը, նեղելով թշնամուն, կուրսանաների ջոկատի հետ միասին դուրս յեկան լուրա գետի մոտ և ներխուժեցին Յամբուրգ: Սպիտակները հանդիպեցին նրանց հակագրոնք, մոտ 600 սվինի կազմով, վորի մեջ մտնում ելին Տուլայի ջոկատը և ծովային վաշտը: Տեղի ունեցավ փողոցալին մարտ: Այդ մարտի յելքը վորոշեցին մեր զրահապատները, վորոնք ընթանալով կրակ բաց արին սպիտակ գվարդիականների վրա: Սպիտակ գվարդիականների միմասը վախուսափ մատնվեց, իսկ մյուս մասը շտապով նահանջեց Լուրա գետի մյուս կողմը: Ընդլորում ծովային վաշտը համարյա ամբողջովին վոչնչացվեց:

Այսպես գրավեց Յամբուրգը: Մեր զորամասերը գրավեցին Լուրա գետի աջ ափը, գետի հոսանքով դեպի վեր՝ մինչև Սերեժինոն, իսկ գեղի ներքեւ՝ մինչև Ժարինոն, 155-րդ և 157-րդ հրաձգային գնդերը գրավեցին Մոլոսկովիցի կայարանը, Կոլոժիցի, Միրկովիցի և Յաբլոնիցի գյուղերը. Նավաստիների ջոկատն ու 168-րդ հրաձգային գունդը վերցրին Վեյմարն կայարանը և Մանուլովու ու Մրեդնեյի Սելո գյուղերը (սխեմա 9):

Կուրսանաների ջոկատը, հետապնդելով Լուրա գետի մյուս կողմը նահանջած հակառակորդին, անցավ գետը և գրավեց Նովոպյատնից-կոյե դյուդը:

Ճակատի գիծը հիմնականում հաստատվեց Լուրա գետի յերկայնքի վրա և հետագայում չփոխվեց մինչև հոկտեմբեր ամիսը:

Սպիտակներն իրենց նահանջի ժամանակ գդալի ավերումներ կատարեցին Յամբուրգում: Նրանք, նահանջելով գետի մյուս կողմը և պայթեցնելով յերկաթուղարին կամուրջը, շարունակեցին հրետակոծել քաղաքը: Դրանից խիստ վնասվեց ույզործկոմի յերեք հարկանի շեն-

քը: Մի քանի տեղ հրդեհ ծագեց: Քանդվեցին քաղաքային ելեկտրակայանը և փոստի շենքը:

Քաղաքը վերցնելու ժամանակ մարտում ընկած մարտիկների մարմինները և զանազան աեղերում գտնված սպիտակ գվարդիական տեսորի բազմաթիվ զոհերը թաղվեցին քաղաքի կենտրոնում, Կարլ Մարքսի անվան պղղոտայի պուրակում: Տեղական բնակչության խնդրանոր իսկուլն եթե կտրատվեցին պուրակը շրջապատող ծառերը, վորոնց վրա սպիտակ գվարդիականները կախել եյին իրենց զոհերին:

\* \*

Յամբուրգից հետո շուտով ազատազրվեց նաև Պոկովը:

Հունիս և հուլիս ամիսներին կոփվերը Պոկովի ճակատամասում ընթանում եյին փոփոխակի հաջողությամբ: Մեր զորամասերի հաճախակի փորձերը՝ հարձակման անցնելու և յետ վերցնելու Պոկովը, վերջանում եյին անհաջողությամբ: Կեպ գետի անդարանները զրավելու համար մղած մարտերն աչքի եյին ընկնում իրենց հատուկ համառությամբ: Գետանցները մի քանի անգամ ձեռքեծենք անցան: Այդ մարտերին 10-րդ հրաձգային դիվիզիայի հետ մասնակցում եր նաև Պոկովի կոմունիստական գումարատակը:

Ոգոստոսի կեսերին 10-րդ հրաձգային դիվիզիայի զորամասերը գրավեցին Բորոտնոն, Լեմնոն, Վերեբուշինոն, Զակլինյեն, Ն. Բլյանիցին, Պոլյանան: Այդ նույն ժամանակ Եստոնական բրիգադը և 11-րդ հրաձգային դիվիզիան իրենց ձեռքեծենք անցան: Այդ մարտերին 10-րդ հրաձգային դիվիզիայի հետ մասնակցում եր նաև Պոկովի կոմունիստական գումարատակը:

Մեր զորամասերը, ոգտագործելով 11-րդ հրաձգային դիվիզիայի ձախ թևի ձեռնաուլ դասավորությունը Պոկովի նկատմամբ, ոգոստոսի 15-ին յեռանդուն հարձակման անցան Դրիբուլիի ուայոնից գետի իզրուսկի և նովիզբորսկի ուղղությամբ, արդպիսով իսկ սպառնալով Եստոնիայից կտրել Պոկովի ուայոնում գտնված սպիտակ գվարդիական և սպիտակ եստոնական զորամասերին: Հաշիվը ճիշտ դուրս յեկավ: Յերբ մեր զորամասերն ոգոստոսի 19-ին առաջ խաղացին գետից—Շախինցի—Վոլկովա—Ավլաշևս գիծը, սպիտակ գվարդիականները հարկադրված յեղան արագ կերպով այստեղ փոխազրել 2-րդ սպիտակ եստոնական գիծիզիայի այն զորամասերը, վորոնք մինչ այդ զործում եյին Վելիկայա գետի աջ ափին: Այդ թուլացրեց սպիտակների այն ուժերին, վորոնք պաշտպանում եյին Պոկովը հարավ-արևելքից: 11-րդ հրաձգալիին գիծիզիայի հավաքական բրիգադը և Եստոնական բրիգադը ոգտագործեցին այդ բարենպատ պարագան ու հարձակման անցան: Ոգոստոսի 22-ին նրանք մարտ մղելով հասան Ստանլի—Ռյուխա—Բուդնիկ—Գորկա—Վիդրա գծին:

10-րդ հրաձգային դիվիզիայի զորամասերը նույնպես հարձակման անցան և հասան կեզ գետին՝ մարտեր մղելով այդ գետի անցարան-ների համար Պոդլիպե—Յաբլոնեց ճակատամասում:


Այդ ժամանակ եստոնական և համահավաք բրիգադներն արդեն հասել ելին Զերեխս գետին, իսկ 83-րդ և 2-րդ Լատիշական գնդերին նույնիսկ հաջողվեց անցնել Վելիկայա գետի ձախ ափը և գրավել Գոլոկավան և Պանևան, վերցնելով 20 գերի և 3 գնդացիր: 11-րդ հրաձգային դիվիզիայի զորամասերը նույնպես առաջ շարժվեցին և գրավեցին Նեկլոչը, Շախինցին և Վոլկովան:

Սպիտակ գվարդիականները, տեսնելով, վոր անխուսափելիորեն պետք և հանձնել Պսկովը, քաղաքից հանեցին բոլոր կալանավորներին և քշեցին նրանց գետի Դրով: «Մեղ քշեցին գետի Յելիզարյեվսկի վանքը, — պատմում եր հետո կալանավորներից մեկը: — Յուցակով դուրս կանչեցին 11 հոգի և կախեցին անտառում, ջրաղացի լեռնում, հայտարարելով, վոր բոլոր կախվածները հրամանատարներ և կոմոնիստներ են... Դրով քշեցին յերեք բանտի կալանավորներին. մենախցերում նստած ելին 20-ական մարդ: Կերակրում ելին շատ վատ՝ որտեղան տալիս ելին քառորդ ֆունտ հաց, ապուր չկար: Առավոտյան տալիս ելին յեռացրած ջուր և աղ, Տարածված ելին քոսն ու լնդախտը: Կալանավորների միջ ելին յերկու յեղբայրներ Սևերովները, Ողերովը, Մինուտինը, Ստեղանովը, Սեմլոնովը՝ մի 50 տարեկան զյուղացի: Սրանց բոլորին կախեցին սեպտեմբերի 3-ին Գրոմովյան անտառում, Սկամլա գյուղից յերկու կիլոմետրի վրա»...

Ուստասոսի 26-ին, վաղ առավոտյան մեր զորամասերը մոտեցան Պսկովին հարավից, կտրելով սպիտակների՝ Դվինսկի և Ռիգայի խճուղիներով նահանջելու ճանապարհները Ժյոլզա գետի մյուս կողմում: Նրանց մի մասը հեռացավ լճով՝ շոգենավերով: Առաջինը քաղաք մտան 88-րդ և 87-րդ հրաձգային գնդերի մասերը: Սրանց յետեկց, Սայմոյի մոտ կեզ գետի անցարանների համար մղած տաք կոփիներից հետո, մտեցան 85-րդ և 88-րդ հրաձգային գնդերը:

Քաղաք վերադարձն և 85-րդ հրաձգային գնդի մեջ մտած Պսկովի կոմունիստական գումարտակի մնացորդները, վոր յերեք ամիս շտրունակ մարտնչում եր սպիտակ գվարդիականների դեմ:


Յամբուրդի և Պսկովի զրագումով վերջ եր տրված սպիտակ գվարդիականների կողմից Պետրոգրադի վրա կատարվող հարձակմանը: Սոցիալիստական Հայրենիքի համար մղած պայքարի պատմության մեջ շատ պանծալի եղեր գրեցին Պիտերի բանվորները, Բալթիկի նավատիները, կուսակցության կողմից ուղարկված կոմունիստները, մեծ Ստալինի ղեկավարությամբ պաշտպանելով Կարմիր Պիտերը հականեղափոխությունից:



Մասնա 10. Պատրիկ համար մղվող հարտեր:

Պետքողադի ճակատում ընկեր Ստալինի մատուցած պատմական ժառայությունները նշվեցին նրանով, վոր նա պարզեատրվեց Կարմիր գրուի շքանշանով: Ահա այդ պարզեատրման մասին լեզած վորոշման տեքստը:

«Մահացու վտանգի բոպեյին, յերբ Խորհրդային իշխանությունը, չորս կողմից շրջապատված թշնամիների նեղ ողակով, յետ եր մղում թշնամու հարվածները, այն բոպեյին, յերբ 1919 թ. հուլիսին Բանվորացիութագիտական Հեղափոխության թշնամիները մոտենում ելին կը բասնայա Գորկալին, Խորհրդային Ռուսաստանի համար այդ ծանր ժա-



Կեղ գետը—1919 թ. ոկտոբերին՝ գետանցների համար մղած մարտերի տեղամասը: մին, Համառուսական կենտգործկոմի նախագահության կողմից մարտական պոստում նշանակված Իոսիֆ Վիսարիոնովիչ Ստալինն իր յեռանգով ու անդուլ աշխատանքով կարողացավ միաձուկի Կարմիր Բանակի տատանված շարքերը: Ինքը գտնվելով մարտական գծի ուայոնում, նա մարտական կրակի տակ, իր անձնական որինակով վոգեշնչում եր Խորհրդային Հանրապետության համար մարտնչողների շարքերը: Պետքորդադի պաշտպանության գործում նրա մատուցած բոլոր ծառայությունները հավերժացնելու համար, ինչպես և հետազոտում Հարավային Հակատում նրա կատարած անձնվեր աշխատանքը հավերժացնելու համար, Համառուսական կենտգործկոմը վորոշեց ի. վ. Ստալինին պարզեատրել Կարմիր դրուի շքանշանով»:

## ԱՀԱՐԿՈՒ ՈՐԵՐ (1919 թ. ԱՇՈՒՆ)

### ՅՈՒԴԵՆԻՉԻ ՅԵՐԿՐՈՐԴ ԱՐՃԱՎԸ

Աշունը յեկավ:

Մույլ ու գորշ յերկինքը ցածր կախվել եր Պրիբալթիկի մերկացած անտառների վրա: Ամբողջ որերով մաղում եր մանր անձրեւ Զուրը լցվել եր փոսերն ու ցածր տեղերը: անտառային մամուապատ կոճները ծծել եյին ջուրը սպունգի նման, կպչուն ցեխով եյին ծածկվել բանուկ ճանապարհները: Վաղուց չեր յեղել այդպիսի հնոտածաշուն:

Յամբուրգը համարյա յերկու ամիս ապրում եր ճակատամերձ քաղաքի կյանքով: Գետի վրա, առանձնապես մութ ու անլուսին գիշերներին, հաճախ եր բռնկվում հրաձգությունը սպիտակ գվարդիականների հետ, վորոնք գրավել եյին հակառակ ափը: Բազմիցս քաղաքը յենթարկվեց հրետանու շրապնելային արկակոծմանը: Փողոցներում շարժումը յերեկոներին շուտ եր գաղարում: Լուզա գետի վերին ու ստորին հոսանքով պահապան եյին կանգնած գյուղերի վրա բաժանված մեր պահապան ուղեկալները:

Ճակատային անհանդիսատ կյանքը հաճախակի հրաձգություններով սովորական եր գարձել նույնիսկ քաղքենիների համար: Հետախուզությունն արդեն դադարել եր հետաքրքրվել հակառակորդի գոյությամբ, և մարտական շփումն արդեն նրա հետ համարյա մոռացված եր: Զորամասերի զգնությունը բթացավ նաև նրանով, վորորդորին սպասում եյին հաշտության պայմանագիր կնքելուն ետոնիայի հետ:

Սեպտեմբերի 28-ին Յուդենիչը գեմոնստրատիվ հարված հասցրեց Պոկովի ճակատամասին և ճեղքեց մեր ճակատը: 7-րդ բանակի հրամանատարությունը սթափվեց և Յամբուրգի ճեղքածքի վայրն ուղարկեց բանակային բոլոր ռեզերվները: Յուդենիչն ել հենց գրան եր ձգտում:

Աշնանալին մի մութ գիշեր, նա Մուրավեյնոյի մոտ հանկարծակի անցավ լուգա գետը և հոկտեմբերի 11-ի առավույան տիրեց Յամբուրգին: Հարվածն այնքան անակնկալ եր, վոր մեր զորամասերը կորցրին կապն իրար միջն և սկսեցին նահանջել արկելյան և հյուսիսարևելյան ուղղություններով:

Մեր նահանջը Յամբուրգից յերկաթուղագծի յերկայնքով պաշտառնում եր զրահագնացքը: Նո իր կրակով պաշտպանվում եր սպիտակ գվարդիականներից և կանգ առակ Տիկոսիս կիսակայարանի մոտ: Նրա դիպուկ կրակը կասեցըց հակառակորդի գեպի առաջ անց-

Նելու բոլոր փորձերը։ Այն ժամանակ սպիտակները Յամբուրդում վերցրած շողեքարշերից մեկի մեքենավարին դուրս հանեցին շողեքարշից, լցրին գոլորշով, բացեցին ուժուլյատորը և շուկաքարշը լիւնթաց բաց թողին մեր զրահազնացքի վրա։ Մարտիկները չշփոթվեցին։ Նրանք հրանոթով դիպուկ կրակ բաց արին արագասլաց շողեքարշի վրա և հենց առաջին 3-4 ձիգերից արկերն ընկան շողեքարշի վրա։ Արկերից մեկը դիպավ կաթսային ու ծակեց այն։ Գոլորշին դուրս յեկավ, և շողեքարշը կանգ առավ։

Ոգտվելով մեր մի քանի շտարների անգործությունից, վորտեղ կրկին ներսողոսկել եյին դաշտաճանները նախկին սպանների թվից, սպիտակները լայնորեն սկսեցին շրջանցել ու թևանցել մեր նահանջող դորքերին։

Հոկտեմբերի 15-ին արդեն նրանք վերցրին Պլյուսա կայարանը, Սերեբրյանկան և Լուգա քաղաքը։

Սպիտակ գվարդիականներն ամենուրեք վայրագորեն դատաստան եյին տեսնում տեղական բնակիչների հետ։ Այսպես, որինակ, Սարուդի կայարանում (այժմ Կարմիր Ստրուգի) տեղի ուսուցչունուն ձերքակալեցին միայն այն պատճառով, վոր կասկածում եյին, թե նա կոմունիստուհի է։ Նրան բոնարարեցին և կախեցին։ Այդ նույն կայարանում ձերքակալեցին 17 տարեկան նիսա Բողդանովային։ Սպիտակ սպան հրամայեց մտրակով նրան 25 հարված հասցնել նրա համագյուղացիների ներկայությամբ։ Նիսա Բողդանովան խիզախորեն հայտարարեց սպիտակ գվարդիականներին։ «Ցես ձեզ թույլ չեմ տա, ժողովրդի խարեւաներ ու դահիճներ, վոր գուք ինձ ծաղրի յենթարկեք։ Ավելի լավ ե՝ կախեք ինձ, Մեկ կոմունիստուհի կալակսի աշխարհից, բայց կոմունիզմի զաղափարները դուք չեք սպանի։»

Նիսա Բողդանովային անմիջապես կախեցին։

Մեր զորամասերի նահանջի ժամանակ շատ հրամանատարներ, Կարմիր բանակայիններ ու քաղաշխատողներ բարձր անձնազո՞հության որինակներ ցույց տվին, ձգտելով կանգնեցնել թշնամու առաջնազացումը։ Նրանք հաճախ իրենց կյանքն եյին զոհում, վորպեսի կատարենց իրենց պարտքը։

Կիպենով նահանջելու ժամանակ յերկու գնդակով վիրավորվեց սպյուր ընկ. Ֆյոդորովը։ Զնայած վիրավորված լինելուն, յետ չեք ֆնում իր ընկերներից։ Նա ընկնում եր, բարձրանում ու կրկին շարունակում իր ճանապարհը։ Ճանապարհին տեսնելով վայր ընկած հրացան, նա վերցրեց այն և տարավ իր հետ Հետազայում նա ասում եր. «Ի՞նչպես կարող եր յես թողնել հրացանը։ Զե՞ վոր նա յե, վոր պաշտպանում ե մեր իշխանությունը։» Այդ ժամանակ նահանջում եր պարետային խմբի կարմիր բանակային ընկ. Մարկերը։ Սպիտակնե-

ըից պաշտպանվելիս նա վիրավորվեց վոտքից։ Ծանր եր վերքը. ընկ. Մարկերը քայլել չեր կարող. չցանկանալով գերի ընկնել սպիտակների ձեռքը, ինքնասպանություն գործեց։


Կիպենի տակ կովի ժամանակ զոհվեց նաև դիվիզիայի կոմիսար ընկ. Մազինը։ Նահանջի դժնղակ որերին նա վոչ մի բոպե հանգիստ չեր առնում, անդադար շրջադաշում եր զորամասերը, վողերում եր կարմիր բանակայիններին, ոգնում եր հրամակազմին, հրահանգում եր քաղաշխատողներին։ Արհամարհելով վտանգը, նա կիպենում մինչև վերջին բոպեն, սպիտակների ձեռքն ընկավ և գնդակահարվեց նրանց կողմից։

Մշինսկայա կայարանում քաղաշխատող ընկ. Գրուշինը, գերի ընկնելով, հրաժարվեց ցուցմունքներ տալ և հայտարարեց, վոր ինքը կոմունիստ ե, և վոր ժողովրդի շահերն իր համար բարձր են ամեն բանից։

Ընկ. Գրուշինին կախեցին յերկաթուղային հողաթմրի մոտ, հեռագրասյունից։ Մահից առաջ նա ասաց իր գահիններին. «Յես իմ ամբողջ կյանքում յեղել եմ աղնիվ աշխատող և չեմ կարող ստոր լինել. Յես ուրախությամբ եմ մեռնում հանուն այն գաղափարի, վորին միշտ ծառայել եմ»։

Բեգունիցիում սպիտակ գըշվարդիական շտաբը բերին ճակատում գերի ընկած մի մարտիկ-կնոջ. Հարցաքննության ժամանակ նա ուղղակի հայտարարվեց, վոր ինքը կոմունիստուհի յե և հրաժարվում ե վորեն տեղեկություն տալ. Յերեք որ շարունակ հարցաքննում եյին նըրան, բայց վոչ մի բան չիմանալով նրանից, գնդակահարեցին։

Սպիտակ գվարդիականները հասան կովաշի գետի մոտ, նույնանուն գլուղին էլից. Գնդագրային դասակի հրամանատար ընկ. Իլինը, տեսնելով սպիտակներին, սայլապանի ոգնությամբ սայլից իջեցրեց գնդացիրը, ինքը պառկեց նրա յատեռում և կրակ բացեց սպիտակների վրա։ Ընկ. Իլինը յերկու ժամ շարունակ կասեցնում եր թշնամու հարձակումը։ Սպիտակները սիբիրահար արին նրան, յերբ նա ծախսեց բոլոր փամփուշները։ Այդ ժամանակ վրա հասան մեր




Վ. Ռ. Մազին :

**Պորամասերը:** Սպիտակները հարկադրված յեղան նահանջել գետի մյուս ափը:

Կարելի յէ բերել այդպիսի անձնազության բաղմաթիվ որինակ-ներ:

Իրենց նահանջող դնդերն առանց զեկավարության թողած մեր մի շարք շտաբների դավաճանական անգործությունը քիչ չնպաստեց սպիտակ գվարդիականների հաջող հարձակմանը: Նրանց հարձակումն, ինարկե, կասեցնել չելին կարող առանձին զորամասերի ու ջոկատների զատ-զատ գործողությունները: Դավաճանի հանցագործ ձեռքն ոգնում եր թշնամուն: Հոկտեմբերի 16-ին սպիտակները գրավեցին Կրասնոյե



Սխեմա 11. Անտանտի յերկրորդ արշավը:

Սելոն, իսկ հետեւյալ որը նույնը վիճակվեց և Գատչինային: Հոկտեմբերի 19-ին սպիտակների 5-րդ դիվիզիան մոտեցավ Լիգովո կա-

յարանին... Դրանք արդեն կարմիր Պետրոգրադի մոտակա արվարձաններն եյին:

Պիտերի վրա կախվեց նոր սպառնալիք, վորը պակաս սարսափելի չեր, քան ամառվա սպառնալիքը: Պիտերի վրա այդ հարձակումը հանդիսանում եր Խորհրդային հանրապետության վրա Անտանտի նոր արշավի մի բաղկացուցիչ մասը:

Համաշխարհային բուրժուազիան հաշտվել չեր կարող առաջին արշավի անհաջողության հետ. նա կազմակերպեց հակախորհրդային յերկրորդ արշավը, ձգտելով արյան մեջ խեղդել բանվորների և գյուղացիների Խորհրդային նորանոր թնդանոթներ, տանկեր, բեռներով հանդերձանք ու զինասարք և այլն ափ հանվեցին նավահանգստներում սպիտակ գվարդիականների համար: Եստոնիան հաշտության մասին բանակցություններ եր սկսել Խորհրդային հանրապետության հետ, բայց Անտանտի ճշշման տակ ձգձեց իր պատասխանը խորհրդային առաջարկություններին:

Անտանտի պլանի համաձայն, Մուլվայի ուղղության վրա գրլիսավոր հարվածը պետք ե հասցներ Դենիկինը: Յուգենիչը պետք ե ոժանդակ հարված հասցներ և վերցներ Պետրոգրադը: Այդ արշավի գլխավոր կազմակերպիչներից մեկի, Անգլիայի սազմական մինիստր Չերչիլի հաշիվներով, Պետրոգրադը պետք ե վերցվեր սեպտեմբեր ամին, իսկ Մուլվան՝ դեկտեմբերին:

Ճիշտ ե, Յուգենիչը թեև ուշ սկսեց իր հարձակումը, բայց նա յեռանդով իր սխալն ուղղեց, կատարելով իր տերերի կամքը:

Կապիտալիստական բոլոր յերկրների ուղիղակայաններն ազմուկ բարձրացրին Յուգենիչի «անորինակ հաղթանակների մասին». Թերթերն ու ժուռնալները զետեղում եյին նրա նկարը: Կատաղի սպեկուլացիա սկսվեց սպիտակ գեներալի արշավի շուրջը... «Թիննական ծոցի յերկու ափերում զլուխ բարձրացրին հարմար դեպքի սպասող զանազան սպեկուլյանները,—գրում ե Վ. Գոռնը, սպիտակների հյուսարկմատյան կառավարության նախկին անդամը, իր հիշողություններում:—Նրանց տեսնելով, ալեկոծվեցին և քաղքենիները: Իրենց կյանքում առևտորով զըրազված մարդիկ սկսեցին զանազան ապրանքներ գնել, վորոնք կարող եյին պետք գալ Պետրոգրադում, վերավաճառում եյին այդ ապրանքները յերկրորդ և յերրորդ անձանց: Սպեկուլյացիան բարձրացրեց գները նորմակաց մի քանի անգամ: Հելմինդորսից ու Ռենելից այդ տեսները վարակեց և կոպենհագենի առևտորականներին:

Կառավարությանն ամեն կողմից ձանձրացնում ելին զանազան գործակալները, միջնորդները և ուղղակի «բարլացակամները», վորոնք, իրարից առաջ ընկնելով, առաջարկում եյին զանազան նախա-

զծեր, կոմբինացիաներ կամ ուղղակի առաջարկում եյին մթերքները՝ Ամենից ավելի անպատճառները, ընդդժմադրություն ստանալով, զարտուղի ճանապարհով գիներալ Յուգենիչի մոտ եյին համուռմ, ձգտելով անմիջապես նրա հետ պայմանագիր կնքել մատակարարման վերաբերյալ և այլն»:

Մի խոսքով՝ կապիտալիստական պարագիտները, ամբողջ սպիտակ գվարդիական վոհմակը հրճվում եր կանխավայելով Յուգենիչի Հյուսիս-արևմտյան բանակի կողմից Պետրոգրադի շտապ գրավումը:

### Ենինի կոջով

Այդ աճարկու որերին Վ. Ի. Լենինը մի կոչով գիմեց Պետրոգրադի բանվորներին և գյուղացիներին.

«Ընկերներ, հասել ե վճռական մոմենտը: Յարական գեներալները մի անգամ ել ստացան մթերքներ ու ուղմական մատակարարում Անդլիայի, Ֆրանսիայի, Ամերիկայի կապիտալիստներից, մի անգամ ել կալվածատերերի վորդյակների բանդաների հետ փորձում են վերցնել Կարմիր Պիտերը: Թշնամին հարձակվեց այն ժամին, յերբ մենք հաշտության շուրջը բանակցություններ եյինք վարում եստլյանդիայի հետ, նա հարձակվեց մեր կարմիր բանակայինների վրա, վորոնք հավատում եյին այդ բանակցություններին: Հարձակման այդ դաշտանական բնույթը մասսամբ բացատրում ե թշնամու արագ հաջողությունները: Վերցված են Կրասնոյե Սելոն, Գատչինան, Վիրիցան: Դեպի Պիտերը կտրված ե յերկու յերկաթուղագիծ: Թշնամին ձգտում ե կտրել յերրորդ յերկաթուղագիծը—Նիկոլայվյան յերկաթուղիծը, և չորրորդը՝ Վոլոգոդյան յերկաթուղագիծը, վորակեսզի Պիտերը սովոր վերցնի:

Ընկերներ, դուք բոլորդ դիմեք և տեսնում եք, թե ինչպիսի գիթսարի սպառնալիք ե կախված Պետրոգրադի վրա: Մի քանի որում վճռվում ե Պետրոգրադի բախտը, վճռվում ե Խուսաստանը և Խորհրդը:

Ես հարկ չեմ համարում հիշեցնել Պետրոգրադի բանվորներին ու կարմիր բանակայիններին՝ նրանց պարտքի մասին: Համայն աշխարհի բուրժուազիայի դեմ մզած անորինակ իր դժվարություններով և անորինակ իր հաղթանակներով խորհրդային յերկամյա պայքարի ամբողջ պատմությունը մեղ ցույց տվեց Պիտերի բանվորների կողմէ վոչ միայն պարտքի կատարման որինակ, ալև վեհագույն հերոսության, աշխարհում շտեսնված հեղափոխական խանդավառության և անձնիրության որինակ:

Ընկերներ, վճռվում ե Պետրոգրադի բախտը, Թշնամին ձգտում և մեզ հանկարծակի բերել: Նրա ուժերը թույլ են, նույնիսկ անշահնա, նա ուժեղ ե իր արագաշարժությամբ, սպաների հանդությամբ:

մատակարարման և սպառագինման տեխնիկայով, Մոտ ե ոգնությունը Պիտերին: Մենք շարժեցինք այդ ոգնությունը: Մենք շատ ավելի ուժեղ ենք թշնամուց: Մարտնչեցիք մինչև արյան վերջին կաթիլը, ընկերներ, կառչեցիք յուրաքանչյուր թիզ հողին, կայուն յեղեք մինչև վերջ. հաղթանակը հեռու չե: Հաղթանակը մերը կլինի»<sup>1</sup>:

Ծանր փորձությունն առաջ բերեց վոչ թե վհատություն, այլ վիթխարի խանդավառություն քաղաք-զիգանտի ամբողջ աշխատավոր բնակչության մեջ: Բոլոր նրանք, ում համար մոտիկ եր ու թանգ չոկտեմբերյան պրոլետարական հեղափոխությունը, վոտքի յելան մի մարդու պես, լկտիացած թշնամուց նրան պաշտպանելու համար: Բոլշևիկների Պիտերյան կաղմակերպությունը ճակատ ուղարկեց իր լավագույն զավակներին, վորպես շարքային մարտիկներ, հրամանատարներ ու կոմիսարներ: Կուսակցության բազմաթիվ անդամներ ճակատ ուղարկեցին բանվորական մարտական ջոկատների կազմում, վորոնք կաղմակերպվեցին քաղաքում և նրա շրջակայքում: Բացի դրանից, Պետրոգրադում կաղմակերպվեց և ճակատ ուղարկվեց յերկու կոմունիստական ջոկատ:

Պետրոգրադից յետ չմնացին Պետրոգրադի նահանգի տեղական կուսակցական կաղմակերպությունները, վորոնք հոկտեմբերի 17-ից մինչև 22 ժամանակաշրջանում ճակատին տվին 1169 մարդ: Այդ թիվն առանձին նշանակություն ե ստանում, յեթե ուշադրության առնենք այն, վոր առ 5 սեպտեմբերի 1919 թ. Պետրոգրադի նահանգի կուսակցական կաղմակերպություններում ընդամենը հաշվվում եր կուսակցության 2060 անդամ: Ընդվորում անհրաժեշտ ե հաշվի առնել, վոր այնպիսի կուսակցական կաղմակերպությունների անդամները, ինչպես Յամբուրգինը, Լուգայինը և մյուսներինը, վորոնց տերիտորիաները զրավված եյին սպիտակ գվարդիականների կողմից, արգեն Կարմիր բանակի շարքերն եյին անցել դեռևս սպիտակների մոտենալու ժամանակ:

Պետրոգրադի քաղաքային ուայոնների պատասխանառու կազմակերպչների ժողովում, 1919 թվականի հոկտեմբերի 29-ին, տեղերից յեկած բոլոր զեկուցողները նշում ելին, վոր կոմունիստները պիտովին մեկնել են ճակատն ու քաղաքին ներքին պաշտպանության ուայոննական ջոկատները: Գործարաններում մնացել ելին կուսակցականների փոքր խմբեր, վորոնք բոլորովին պիտանի չեյին զինվորական ծառայության համար իրենց առողջական դրության պատճառով:

Պետրոգրադը մենակ չմնաց այդ ծանր փորձությունների որերին: Հոկտեմբերի 21-ից մինչև նոյեմբերի 8-ը Պետրոգրադի ճակատն

1 Վ. Ի. Լենին, Յերկեր, հատ. XXIV, էջ 488:

յեկան Ռուսաստանի զանազան վարերից 794 կոմունիստ Բացի դը-  
րանից, հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներին Պետրոգրադ յեկավ Հան-  
րապետության Քաղաքական վարչության միջոցով ուղարկված կու-  
սակցության 668 անդամ:

Այդ պատասխանատու մոմենտին իրեն, վորպես բոլշևիկյան  
կուսակցության արժանավոր զափակ, ցույց տվեց նաև կոմիտա-  
միությունը, կոմյերիտմիության Պետրոգրադի կոմիտեն մեծ խան-  
դավառությամբ անցկացրեց 16 տարեկան և բարձր տարիքի կոմյե-  
րիտականների մորիլիզացիան: Մորիլիզացիան հենց առաջին 6 ժա-  
մում տվեց մոտ 500 կոմյերիտական և 150 կոմյերիտառէի:

Կոմյերիտականները, վորպես կանոն, մտնում եյին քաղաքում  
կազմակերպված ջոկատների կազմի մեջ, Սակայն կային և ինքնու-  
րույն կոմյերիտական ջոկատներ. որինակ՝ նեայի քաղաքային ուսու-  
նի կոմյերիտական ջոկատը, վորը գերազանցորեն մարտնչեց սպի-  
տակ գվարդիականների գեմ Դետուլոյե Սելոյի մոտ. հեծանվորդների  
կոմյերիտական վաշտը, վորը մասնակցեց Կրասնոյե Սելոյի մոտ տե-  
ղի ունեցած ճակատամարտին և այլն:

Պիտերի կոմյերիտմիության որինակին հետեւեցին Դետուլոյե  
Սելոյի, Շլիսսելբուրգի, Զվանկայի, Կրոնշտադտի, Նովոլազովյայի,  
Գատչինայի, Սեստրորեցի, Պետերգոֆի և մյուս վայրերի կոմյերի-  
տական կազմակերպությունները, վորոնք իրենց ոգնությունն ուղարկե-  
ցին Կարմիր Պիտերին: Այդ կազմակերպություններից Պետերգոֆի,  
Կրոնշտադտի և Կարլինի կաղմաներպությունները զենքի տակ մը-  
տան լիակատար կազմով, Միաժամանակ կոմյերիտական ջոկատներ  
յեկան Վյատկայից, Մոսկվայից, Զերեպովեցից և այլ վայրերից:

Լենինի կոչին արձագանքեցին հազարավոր բանվորները, Մոսկ-  
վայի, Վիտեբսկի, Սմոլենսկի, Կոստրոմայի, Պենզայի, Վոլոդմիլայի,  
Վլադիմիրի, Վլատկայի, Յարոսլավի պրոլետարներն իրենց յեղքայ-  
րական ոգնությունն ուղարկեցին Պիտերին:

Յուղենիի գեմ մարտերում մասնակցած Շլիսսելբուրգի բան-  
վորներից մեկը պատմում է. «Յերեկոյան ժամի 9-ին մեր գործարա-  
նում լսվեց շշակների տափնապալի սուլոց, վոր բանվորներին արտա-  
կարգ ժողովի յեր հրավիրում: Բոլորն իմացան, վոր Պետրոգրադին  
վտանգ և սպառնում: Յես չեմ հիշում այդպիսի մեծ ժողով՝ Շլիսսել-  
բուրգի վառողային գործարանում իմ յեղած ժամանակ. Ժողովում  
առաջինը յիշույթ ունեցավ բոլոր սիրելին՝ Քաղխորհութիւն նախագահ  
ընկ. Զեկալովը: Նրա ճառը մի բոյալառ կոչ եր զենքի, մարտի գի-  
մելու համար: Նա ինքը առաջին կամալորներից մոլոր յեղավ: Նրա-  
նից հետո, ոկսեցին ցուցակագրվել բազմաթիվ բանվորներ, կազմե-  
լով մեծ հերթ: Այդ յերեկո ցուցակագրից 400 մարդ: Հետեւյալ որը

վաղ առավոտից սկսեցին գալ նոր կամավորներ: Յերեկը, ժամի յեր-  
կուսին ցուցակագրությունը տվեց 550 մարդ: Բոլորն ստացան զենք  
ու հանդերձանք, և հոկտեմբերի 17-ին գումարտակը պատրաստ ուղարկ-  
վեց ճակատ»:

Պետրոգրադի և Պուլկովի խճուղիներով անվերջ հոսանքով դեպի  
ճակատ եյին շարժվում բանվորական բազմաքանակ ջոկատները:  
Ամբողջ կայազորը, ներառյալ նաև միլիոնիան, դաշտ եր գուրս բեր-  
ված:

«Ճանապարհը հանկարծ կենդանացավ, —պատմում ե Լիգովյոյի  
մոտ Ռւլյանովյան մանկական դպրոցի ուսուցչունի ընկ. Մ. Վ. Մի-  
խալովան, —ճռճուռմ եյին խճաքարերի վրայով անցնող գումակները,  
գնում եյին մարտկոցները, քայլում եյին զորքերը... Շատ բանվոր-  
ներ զնացին: Նրանք դանազան տարագներ եյին հագած: Զանազան  
ձեռվ եյին կրում և հրացանները: Անցան և նավաստիները—սրանք  
բոլորը սև տուժուրկաններով: Յեղանակն անձրեային եր Վաղուց  
չվերանորոգված, քանդված խճուղին ծածկված եր ցեխով: Սակայն  
ջոկատներն անցնում եյին կուռ շարքերով: Զոկատներից մեկը գի-  
շերելու համար կանգ առավ մեր գորոցում: Մենք մեր մանուկների  
հետ ոգնուցինք բանվորներին՝ զիշերելու հարմարվել, մարագից ծղոտ  
բերինք, թեյ պատրաստեցինք: Յերեկոյան բանվորներից մեկը կար-  
ճատե զրուց ունեցավ մանուկների հետ, խոսեց առաջիկա մարտերի  
նշանակության մասին և այն մասին, թե վորքան կարենոր ե պաշտ-  
պանել Պետրոգրադը սպիտակներից: Այդ զրույցը լսում եյին վոչ  
միայն մանուկները, այլև մենք, տարիքավորներս, և բանվորներից  
շատերը:

Առավոտյան ջոկատը շարժվեց և ճանապարհ ընկավ: Իսկ զոր-  
քերի ու գումակների շարժումը խճուղով շարունակվեց և դրանից  
հետո:

7-րդ բանակի համալրումը կոմունիստների, կոմյերիտական-  
ների, բանվորների թարմ ուժերով, կուսակցական կազմակերպու-  
թյունների ամրացումը և զորամասերի կոմպլեկտավորումը բաղաշխա-  
տողներով—անմիջապես իրենց ազդեցությունն ունեցան զորամասե-  
րի ընդհանուր դրության վրա: Բարձրացավ մարտիկների արամա-  
զը յիշույթը, ամրապնդվեց վսուահությունը թշնամու դեմ հաղթանակ  
առաջարկեցին բարձրացրեց քաղաքական դաստիարակչական աշխա-  
տանքը:

Միաժամանակ պայքար եր մզկում դասալիքների, մորթեպաշտ-  
ների և յերկշոտների դիմ:

Կարմիր բանակային լայն մասսաների շարքերում քաղաքական

Քաղաքական ամբողջ աշխատանքը ծավալված եր մեկ կենտրոնական լոգունդի շուրջը, այն և՝ Պետրոպալազը, վորպես պրոլետարական հեղափոխության հենարանի, պաշտպանության լոգունդի շուրջը:

ԳՈՐԾՈՒՄ ԵՆ ՍՏԱԼԻՆՑԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ

Ընկեր Ստալինն այդ ժամանակ գտնվում էր Հարավային ճակատում և բոլշևիկների կուսակցության կենտրոնական կոմիտեյի հանձնարարությամբ կազմակերպում էր Դենիկինի ջախջախումը: Սակայն ճակատի ու թիկունքի ամրացման ստալինյան մեթոդները ինչպես և Պետրոգրադի պաշտպանության ստալինյան պլանը, սպիտակական ամառը յետ մղելու ժամանակ կուտակված փորձը լայնորեն ոգտագործեց Պիտերի պրոլետարիատը՝ Յուլինսկի աշնանային արշավին կործանիչ հարցած հասցնելու համար:


Ինչպես ամառը, վճռական միջոցներ ձեռք առնվեցին թիկունքն ամրացնելու և լրտեսական հակահեղափոխական կազմակերպություններից մաքրելու: Զորամասերում ծավալվեց լայն բացառական աշխատանքը, վորի հետևանքով գգալապես բարձրացավ կարմիր բանակայինների զգոնությունը թե ճակատում և թե թիկունքում: Ահա այդ զգոնության որինակներից մեկը:

Պետրովրադ յեկապ համալրման մի վաշտ. Այդ վաշտի մարտիկներից մեկը փողոցով անցնելիս տեսավ, թե ինչպես առջևից գընացող կնոջից մի ծրար ընկավ: Մարտիկը վերցրեց ծրարը: Այդ ժամանակ յետ դարձավ կինը և, նկատելով, փոր ծրարը կարմիր բանակայինն ե վերցրել փորձեց թագնվել: Մարտիկի մեջ այդ կասկած հարուցեց: Նա հետեւց անհայտ կնոջը ու կանգնեցրեց նրան: Ծրարն ու կինն իսկույն ուղարկվեցին Պետրովրադի Արտակարդ հանձնաժողովը: Պարզվեց, փոր այդ կինը լրտես ե, իսկ ծրարում գաղտնի տեղեկություններ եյին, փորոնք Ցուղենիչին պետք ե հանձնվիյին:

Այդ լրտեսունու ձերբակալությունը հնարավորությունն ավեց Պետրոգրադի Արտակարգ հանձնաժողովինք քաղաքում և ճակատամերձ շրջանում հայտաբերելու լրտեսական-դիվերսիոն հականեղափոխական մի խոշոր դավադրություն ուղղված խորհրդային իշխանության դեմ:

Պարզվեց, վոր այդ ստոր դավադրության կազմակերպիչներն են յեղել ռատարերկրյա, առաջին հերթին անգլիական և ֆրանսիական, կապիտալի տգենտները, կադետական կուսակցության ներկայացուցիչների և նախկին այն դավաճան սպաների հետ, վորոնք դժոնվում

Եյին Կարմիր Բանակի շարքերում: Սպասելով, վոր Յուղենիչը Պետրո-  
գրադ և մտնելու, դափագիրները նույնիսկ ձեռնտմուխ եյին յեղել  
կաղմակերպելու իրենց «ժամանակավոր կառավարությունը», վորի  
կազմի մեջ պետք է մտնելին նախկին պետական խորհրդական Բիկո-  
վը, ինժեներ Ալբրեխտը, ցարի ժամանակվա ֆինանսների սինիստրի  
ոգնական Վերերը, նախկին ծովակալ Ռազզոզովը, կադետ Կարտաշովը



Ախեմա 12. Պետրոպրադի ամբացված ռայոնը:

և մյուսները։ Դավագրութիւնն թելերը հասնուած եյին նաև շ-րդ բա-  
նակի շտաբը։ Դափաճան Տրոցկու թեարկյալ շտաբի պետ Լյուդեն-  
կիմստը, գվարդիական այդ նախկին սպան, պարզվեց, վոր լիզել և  
այդ դափագրութիւն ակտիվ մասնակիցը։ Նա յեր կազմել ու Յուգե-  
նիչին ուղարկել Պետրոգրադի վրա հարձակվելու պլանը։ Դավագրու-  
թիւնն մեջ եյին ընդգրկված նաև մի շարք զինվորական մասնագետ-  
ներ, վորոնն ք գտնվում եյին Կարմիր Բանակի ծառայութիւնն մեջ։

Գեներալ Վաղիմիքոսու կողմից զիմավորված, Յուդենիչի հա-  
կանետակուղության պլանների լիովին համապատասխան, դավադիբ-  
ները զինված ազտամբռություն եցին նախապատրաստում Պետրո-  
գրադի պաշտպանության կրիտիկական մոմենտին, յերբ կորիզները  
կծագալիքին նրա ծայրամասերի համար:

Դիվերսանտների ու լրտեսների խարդախ պլանը ձախողվեց։ Ինչպէս ամառը, Պետրոգրադում լիովին ծավալվեց քաղաքի պաշտպանության նախապատրաստությունն այն գեպքի համար, յեթե սպիտակ գվարդիականներին հաջողվի ներխուժել այնտեղ, Պետրոգրադի ամրացրած ույսոնի ուղարկան խորհուրդը, բոլենիկների կուսակցության քաղաքային կոմիտեյի և քաղխորհուրդի հետ միասին, ճոկտեմբերի 17-ին հետեւալ վորոշումն ընդունեցին։

«Պետրոգրադի կազմակերպությունն անմիջապես ձեռնամուխ ելինում ներքին պաշտպանության կազմակերպմանը՝ Ներքին պաշտպանությունը գլխավորում են ներքին պաշտպանության պետը։

Ռայոններում նշանակվում են ներքին պաշտպանության ույսոնական պետեր, Ռայոնները բաժանվում են սեկտորների...»

Պետրոգրադի բանվորներից ու բանվորունիներից կուզմակերպվում են դրուժինաներ, խմբեր, ջոկատներ, վորոնց նպատակն ե կենտրոնացված զեկվարությամբ հրով ու սրով հանդիպել սպիտակ գվարդիականներին Պետրոգրադի փողոցներում ու հրապարակներում։

Այդպիսի դրուժինաները զինվում են հրացաններով, նազաններով, ձեռքի նոնակներով, գնդացիրներով և զասավորվում են պաշտպանության հանգուցային կետերում ինժեներական պաշտպանության կազմակերպության համեմատ։

Յեթե նույնիսկ սպիտակ գվարդիականներին հաջողվի ներխուժել քաղաքը, ապա նրանք կզտնվեն իրենց համար ոտար պարագայում և հարկադիմած կլինեն առանձին խմլերի բաժանվելու, և նրանց գրությունը կորսուարեր կլինի ներքին պաշտպանության մարտական կազմակերպման շնորհիվ։ Հաջող պաշտպանության պայմանն ե հանդիսանում յերկաթե կարգապահությունը և անողոք դատաստանն այն բոլոր մարդկանց նկատմամբ, վորոնք ուղղակի կամ անուղղակի հարցվածում են ներքին պահպանության շահերին։ Բոլոր հրմնարկությունների, կազմակերպությունների և առանձին աշխատողների պարտականությունների գաղափարը լուրեր տարածողների դեմ։

Էացի դրանից, 1919 թ. հոկտեմբերին Պետրոգրադի ամրացրած ույսոնի (սխեմա 12) սահմանները մնում եյին նույնը, ինչպիս ամառը, այդ ույսոնն ստեղծելու ժամանակ, յերբ ընկեր Ստալինը գտընվում եր Պետրոգրադի ճակատում։

Պետրոգրադի ամրացրած ույսոնի նախագծման և նրա սեկտորների բաժանելու աշխատանքում իրենց ուղղակի արտացոլումը գոտան ընկեր Ստալինի ցուցումները։ Պետրոգրադի ամրացրած ույսոնի տերիտորիան բաժանվում եր յերեք սեկտորի։ 1-ին՝ Կարելյան, վորը Պետրոգրադը ապահովում եր հյուսիսից, 2-րդ՝ Գատչինայի, վորն եր

մեջ եր ընդգրկում Յամբուրգի և Պոկովի կողմից դեպի այդ սեկտորը ըերող ճանապարհները և 3-րդ՝ Լադոգայի, վոր քաղաքը պաշտպանում եր Լադոգա լճի և միջնային տարածության կողմից։ Կրոնշտադտ ըերգը և Կրասնայա Գորկայի ամրացրած ույսոնը կակմում եյին չորրորդ սեկտորը բայց սրանք չեյին մտնում Պետրոգրադի ամրացրած ույսոնի կազմի մեջ և անմիջապես յենթարկվում եյին 7-րդ բանակի Հեղ. Ռազմ. խորհրդին։ Յուրաքանչյուրն այդ սեկտորներից, այդպիսով, իր մեջ եր ընդգրկում քաղաքի մոտիկ հենց այն մատուցները, վոր մատնանշել եր ամառը ընկեր Ստալինը։

Այս անգամ թշնամին ընդհուպ մոտեցել եր քաղաքին, և մարտական գործողությունները փոխադրվել եյին Պետրոգրադի ամրացրած ույսոնի տերիտորիայի վրա (Նրա 2-րդ սեկտորի վրա)։ Քաղաքի պաշտպանության կրիտիկական որերին զեպքերը ցույց տվին նրա մատուցներում զեկավարության կազմակերպական սիստեմի և նախապատրաստական բոլոր միջոցառումների լիակատար նպատակաբարձրությունը։

## ՄԱՐՏԱԿԱՆ ԼԻԱԿԱՏԱՐ ՊԱՏՐԱՍՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ինչպիս և ամառը, քաղաքի ամրող բնակչությունն ակտիվորեն մասնակցում եր ճարտարագիտական ամրաշինական կառուվածքներ պատրաստելուն։ Սշխատանքները զեկավարում եյին պաշտպանության շտարները։ Այստեղ եյին գալիս բազմաքանակ կամավորները՝ ճակատ ուղարկելու համար։ Այստեղ եյին կազմակերպվում բանվորական ջոկատները, այստեղից եյին տրվում քաղաքի ամրացման վերաբերյալ ցուցումները։ Պաշտպանության ույսոնական շտարները գործարաններում ու ֆարբիկաներում զեկավարում եյին բանվորական ջոկատների կազմակերպումը։ Նրանք քաղաքում ծավալեցին սանիտարական հիմնարկությունների, շտապ ոգնության կայանները, թռուցիկ բուժողնության կետերը և հիվանդանոցները, նրանք բաց արին սննդակետեր, պաշտպանության ուլունական շտարների միջոցով կրկին անցկացվեց բանվորների մորիլիզացիա բոլոր վայրերում 18-ից մընչեւ 40 տարեկան հասակը։

Տրամվայի բանվորները հանձն առան ժամանակին պարեն և գենք մատակարարել զորամասերի համար։ Բժշկական աշխատողները սանիտարական ջոկատներ կազմակերպեցին և շտապ կարգով սովորեցրին, թե ինչպիս պետք ե խնամել վիրավորներին։ Կարի արդյունարկության միությունն ուղղակի զոտքի վրա կազմակերպեց շինելների ու տաք հագուստի արտադրությունը՝ կարմիր Բանակը դրանցով ապահովելու համար։ սննդագործների մեջ յեռում եր հաց թխելու աշխատանքը։ մետաղագործների միությունը հանձն առավելացները ապահովում եր հյուսիսից։

կարգավորել արկերի արտադրությունը. Պետրոգրագի համար այդ կրիտիկական որերին Պուտիլովի, Իժորայի, Ոբուխովի և մյուս գործարանները հսկայական աշխատանք կատարեցին:

Աշխատանքի պալատը, վորտեղ տեղակորված եր պլոֆեսիոնալ միությունների մարզային խորհուրդը, այդ որերին ապրում եր տենդային կյանքով:

Պետրոգրագի Փարբիկա-գործարանային ռայոններում չտեսնված աշխատություն եր տիրում՝ բոլոր բանվորները, բանվորուհիները և նույնիսկ պատանիները, առանց ձեռքերը ծալելու, աշխատում եյին քաղաքն ամրացնելու վրա: Յերեկը գործարաններում ու Փարբիկներում լարված աշխատանքը, քաղաքն ամրացնելու հողային աշխատանքը յերեկոները և նույնիսկ գիշերները, գործարաններում և պաշտապանության ռայոնական շտաբներին կից կազմակերպված բանվորական ջոկատների ռազմական ուսուցումը, — ահա ինչով եր անցնում կարմիր Պիտերի լուրաքանչյուր պրոլետարի որը, վորը պատրաստվում եր պայքարի, վոչ թե կյանքի, այլ մահվան պայքարի համար:

«Այդ որերին Պուտիլովյան գործարանում (այժմ Կիրովյան գործարան), վոր մոտ եր ճակատին, — պատմում ե այդ գործարանի բանվորներից մեկը, — կազմակերպվեց յեռյակը Կուսակցության ռայոնական կոմիտեյում տեղի ունեցավ արտակարգ նիստ, վորտեղ վորոշվեց սաեղծել պաշտպանության ռայոնական շտաբ, վոր պետք ե յենթարկվեր ամրացված ռայոնի պետին:

Շուտով մենք տեսանք փախստականներին, դյուղացիները գալիս եյին իրենց սայլերով, վորոնց կապված գնում եյին կովերը. սայլերը բարձած եյին հացի պարկերով: Մենք վորոշեցինք կանգնեցնել յեկող մարդկանց Պուտիլովյան գործարանի և Նարվայի ուղեկալի մոտ և թույլ չտալ նրանց քաղաք մտնել: Մենք կազմակերպեցինք յերեք խափանման ջոկատ: Յեկավ սապյորական մի վաշտ և ձեռնամուխ յեղավ ականելու Ստաչկաների փողոցի և Պետերգորգի խճուղու կամուրջները: Միաժամանակ Պուտիլովյան գործարանից մենք ջոկատներ կազմակերպեցինք և ուղարկեցինք խրամատներ փորելու համար... Առավոտյան դեմ Սչաստլիվայա փողոցում արդեն պատրաստ եյին խրամատները և, բացի զրանից, պատրաստված եր 4 գնդացրային բուն: Լուսագետին սկսեցին խրամատներ փորել ավելի հեռու՝ կրամնուսելսկայա փողոցին մոտիկ: Այստեղ հարկավոր եր խրամատներ փորել և կառուցել լարափակոցներ: Վոմանք խրամատներ եյին փորում, վոմանք ձողեր եյին բերում, վոմանք հող եյին փորում նրանց համար, մի որից հետո ալտեղ ևս պատրաստ եյին խրամատները...»:

Այսաեղ պուտիլովյաններին միացան և մյուս Փարբիկների ու գործարանների բանվորները:

«Պետրոգրագի գործարաններից մեկում (նախկին Ռեչկին գործարան), — հիշում ե մասնակիցներից մեկը, — այն մասում, վորն ավելի մոտ եր Պուտիլովյան յերկաթզծին, հատուկ բաց վագոններ պատրաստեցին, վորոնց վրա պետք ե հաստեցին թեթև հրանոթներ: Վիթխարի աշխատանք կատարվեց զանազան պաշտպանողական ամբություններ կառուցելու համար: Կանայք հող եյին կրում: Պատանիներն ոգնում եյին նրանց ցցեր դնելու և ալլն: Վերջին հաշվով մենք ունեցանք լիակատար պատրաստ ամրաշինական կառուցվածքները ընդուղում մինչև լարափակոցները»:

«Պաշտպանության մեր շտաբը, կուսակցության ռայոնական կումիտեի հետ միասին, աշխատում եր անընդհատ: Բոլոր պուտիլովականներին մոբիլիզացիայի յենթարկեցինք խրամատներ փորելու համար, — պատմում ե մյուս մասնակիցը, վոր այդ որերին գտնվում եր Նարվայի ռայոնի պաշտպանության շտաբի կազմում: Գործարանում աշխատանքն ավարտելուց հետո ճաշում ելինք ճաշարանում: Ճաշից հետո կազմակերպված կերպով գնում եյինք խրամատներ փորելու: Խրամատները փորելուց հետո, մենք չեյինք ցրվում, այլ մնում եյինք մարտական պատրաստականությամբ զորանոցային գրության մեջ: Այսպիսով՝ ամբողջ որվա ընթացքում պուտիլովականները աշխատանքի ժամերին զենք եյին պատրաստում պաշտպանության համար, իսկ աշխատանքից հետո խրամատներ եյին փորում»:

«Թնդանոթները չեյին բավականացնում, — հիշում ե «Սկորոխոգ» գործարանի բանվորներից մեկը՝ Այն ժամանակ մենք պատրաստեցինք շարժական թնդանոթ: Դրա համար մենք հարժական թնդանոթը կամաց ամրացրինք 3-դյուլմանոց զենիթային թնդանոթը: Գործարանի փոքրիկ շողեքարշի միջոցով թնդանոթը շարժվում եր տրամվայի գծով և կարելի յեր տեղափոխել հարկ յեղած տեղը»:

Այն ժամանակ Կիրովյան գործարանի մոտ այնպիսի բարձր շենքեր չկային, ինչպես այժմ: Այն ինչ հարկավոր եր գտնել ուղղմական դիտակետ, — պատմում ե պուտիլովականներից մեկը: — Դրա համար մենք ընտրեցինք պուտիլովյան յեկեղեցու հենց այն զանգակատունը, վորտեղից Նիկոլայ Ա-ի ոպրիչները փետրվարյան հեղափոխության ժամանակ կրակում եյին պուտիլովյան բանվորների վրա: Այդ յեկեղեցին մեզ համար ծառայեց վորպես դիտակետ թե ոդային պաշտպանության և թե թշնամու ցամաքային զորքերի հայտնվելը դիտելու համար: Հենց այդ զանգակատունից ել մենք ընտրեցինք առանձին կետեր, վորտեղ կարելի յեր գասավորել խրամատները և փորել գնդացրային բներ: Հենց այդտեղ մենք հեռախոս դրինք

Խրամատների ու մեր ռայոնի պաշտպանության շտաբի հետ կապահպաննելու համար»:

Նույն լարվածությամբ ելին պատրաստվում պաշտպանելու իրենց հարազատ քաղաքը նաև մլուս գործարանների բանկուները։ Ճակատն ու թիկունքը դարձել ելին մի անբաժանելի, անհաղթելի ամբողջություն։ Ընդամենը մի քանի որվա մեջ, տառացիունն բոլորի աչքի տառաջ, քաղաքը բոլորովին կերպարանափոխվեց։


Պաշտպանության առաջին գիծը կազմակերպված եր քաղաքի այն ժամանակվա հարավային ծալքաժամասի յերկայնքով և անցնում եր հիմնականում շուրջանակի յիշաթուղագծի յերկայնքով։ Այստեղ խրամատներ եյին փորված, վորոնք ուժեղացված եյին փշալարից պատրաստած փակոցներով։ Թեերից այդ պաշտպանողական գիծն իրենց կրակով պաշտպանում եյին «Սևաստոպոլ» գծանավը, վոր խարիսխ եր զցել ծովային ջրանցքի սկզբին, և «Սամսոն» ականակիրը, վոր յեկել եր Նեսի, ի հոսանքն ի վեր գտնվող Ռիբազկի գլուխի մոտ

Պաշտպանության յերկրորդ զիծն անցնում եր Որվողնի ջրան ցըի յերկայնքով. Զբանցքի և նրան կից փողոցների յերկայնքով պատրաստված եր գնդացըրերի տողահար և խաչաձե կրակ. Որվողնի ջըրանցքի և Նեսայի միջև յեղած տարածության վրա պատրաստված եյին մի շարք միջնական պաշտպանողական բնակծեր. Բազմաթիվ շենքեր հարմարեցված եյին շուրջանակի պաշտպանության համար. Պաշտպանության յերրորդ զիծը կաղմակերպված եր Նեսայի աջ ափում (հյուսիսային): Զբային այդ ընդարձակ արգելքը (կամուրջ-ները նախապատրաստված եյին վոչնչացման) և հրանոթների ու գընդացիքների խաչաձե կրակը այդ բնակիծը դարձրել եյին ամենալուրջ արգելքը թշնամու համար:

Հնդամենը քաղաքի հրապարակներում ու ամենազլխավոր փողոցներում, առավելապես նրա հարավային և հարավարևմտյան մասերում, դրված եր մոտ 60 հրանոթ:

Քաղաքային աերոդրոմում կանգնած եյին որապահ սավառ-նակնելու

Կատարված ելին աշխատանքներ քաղաքի հյուսիսային ծայրա-



**Սխեմա 13. Գետըողըագի ներքին պաշտպանությունը**

մասը և նրան կից թաղաժամսերն ու ջրային բնագծերն ամրացնելու ուղղությամբ, այն դեպքի համար, յեթե ֆինլանդիայի կողմից զինված հարձակում լիներ։ Քաղաքի ամբողջ հյուսիսային ծայրամասը

բաժանված եր յերկու սեկտորի վրա—աջ և ձախ: Նբանց միջև վորպես սահման եր ծառայում Ֆինլանդական յերկաթուղու գիծը: Աջ (արևելյան) սեկտորում նշված եր ամրացնել պաշտպանության յերկու գիծ: 1-նը՝ Լենայա ծայրամասի յերկայնքով դեպի Պոլիտեխնիկական ինստիտուտը, Պոլոննայա սարը Ողերկովի մոտ և 2-րդը՝ շուրջանակի յերկաթուղագիծը: Ձախ (արևմտյան) սեկտորում նշված էյին պաշտպանության յերեք գիծ: 1-ը՝ Պրիմոյեյի յերկաթուղու գիծը, 2-րդը՝ Ցելագինի, Կամենսի և Ալտեկարսկի կղզիների հյուսիսային ափը և 3-րդը՝ Պետրովսկի կղզու հյուսիսային ափը և Կարպովկա գետի ձախ (հարավային) ափը:

Ժամ առ ժամ Պետրոգրադը դառնում եր ավելի ու ավելի անառիկ հնչպես տեսնում ենք, Պետրոգրադի պաշտպանության հիմքում դրված եյին նույն միջոցառումները, վոր այնպես հաջողությամբ այսեղ գործադրեց ընկեր Ստալինը: Ինչպես և այն ժամանակ, միջոցներ ձեռք առնվեցին կուսակցական կազմակերպությունները նահանջած զորամասերում ամրացնելու, ղեկավար կազմը փոխելու, բոլոր տեսակի մատակարարումը բարելավելու, ճակատին ողնելու համար թարմ զորամասեր, բանվորական ջոկատներ և համալրում ուղարկելու: Ինչպես և այն ժամանակ, ճակատի հետ միասին թիկունքն ամրացվեց և մաքրվեց խորհրդային իշխանությանը թշնամի տարրերից: Վերջապես, մտցվեց քաղաքի ներքին պաշտպանության սիստեմ, վորին մասնակցում եյին ինչպես ցամաքային ուժերը, նույնպես և Բալթյան նավատորմի նավերը, Պիտերի պրոլետարիատը լիակատար ժարտական պատրաստականությամբ եր դիմավորում թշնամու նոր հարձակմանը, լիովին ոգտագործելով ընկեր Ստալինի ղեկավարությամբ Յուղենիչի ամառային արշավի ջախջախման հերոսական փոքրը:

Դրանում եր հաղթանակի գրավականը:

## ՎՃՌԱԿԱՆ ՄԱՐՏԵՐ

Հոկտեմբերի 17-ին գեներալ Յուղենիչը հրաման տվեց գեներալ վետենկոյի դիմիզիային գրավել Տունոն և այդպիսով դադարեցնել Նիկոլայեվյան յերկաթուղով կարմիր ողնական ուժերի տեղափոխումը դեպի Պետրոգրադ, իսկ հետեվյալ որը, հոկտեմբերի 18-ին, նա հրաժեց Հյուսիս-արևմտյան բանակի 1-ին կորպուսին տիրել Պուլկովյան բարձրունքներին և ներխուժել Պետրոգրադ:

Հասան Պիտերի համար մզվող պայքարի վճռական որերը:

2-րդ բանակի զորամասերը, ամրացված ու հայթայթված բոլոր անհրաժեշտ միջոցներով, նույնպես ավարտում եր վերախմբա-

վորումը հակահարձակման անցնելու համար ներխուժած թշնամու դեմ: Հարկավոր եր, ինչպնով ուղում եւ լինի, ևս քիչ ժամանակ շահել սպիտակների հիմնական խմբավորման ճակատներում բավարար ուժեր կենարունացնելու համար: Սակայն գեպքերը չեյին սպասում:

Յուղենիչը գլխավոր հարվածն ուղղեց Պուլկովոյի վրա: 2-րդ հրաձգային դիմիզիայի զորամասերը, մարտ մզելով յետ քաշվեցին և հոկտեմբերի 20-ին մոտեցան Պուլկովոյին: Մար. և Բոլ. Պիկո-Վենուրյագի-Տոյպոլ-Նովայա Սուզի-Ռեդի, Կուզմինո և Ալեսանդրովկա կազմի վրա համառ մարտեր ծավալվեցին վրա թափված թշնամու դեմ (սխեմա 14):

Անվերջ տեղացող անձրէների տակ, թրջված շինելներով, հողի ու ցեխի մեջ կորած մարտնչում ելին Յամբուրգից նահանջած գնդերը և նրանց ոգնության հասած բանվորական ջոկատներն ու կուրսանական գումարտակները:

Մեր մարտկոցները, սարի տակ կրակային դիրք գրավելով, միքանի որ շարունակ մըրկային կրակ ելին թափում սպիտակ գլարդիանների վրա: Սպիտակ գվարդիականները շատ անգամ կրկնեցին գրուները գետնին պանկած մեր շղթաների վրա, սակայն ամեն անգամ յետ եյին մղվում: Հրեանու կրակեց հրդեհներ եյին առաջանում: Համարյա ամբողջությամբ այրվեցին Վեներյագի գյուղն ու առանձին տներ Ռեխլոլա, Տույլոլա գյուղերում և Ալեքսանդրովկա կայարանում:

7-րդ բանակի որամասերին հոկտեմբերի 20-ին ժամի 23-ին հրաման տրվեց հարձակման անցնելու: Հրամանում ազդարարվում եր.

«Հակառակորդն իր ուժերի մեծ մասը խմբավորել և Վարշավյան և Մուկովյան-Վինդավյան յերկաթուղագծերի միջև, նեղեց 2-րդ դիմիզիայի զորամասերին Դետուկոյե Սելոյի և Պավլովսկի կողմից: Վաղը, հոկտեմբերի 21-ին անցնել վճռական հարձակման 6-րդ և 2-րդ հրաձգային դիմիզիաների և զորքերի Կոլպինո-Տոսնոյի խմբավորման ճակատում:


6-րդ դիմիզիային հրամայվում եւ գրոհել հակառակորդին Կոնստանտինովկա-Նովոսելի-Ռազբեգայ ճակատում, նպատակ ունենալով դուրս գալ Ռոպշա-Կուսոնոյի Սելոյի վրա:

2-րդ դիմիզիային հրամայվում եւ համառորեն պաշտպանել Տույլոլա-Շուշարի դիրքը:

Կոլպինո-Տոսնոյի խմբավորմանը, վորի կազմի մեջ են նշանակվում կուրսանտների (Պիտերյան) ջոկատը, 2-րդ հրաձգային դիմիզիայի 2-րդ բըկգաղը, 21-րդ դիմիզիայի հեծյալ գունդը և Տույնոյի ջոկատը, հրամայվում եւ հակառակորդին գրոհել Դետուկոյե Սելո-

—Վանգամիզա—Վլադիմիրսկայա կիսակայտրանի ճակատում, նպաստակ ունենալով գործ գալ կը ասնուի Սելյո-Գատչինա ոձի մոաչ

Պետրոգրադի ներթին պաշտպանության պետը լիովին պատռաստականության և բերում քաղաքի պաշտպանությունը հոկտեմբերի 21-ին ժամի 1-ին:



Սխմա 14. Դ-րդ բանակի զորամասերի հարձակման անցնելու պլանը  
1919 թ. հունվարի 21-ին:

Ծովային ուժերի պետը պատրաստում է Բալթյան նավատորմը՝  
նավատորմի կրակով 6-րդ դիվիզիային աջակցելու համար:

Պետրովը պային պաշտպանութեան պետը ողային հետախուզություն և ուղարկում դեպի Դետսկոյե Սելո, Կրասնոյե Սելո, ումբակոծություն կատարելով՝ Կրասնոյե—Դետսկոյե գյուղերի ռայոնում:

Հայտարարել զորքերին, վրա Կարմիր Պիտերն սպասում ե վաղ-վա որվա մարտի յելքեն՝ հաջողության լիակատար վստահությամբ։

Կարմիր հրամանատարության ոպերատիվ մտադրությունը զիստողաբար ցույց է տրված 14-րդ սիեսայում։ 7-րդ բանակի զորամասերը թիերից շրջառում ելին սպիտակ զվարդիականների հիմնական խմբավորումը Լիգովյահց և Կոլտինո-Տուսոյից սկսած ուղղության վրա։ Այդ յերկու վճռական ուղղություններին վրա յեր կենտրոնացված 7-րդ բանակի բոլոր ուժերի առնվազն յերկու յերրորդ մասը, զորոնք սահշապանում ելին Պետրոգրադի մատուցները։

Հոկտեմբերի 21-ի վաղ առավոտյան մեր զորամասերը հարձակ-  
ման անցան Կրասնոյե Սելոյի և Դետուկոյե Սելոյի ուղղության վրա:

Հիգովո կայարանը և նրան կից ամառանոցային ավանը ամենամոտիկ թիկունքը դարձան Կրասնոյե Սելոյի մատուցներում ծաղվալված համառ մաքուրի համար։ Ամառանոցային ավանն իր փայտե տներով լցված եր զորքերով։ Ճանապարհի յերկայնքով ձգված եյին գումարեները, Տն-բի բակերում ծնուռ երին յերթային խոհանուները, Տեղ-տեղ գոների վը յերեացին վիրակապական կայանների սպիտակ գրոշակները, այդուղի սկսեցին գալ առաջին վիրափորները՝ Ճակատը համարյա մոտենում եր հենց կայարանին։

և զովու և Սերգիիվու ռայոնում կենտրոնացվեցին 6-րդ հրաձգային դիվիզիոնը՝ գորամասերը՝ 46-րդ, 47-րդ, 48-րդ, 49-րդ, 50-րդ և 51-րդ զնդերը, վորոնք իրենց ռամբերի վրա կրցցին Յամբուրգից նաև հանջելու ամբողջ ծանրությունը. Հոկտեմբերի 21-ին նրանք խմբավորվեցին Միջելավո, Մալ. և Բոլ. Գորլովկայի ռայոնում և Վոլխովյան խճուղու յերկանքով, Սոսնովկայի և Կուլմինոյի միջն. Բացի դրանից, Պետրոզրադից այստեղ յեկան 7 րդ և 8-րդ հրաձգային զնդերը (կայարանի ռայոն), 17-րդ հրաձգային գունդը (Պորոժկի), 478-րդ և 479-րդ հրաձգային զնդերը (Լիգովո, Ստարոյե և Նովոյե Պանովսկայուն), Բաշկիրական բրիգադը (Կուբրովի ռայոն), Մոսկվայի կուրսանտների 7-րդ գունդը (կայարանի ռայոն), 1-ին և 2-րդ պահեստային գնդերը (առաջինը Սոսնովկայի տակ, յերկրորդը՝ Վելիկոնուֆի, Մալ. և Բոլ. Ուզիկոնստի ռայոնում, նավատորմի հրամկազմի ջոկատը (Ռազբեկա), նովաստրիների 4-րդ եքսապետիցիցին ջոկատը (Ուստ-Ռուդիցի ռայոն) և բաւորչերի բազմաթիվ ջոկատները:

Այստեղ յեկան նաև «Զերնոմորեց» և «III ինտերնացիոնալը զրահագնացքները» բացի զրանից, քաղաքից մոտեցավ ավտոզրահառ դիվիլիոնը: Մեր մարտիկոցները կրակային դիրք գրավեցին կայարանի ռայոնում:

Դեռևս լույսը բոլորովին չեր բացվել, յերբ Լիգովոյի տակ կենտրոնացված զորքերն անցան հարձակման: Սկսվեցին արյունալի վըճռական մարտեր, վորոնք տեսցին հոկտեմբերի 21-ից մինչև 25-ը: Շատ կետեր մի քանի անգամ ձեռքեծեռք անցան:

Կարմիր մարտիկները մարտնչում եին անզուզական հերոսությամբ և անսահման նվիրվածությամբ իրենց սոցիալիստական Հայրենիքին: Հարյուրավոր մարտիկներ, հրամանատարներ, քաղաշխառողներ ընկան քաջերի մահով, հակառակորդից խլելով հողը տառացիութեն թիգ առ թիգ: Յերկիրը ճանաչում է Կարմիր Պիտերի բազմաթիվ հերոս-պաշտպաններին: Բազմաթիվ հերոսների ու զորամասերի մասին յերգեր են հորինված, զրքեր են զրված: Բալթիկի պանծալի նավաստիներին են նվիրված «Մենք կրոնշտագափից ենք» հիանալի կինոնկարը: Մասսաների, այլ վոչ թե անհատների, հերոսությունը Պետրովդրագը պաշտպանեց սպիտակներից, պաշտպանեց պլուստարական հեղափոխության նվաճումները:


8-րդ հրաձգային գունդը մարտի գնաց ուղղակի վագոններից: Նրանց խնդիր եր առաջադրված՝ տիրել մինլանդական կոլոնիային: Սպիտակները մեր հարձակող այդ զորամասերին հանդիպեցին կատաղի կրակով: Ֆինլանդական կոլոնիայի և Սերգեյվոր կալարանի միջև ընկած եր մի փոքր պուրակ, Կարմիրները, շեշտակի զրոհելով սպիտակների վրա՝ վերցրին այն. բայց սպիտակ գվարդիականները հակագրոհի անցան թից և հարկադրեցին մեզ յետ քաշվել: Հակառակորդի կողմից կիսով չափ շրջապատված 8-րդ գնդի Յ-րդ զումարտակը նույնպես սկսեց յետ քաշվել: Գումարտակի կոմիսար ընկ. Գրինբերգը, յետ մոելով ճնշող սպիտակ գվարդիականներին, վաշտերից մեկի հետ կանդ առավ անտառի մոտ և շրջապատվեց: Վաշտը հերոսաբար ճեղքելով գուրս եր գալիս շրջապատումից, թշնամին իր գերազանց ուժերով ընկնելով նրա վրա՝ համարյա ամբողջովին վուշնչացրեց նրան: Մարտում հերոսաբար ընկավ նաև ընկ. Գրինբերգը: Յ-րդ նույն որը գունդը կրկին անցավ հարձակման և դուրս քշեց սպիտակ գվարդիականներին այդ պուրակից:

8-րդ գնդի մարտիկների հետ միասին ուսուուի քաջաբար մարտնչում եին Մուկայի կուրսանտները, վորոնք մի քանի անգամ սիլինամարտի գնացին:

Զախ կողմում, յերկաթուղագծի յերկանքով, հերոսաբար կըռ գում եղ նավաստիների համահավաք զոկատը: Այստեղ եյին գործում

նաև 1-ին և 2-րդ պահեստային գնդերի զորամասերը: Հետեւակի հետ միասին մարտերին մասնակցում եյին և զրահապատները:

1-ին պահեստային գնդի գումարտակը Լիգովոյից հարձակում



Խրամատների մասցորդները կրանոյե Սելոյի տակ

սկսեց Պեսկի-Կուտուուղիի ուղղությամբ: Սպիտակ գվարդիականները մոտիկ հեռակայությունից գումարտակին հանդիպեցին գնդացրացին անակնկալ կրակով: Գումարտակը զգալի կորուստներ կրելով սկսեց յետ քաշվել դեպի անտառի յեզրը, Նիկլարովոյից դեպի հյուսիս: Սպիտակ գվարդիականներն այդ նկատելով՝ յերկու զրահապատքը թողին խճուղու յերկանքով, Պարզ լիքնեռմ եր, թե ինչպես սպիտակ գվարդիականների հետեւակը Կուտուուղիից հակագրոհի յեշարժվում: Քիչ եր մուռմ խուճապի մատնվելին մնացած մարտիկները գնդացրացին կրակի ու զրահամեքենայի սպառնալիքի տակ: Բայց գումարտակի հրամանատարը մարտական ճակատամասի կոմիսարի հետ միասին գերականգնեցին կարգը ստորաբաժանումում: Գումարտակը պաշտպանվեց անտառի յեզրում և յետ մղեց հակագրոհը: Նրան ոգնության հասավ Շլիսելբուրգի բանվորների գումարտակը: Առավոտյան գեմ նրանք գերսկսեցին հարձակումը և դուրս քշեցին սպիտակներին նրանց զրաված անտառից:

Այդ նույն միջոցին նավարորմի հրամկագմի ջոկատը, վորը գործում եր արևմտյան կողմում, զիշերը հայտաբերեց, վոր սպիտակ-

ներն ուզում են անցնել մեր զորամասերի աջ թեր, վորոնք հարձակ-  
վում եյին կրասոյի Սելոյի վրա: Զոկատը շեշտակի գրոհեց սպի-  
տակների լիվենյան ընտիր գնդի վրա, վոր կանդ եր առել Ռազբե-  
գայ և վելիբոնտ դյուղերում: Ծովային կուրսանտները սվինամարտում  
անազորուն հարված հասցրին թշնամուն, գյուղում գտնված սպի-  
տակների գումարտակը համարյա ամբողջությամբ վոչնչացվեց և  
նրա խղճուկ մնացորդներն իրենց զլուխն ազատեցին փախուստով: Նա-  
վատորմի հարմազդմի ջոկատը, գրավելով Ռազբեգայը, տուավոտյան  
այդտեղ տաք կովի բռնվեց սպիտակների հետ, վորոնք գրավել եյին  
վելիբոնտը:

Կասեցված եր սպիտակների հետագա առաջխաղացումը զեպի  
հյուսիս: Շուտով ջոկատին միացան Պետերգոփի կողմից հարձակման  
անցած գնդերը և ոգնության լեկած մյուս զորամասերը: Սկսվեց  
միահամուռ հարձակում Ռուզայի վրա, վորը գրավվեց հոկտեմբերի  
26-ի համառ մարտից հետո: Անկարգ նահանջած սպիտակ գվարդիա-  
կաններից մերոնք վերցրին 2 հրանոթ, 12 գնդացիր և մեկ ապրան-  
քատար ավտոմորիլ՝ փամփուշտներ բարձած:

Բաշկիրական բրիգադի և 2-րդ հրաձգային դիվիզիայի զորամա-  
սերը համառ մարտերից հետո տիրեցին կազրասարի բարձրության  
լանջերը Մալ և Բոլ. Պիկոյ գյուղերով: Հոկտեմբերի 22-ին սպիտակ-  
ներն անցան հակագրոհի: Հակառակորդի ճշշման տակ Բաշկիրակա-  
սը իգազի զորամասերը նահանջեցին զեպի Վոլխովյան խճողին: Այն  
ժամանակ եր ստեղծվում, վոր սպիտակները կարող են ճեղքել ճակա-  
տը և դուրս գալ մեր այն զորամասերի թիկունքը, վորոնք մարտ  
ելին մղում կրասոյի: Սելոյի մատուցները յերկաթուղագծի յեր-  
կայնքով գրավելու համար: Հարձակման անցած հակառակորդի վրա  
կրակ բացեց «Սևաստոպոլ» գծանալին իր աշտարակային հրանոթներով:  
Նրա կրակային հուժկու ոգնությունը կասեցրեց սպիտակների առաջ-  
ինաղացումը, իսկ ոգնության հասած 6-րդ հրաձգային դիվիզիայի  
զորամասերի շնորհիվ արագորեն վերականգնվեց դրությունը: Բաշ-  
կիրական բրիգադի զորամասերն այնուհետեւ անցան հարձակման:

Բաշկիրների հետ միասին, ուսուուի նրանց հետ սվինա-  
մարտի գնաց հատուկ նշանակման կոմունիտական ջոկատնե-  
րի հավաքական գումարտակը: Անազորույն մարտը շարունակվեց ամ-  
բողջ գիշեր: Բաշկիրական գնդերը խոշոր կորուստներ կրեցին, բայց  
յետ չեյին մնում կոմունիտակներից, վորոնք իրենց որինակով վողե-  
վորում եյին նրանց դժվարին բոպեներին:

Վրա հասավ մասախլապատ առավոտը, հակառակորդի խորքը  
ներխուժած բաշկիրական գնդերի շղթաները հարձակում սկսեցին  
Սոլոզի գյուղի վրա: Շղթաներից մեկի առջեց հարձակում եր

կի հրամանատար ընկ. Պուգանովը: Նա իր անձնական որինակով  
վոդկորում ու զրափում եր մարտիկներին: Յերբ շղթան գրոհի բարձ-  
րացավ, ընկ. Պուգանովն առաջ նետվեց: Այդ մոմենտին թշնամու  
գնդակը ծակեց նրա կուրծքը: Նա արյան մեջ շաղախված՝ գոչեց՝  
«հառչ, բաշկիրներ», և մեռած գլորվեց գետին:

Այդ միջոցին Բաշկիրական հեծյալ գունդը գրոհեց սպիտակ  
գվարդիականներին վկատողովո—կյալմյա—կուրիկա ուղղության վրա:  
Դնդի հրամանատարն ու կոմիսարն անձամբ առաջազդեցին գունդը  
գեղի գրոհ: Այդ կովում վիրավորվեց հրամանատար ընկ. Մալինով-  
սկին: Նա վիրավոր ներխուժեց Տայլիկուա գյուղը: Վերջը կապելուց  
հետո, ընկ. Մանլովսկին պահանջեց շուտով իրեն թողնեն, վորպեսի  
գյուղն «ամբողջությամբ վերցնի»:

Հերոսության հիմանալի որինակներ ցուց տվին նաև կանայք:  
Այսպես՝ այդ վճռական որերին գոհվեցին յերկու սանիտար-կոմու-  
նիտառէիներ՝ ընկերներ վորոնովան և կոնովալովան:

Ընկ. Վորոնովան զեկավարում եր Վասիլիկոսարովի ուայոնի  
բանվորական ջոկատին կից սանիտարական ջոկատը: Պրոլետար եր  
նա և ամբողջ հոգով նվիրված իր նոր աշխատանքին: Նա միշտ լի-  
նում եր առաջավոր շղթայում և թշնամու կրակի տակ ոգնում եր  
վիրավորներին: Մարտերից մեկում նա մահցու վերք ստացավ և  
քիչ հետո մահացավ:

Հերոսական մահով գոհվեց իր պրստում նաև բանվորունի ընկ.  
Կոնովալովան: Նույն ջոկատում յերեք որ առաջ մարտի ժամանակ  
սպանվեց նրա մայրը: Ընկ. Կոնովալովան, իմանալով իր մոր մահ-  
վան մասին, ցանկություն հայտնեց փոխարինել նրան և չինայել  
իր ուժերը, նույնիսկ իր կյանքը, փրկելով վիրավոր մարտիկներին:  
Վիրավորներին ոգնություն ցույց տալու ժամանակ վոտքից ծանր վի-  
րավորվեց ընկ. Կոնովալովան և քիչ հետո մեռավ արյան վարակու-  
մից:

Մեր զորամասերի հերոսական գործողություններով բեկում  
ստեղծվեց ճակատում:

Զորբորդ որը հաջողությունն ակնհայտորեն սկսեց մեր կողմը  
թեքվել: Հոկտեմբերի 25-ի առավոտյան մեր զորամասերը տիրեցին  
կրասոյի Սելոյի բարձրուն քնների հյուսիսային ստորոտում ընկած  
գյուղերը: Զնայած սպիտակ գվարդիականների հուսահատական դիմա-  
դրությանը, վորոնք բազմիցս հակագրոհի անցան, մեր գնդերը, կուր-  
սանիտական գումարտակները, նավաստիների ու բանվորների ջոկա-  
տները հասան Աննինո—կոնստանտինովկա զծին և համառ մարտ մը-  
զեցին կրասոյի Սելոյին անմիջապես կից մատուցների համար:  
Նույն որը, մոտ ժամի 16-ին, ճեղքված եյին հակառակորդի լավ ամ-

բացված դիրքերը կապորսկայա—Շունգորովիո—Ռառտենլյա ճակատամասում, մեր զորամասերը հորձանքով ներխուժեցին ճեղքվածքը և կրնկակոխ սկսեցին հետապնդել անկարգ նահանջի դիմած սպիտակ-ներին. Շունգորովոյի մոտ մերոնք վերցրին սպիտակների 4-րդ հրանոթային մարտկոցը, վոր չելին կարողացել ժամանակին տեղափոխել դիրքից:

Հոկտեմբերի 25-ի յերեկոյան դեմ մենք գրավեցինք Կրասնոյե Սելոն:

\* \*

Լիգովոյի ուսումնում հարձակման անցած զորամասերի հետ միւսին, ծավալվեց նաև զորքերի կոլպինո—Տունոյի խմբավորման զորամասերի հարձակումը:

Հոկտեմբերի 21-ի գիշերը շարունակում եյին գալ ոգնական ուժերը: Զորամասերը շատապով կարգի եյին բերվում, մատակարարվում եյին բոլոր անհրաժեշտ միջոցներով: Յերեկոյան հայտնի գարձավ՝ վոր սպիտակ գվարդիականները գրավել են Ֆյորորվյան քաղաքավանը, հետո ստացվեց նոր զեկուցագիր, թե սպիտակները ներխուժել են Յամ-իժորա գյուղը և գրավել են նրա հյուսիսարեմտյան մասը: Կոլպինոյի վրա յեր կախվել սպիտակ զվարդիականների հարձակման անմիջական սպառնալիքը: Ամբողջ գիշեր պատրաստություններ եյին տեսնվում առաջիկա հարձակման համար: Զորքերն առաջ տարվեցին դեպի յելման դիրքերը, Կարգի եյին բերվում թիկունքները: Շտապով բացազատվում եյին վիրակապական կայանները...

Հոկտեմբերի 21-ին, ժամի 6-ին վերսկսվեց հրամարաց: Յերկու կողմերից ել գործել սկսեցին մարտկոցները: Մեր զորամասերն անցան հարձակման:

Հարձակման մոմենտին կոլպինո—Տունոյի զորքերի խմբավորման կազմի մեջ եյին մտնում 9-րդ հրաձգային գունդը (Տունո), 2-րդ հրաձգային դիվիզիայի 19-րդ, 14-րդ և 15-րդ հրաձգային գընդերը (Կոլպինո—Մուկովսկայա Սլավյանկա—Միկոլովո ռայոնում), 67-րդ հրաձգային գունդը (Տունո), 188 հրաձգային գունդը (Կոլպինո), 21-րդ հրաձգային դիվիզիայի 187-րդ և 189-րդ հրաձգային գընդերը (Վորոնք Կոլպինո եյին յեկել Արևելյան ճակատից), 214-րդ հրաձգային գունդը (Տունո), Պետրոգրադի կուրսանոների ջոկատը և Մուկովսկի կուրսանոների բրիգադը՝ 7-րդ, 8-րդ և 9-րդ գնդերը (Վորոնք Կոլպինո եյին յեկել հոկտեմբերի 22-ի գիշերը), յերկաթուղային պահպանության 59-րդ և 60-րդ գնդերը (Տունո), 5-րդ Լատիշական գունդը (Պոպովկա), Մուկովսկա—Նարվայան ռայոնի բանվորների ջոկատը և Պետրոգրադի ներքին պաշտպանության ջոկատը (Կոլպինո):

Մուտակաբ հանձնաժողովի նովգորոդի և Տվերի հավաքական գումարատակները, Մուկովայի հեծյալ գունդը և 21-րդ հրաձգային դիվիզիայի հեծյալ գունդը (Տունո), Բաշկիրական համահավաք գունդը (Տունո), Բալթիկական նավաստիների ջոկատը (Կոլպինո): Այդ խմբավորման մեջ մտնող հրետանու կազմը բաղկացած եր հետեւյալ մասերից՝ 21-րդ հրաձգային դիվիզիայի դիվիզիոնը, ՎԶԿ թեթև և ծանր մարտկոցները, Մուկովայի պահեստային թեթև մարտկոցը և Մուկովայի ԶԿ թեթև մարտկոցը: Բացի գրանից, այդ խմբավորմանը տրված եյին № 60 և № 67 զրահագնացքները:

Առաջինը հաջողություն ունեցավ 5-րդ Լատիշական գունդը, վորը միանգամից Պոպովկա կայարանում բեռնաթափվելուց հետո, անսկատելի մոտեցավ Յամ-իժորային վաղ առավոտյան մառախուղի մեջ և իր հրամանատարի ու կոսիսարի զլխավորությամբ ներխուժեցին նրա արեմտան մասը: Կարձատե բռնամարտից հետո սպիտակները դուրս քշվեցին գյուղից: 5-րդ Լատիշական գունդը, դադար չտալով նահանջող հակառակորդին, կրնկակոխ հետապնդելով նրան, տիրեց Յամ-իժորայից դեպի արեմուտք ընկած Վոյսկորովո գյուղը: Մպետակ գվարդիականները, պաշտպանվելով անկարգ հրացան-գնդացրային կրակով, արագաթափ նահանջեցին դեպի Պավլովսկ:

Յամ-իժորայից յերկում են հեռվում Դետսկոյե Սելոյի բարձունքները: Պարզ յեղանակին այդտեղից կարելի յետեսնել Դետսկոյե Սելոյի առանձին շենքերն ու ռազիո-կայանի կայտերի նուրբ ցանցը: Դետսկոյե Սելոյից դեպի ձախ կարելի յետեսնել Պավլովյան պարկի համապաղադ կանաչ պարիսպը: Դետին մոտիկ դաշտի միջին նշմարվում են Մուկովսկայա Սլավյանկա գյուղի տնակները, պարտեզների կիսածածկ կանաչով: Այդ հարթավայրը՝ մի կողմից սահմանագծված Իժորա գետով, իսկ մյուս կողմից՝ Դետսկոյե Սելոյի բարձրավանդակով, 1919 թ. հոկտեմբեր ամսին դարձավ դաժան ու վճռական մարտերի ասպարեզ:

Յերեք որվա ընթացքում այստեղ չեր դադարում հրետանական ու հրացանա-գնդացրային կրակը: Կարմիր բանակային և կուրսանտական վաշտերը, նավաստիների ջոկատներն ու բանվորական գումարտակները մինչեւ ծնկները ցեխի մեջ, մղմղուն անձրես տակ ու մառախուղում, սպանվածներ ու վիրավորներ տալով, դեպի գրոհ-գրոհի յետերից ընթանում եյին այդ դաշտերով: Դետսկոյե Սելոյի և Պավլովսկի ուղղության վրա ամբողջ դաշտը ծածկված եր մեր հարձակվող շղթաներով: Աջ թեսում, Մուկովսկայա Սլավյանկայի և նովայայի միջով հարձակում եյին կուրսանտական զորամասերը: Նրանցից դեպի ձախ շարժվում եյին 14-րդ և 15-րդ հրաձգային գնդերը. 13-րդ հրաձգային գունդը նրա յետեսներ վերաբեր ուղղված Պավլովյան

պարկի ուղղության վրա հարձակվում ելին 5-րդ կատիշական գունդը և 21-րդ հրաձգային դիվիզիայի 1-ին բրիգադի գնդերը: Յարսկայա Սլավյանկայի վրա հարձակվում եր 9-րդ հրաձգային գունդը, Պավլովսկը ձախից շրջանցելու համար:

«Չնայած անդադրուն կրակին ու հրետակոծման դրդյունին,— պատմում ե մարտիկ-կուրսանտներից մեկը,— իժորայի գործարանի բանվորներն աշխատում ելին որ ու գիշեր գիշերը գործարանը լուսավորված եր, ծխնելույզները ծխում ելին, զգացվում եր բանվորների կազմակերպվածությունը: Այդ շատ եր բարձրացնում մեր տրամադրությունը»:

Կուրսանտական շղթաները շեշտակիորեն առաջ ելին նետվում դեպի Դետսկոյե Սելո: Հենց այստեղ, կուրսանտներին կողք-կողքի մարտի ելին ընթանում բանվորական ջոկատները: Բաղաքացիական հագուստ, փամփուշտներով գոտի, ուսին զցած հացի պայուսակ—ահա բանվորամարտիկի ամբողջ զինասարքը: Տարիքավորները յետ չելին մոռւմ յերիտասարդներից: Բոլորն ընթանում ելին վտանգի հանդեպ այն հաստատուն վճռականությամբ, վոր պետք ե պաշտպանել Պետրոգրադը, ինչ գնով ուզում ե լինի:

Կարմիր զորքերը հարձակվում ելին Տոսնո կալարանից հիմնականում՝ Տոսնո-Գատչինա յերկաթուղու յերկայնքով: Սպիտակներն առանձնապես համառորն դիմադրում ելին Զյորնայա գետակի անցարանների վրա, Լիսինո կայարանից գեպի արեմուտք: Այստեղ տեղանքը ճահճացել եր աշնանավին անձրեներից: Կարմիր մարտիկները ճակառակորդի հրետանային կրակի տակ, մինչև ծնկները ջրի մեջ ճակառակորդի հրետանային կրակի տակ, մինչև ծնկները ջրի մեջ անցնում ելին քայլ: Հասան անտառի յեղերքին: Դեղքում անցնում ելին քայլ առ քայլ: Հասան անտառի յեղերքին: Դրանից այն կողմ ճանապարհն արգելակում եր արագանոս Զյորնայա գետակը: Սպիտակները վոչ մի կրակոցով չեցին հայտնում իրենց մասին: Սակայն հենց վոր ջոկատն սկսեց հունով անցնել նրանք բաց արին գնդացրային ու հրացանային ուժգին կրակ: Շատ կարմիր բանակայիններ գուրս յեկան շարքից: Մարտիկներից վոմանք չելին կարողանում հաղթահարել գետի ուժեղ հոսանքը, ուժասպառվում ելին և անողնական ջուրն ելին սուզվում: Պարզվեց, վոր սպիտակները գտնվում են անտառի յեղերին: Զոկատը, մեծ կորուստներ կրելով, յետ քաշվեց զրահագնացքների կրակի պաշտպանության տակ: Քիշերը կրկին հարձակման գնացին ոգնության հասած ոգֆերի հետ միասին: Մի մութ ու խոնավ գիշեր եր Միան հրանոթային ձիգերի փայլն եր լուսավորում խափարը: Կրկին սկսեցին անցնել գետակի միջով: Սպիտակները խրամատներից ընդհուպ կրակում ելին կարմիր մարտիկների վրա, սակայն այս անգամ արգեն նրանց վոչինչ կանգնեցնել չեր կարող: Գրավված եր Զյորնայա գետակի գետանցը: Այդ կոիվներում ջոկատը կորցրեց մոտ հարյուր մարդ:

Դետսկոյե Սելոյի մերձակա մատուցներում սպիտակ գվարդիականները համառորն յետ ելին մղում կուրսանտների կրկնվող գրանները: Վերջապես հոկտեմբերի 22-ի յերեկոյան մեզ հաջողվեց գրավել նովայա գունդը, վոր գտնվում եր Դետսկոյե Սելոի ծայրամասին մոտիկ, իսկ հոկտեմբերի 23-ի լուսաբացին Պիտերի կուրսանտներն իրենց շեշտակի գրոհով վերցրին նաև Դետսկոյե Սելոն: Այդ նույն որը 5-րդ կատիշական գունդը և 21-րդ հրաձգային դիվիզիայի 1-ին բրիգադի գնդերը միահամուռ գրոհով վոչնչացը սպիտակների Վյատկայի գունդը, որ գրավել եր Պավլովյան պարկի յեղը և վերցրին քաղաքը: Միաժամանակ հարձակման անցան նաև 2-րդ հրաձգային դիվիզիայի գորամասերը:


Նրանց հետ միասին գործում ելին «Լենին» և «Վոլոդարսկի» զրահագնացքները: Այդ կովում զրահագնացքներին դիպակ ինն արկ: «Լենին» զրահագնացքի շոգեքարշը վնասվեց, և գոլորշու ու ջրի վաթածք առաջացավ շտապով վոած գուրգամների արանքներից: Յերկու զրահագնացքները, սպանունակ կրակի տակ նորոգելով ճակառակորդի պայմանացը յերկաթուղարիծը, մարդ մղելով առաջ շարժվեցին մինչև Սլեքսանդրովսկայա՝ այդտեղ պաշտպանվող սպիտակ գվարդիականների թևն անցնելու համար: Նրանք, մըրկային կրակ բանալով ճակառակորդի թիւկունքների վրա, խուճապ առաջացը նրա շարքերում և շարքից ճանեցին նրա մարտկոցը, վորը հենց այդտեղ գրավվեց մեր հետևակի կողմից:

Միաժամանակ 2-րդ, 62-րդ և 162-րդ հրաձգային գնդերը իրենց նախաձեռնությամբ գրոհեցին բոլ կուզմինո զյուղի հարավային մասը գրաված սպիտակների վրա և դուրս քշեցին նրանց այնտեղից:

Սպիտակները կազմակերպված դիմադրություն ցույց չտվին քաղաքի միջով մեր զորամասերի առաջխաղացմանը:

7-րդ բանակի քաղբաժնն իր կոչի մեջ գրում եր.

«Կարմիրները գերցրին Դետսկոյե Սելոն: Թշնամու հարձակումը ասեցված է: Կարմիրներն առաջամասերն անցան հարձակման սպիտակների



Ըսկ Զեկալովը. Շլյուել-Բուրգի խորհրդի նախագահը, վորը զովել և Գետրուդրագի մատուցների սարտերում:

գեմ: Սակայն վտանգը տակավին չի անցել: Քանի դեռ ջախջախված չե Յուղինիչի ամբողջ Հյուսիս-արևմտան բանակը, կարմիր Պիտերը սպանալիքի տակ կլինի: Պետրոգրադի բանվորներ, հրացաններդ ձեռքներիցդ վայր մի դրեք: Կանգնեցնք պոստում: Մի թուլացրեք զգոնությունը: Քաղաքը լիբակատար պտտրաստականության մեջ պահեք: Կարմիր գորքեր. սկսած հարձակումը հասցընք մինչև հաղթական վախճան: Դետուկոյե Սելոյից հետո, կան դեռ ևս կրասնոյե Սելոն և Գատչինան: Խոկ դրանցից հետո, ավելի հառաջ ու հառաջ: Մինչև վերջը չչախջախված սպիտակ իժը կարող ե նորից կենդանանալ: Նրան պետք ե ջնջիսել մինչև սատկելը: Զգանդաղել վոչ մի ժամ: Հառաջ, առանց կանգ առնելու:



Իռուստին Ժուկ, Կարելյան սեկտորի գինվորական խորհրդի անդամ, վոր սպանվել և Պետրոգրադի մատույց-ների կոիկություն:

Սպիտակ գվարդիականները նահանջեցին դեպի Գատչինա: Սեր գորամասերը խոշոր հաջողություն ձեռք բերին Դետուկոյե Սելոյի գրավումով, Պուլկովոյի հաջող պաշտպանությամբ և կրասնոյե Սելոն վերցնելով՝ չնգորյա անազորույն մարտերից հետո թշնամին յետ մղվեց և նահանջեց Պետրոգրադի մերձակա մատույցներից:

Դրանով կատարվեց Պետրոգրադի ուկերացիայի առաջին մասը, բայց թշնամին դեռևս ջախջախված չեր: Նա անհաջողության հանդիպելով՝ չեր հրաժարվում այն հույսերից, թե կարող ե վերականգնել իր դրությունը: Հաջորդ օրերում համառ մարտերն սկսվեցին կրասնոյե Սելոյից դեպի արևմուտք և դեպի հարավ և Դետուկոյե Սելոյից դեպի հարավ և դեպի հարավ-արևմուտք, Վլադիմիրսկայայի ուայոնում և այլն:

Այդ մարտերում սպիտակ գվարդիականները փրփուրը բերան-ներին ժխտում եցին նախորդ որերի մեր տարած հաջողությունը: Շատ զյուղեր, ինչպես Վիսոցկոյե, Տելիգի, Մուխովովո, Ոնտովովո, Լագոլա, Տայցի, Նովիչ Բուգոր և ուրիշները, ձեռքիձեռք եյին անցնում: Ճակատի զիծը կրասնոյե Սելոյից և Դետուկոյե Սելոյից մերթյերկարածգվում եր, մերթ կրկին մոտենում եր նրանց մատույցնե-

րին: Սակայն սպիտակների այդ բոլոր ջանքերը մատնված են անհաջողության: Թշնամին ակնհայտորեն ցածաքում եր և իժորայի գետանցներում պաշտպանվելու անհաջող փորձից հետո (Գատչինայից դեպի հյուսիս-արևելք 10 կիլոմետրի վրա), նոյեմբերի 2-ի գիշերը մաքրեց Գատչինան, իր համեմատ թղթնելով սպիտակ տերորի զոհերի բազմաթիվ դիակներ:

Գատչինայի գրավումով 7-րդ բանակի պետրոգրադյան ոպերացիան կարելի յեր հիմնականում համարել ավարտված:

Ձեռք բերված հաջողությունը գլխապտույտի չբերեց Պիտերի պլուխտարիատին: Պետրոգրադն անմիջապես պաշտպանելու լողունգը փոխարինվեց նոր լոգունդով: «Վարչ չղնել զենքը, քանի Յուղինիչի բանակը ջախջախված չե մինչև վերջը»: Կուսակցության Պետրոգրադի Կոմիտեյի Բյուրոն կարգադրեց, վոր վոչ մի կոմունիստ չի կարող յետ կանչվել ճակատից, մինչև Գրովի և Յամբուրգի գրավումը:

Պետրոգրադը Հոկտեմբերյան սոցիալիստական հեղափոխության յերկրորդ տարեդարձը դիմավորեց մարտական լողունգով: «Պետրոգրադը միշտ կմնա խորհրդային»:


Սպիտակների դեմ մղվող պայքարը թևակոխում եր իր յերկրությ փուլը: Լիովին վոչնչացնել Յուղինիչի Հյուսիս-արևելմտյան ամբողջ բանակը — ահա այս եր այն պայքարի հիմնական նպատակը, վորին մասնակցեցին վոչ միայն 7-րդ, այլև 15-րդ բանակը:

## ՅՈՒՂԵՆԻԶԻ ԶԱԽԶԱԽՈՒՄԸ

ԵՐԵՎԱՆԻ ՊՐԵՄԻՈՒՄ ՊԼԱՆ

Պետրոգրադի տակ Յուղենիչի պարտությունը ձախողման յենթարկեց սպիտակ հրամանատարության և նրա տերերի Անտանակի—ըոլոր պլանները։ Յուղենիչը պատրաստ եր ամեն ինչի դիմել, միայն թե յետ վերադարձնի Պիտերի մատուցները։ Նա դիմեց բացարձակ ոխոկի, մոտեցրեց Գատչինային իր 1-ին դիվիզիան, Բալախովիչի հեծյալ գունդը և 4-րդ դիվիզիայից յերկու գունդ, այդպիսով մերկացնելով իր աջ թեկն ու թիկունքը։ Այդ նշանակում եր, վոր Յուղենիչը իր վերջին ճիգն և գործադրում, և վոր սպիտակների տրամադրության տակ յեղած ուժերն իրենց վախճանն են ապրում։

Այդ միջոցին մեր զորամասերը հետեւյալ կերպ եյին դասավորված ճակատում (սխեմա 15)։ Եթզ հրաձգային դիվիզիան իր աջ թևով մնում էր իր տեղում։ Այստեղ գտնված գնդերն ու ծովայինանքրի եքսպեդիցիոն ջոկատները զրավում եյին Ռւսա-Մուգդիցի, Մալևու Գոլ Գորլովա, Պորոժկի գիծը։ Դիվիզիայի մարտական տեղամասի կենտրոնում շարունակվում էր զարգանալ հոկտեմբերի 21-ին սկըսված հարձակումը։ Այստեղ զործող զորամասերը գրավում եյին Գու-



Սիսեմա 15. *Մասնակություն 1919 թ. հոկտեմբերի 26-28:*

տիլիցի, Դյատլիցի, Վիտինո, Ուշկուլյա, Կիպեն, Մյուղեմյուլլյու-  
գիծը: Հասուկ նշանակություն ունեցավ Յամբուրգի խճուղու վրա  
գտնվող Վիտինո և Կիպեն գյուղերի գրավումը, վորովհետև գրանով  
վտանգ եր ստեղծվում սպիտակների Կրասնոյե Սելոյի խմբավորման  
թիկունքներին: Երդ գիվիզիայի ձախ թեր գտնվում եր Կրասնոյե  
Սելոյում:

Այդ ժամանակ Հ-ըդ հրածագային դիվիլիդիան դուրս յեկավ Շուշ-  
կողով և Սոլոզի գծի վրա: Կոլպինո-Տունոյի խմբավորման զորամա-  
սերը համառ մարտեր եյին մղում Դետուկոյե Սելոյից դեպի հարավ-  
արևմուտք: Պավլովսկից դեպի հարավ նրանք գրավել եյին Յար-  
սկայա Սլավյանկան և Անտրոպջինոն: Նրանք այդ ժամանակ Տունո-  
Գատչինա յերկաթուղագծի ուղղության վրա մարտ եյին մղում Վլա-  
գիմիրսկայա կիսակայարանից դեպի արևելք:

三

Արևմտյան ճակատի հրամանատարությունը հոկտեմբերի 26-ին  
հրաման արձակեց, վորի մեջ չափած եր-

«Ե՞րդ բանակին՝ ամբողջ ճակատով, 15-րդ բանակին՝ Լուգա-  
Պսկով ճակատամասում անցնել վճռական հարձակման:


Յուղենիչի բանակը լիովին ջախջախելու խնդիրը պետք է կատարվի ինչ գնով ուղում և լինի, կարմիր բանակայինների, կոմիսարների և հրամանատարական կազմի բոլոր ուժերի լիակատաք լրափածությամբ»:

Արևմտյան ճակատի հրամանաւորության ոպերատորիվ պլանի համաձայն, 15-րդ բանակի զորամասերն իրենց յեռանգուն հարձակումով պետք է տիրելին Լուգա-Մշենսկայա ռայոնին և առաջ շարժվելին գեղին Վոլոսովով ու Յամբուրգ, նպատակ ունենալով անցնելու Յուգենիչի սպիտակ բանակի թեսն ու թիկունքը: Միաժամանակ 7-րդ բանակի զորամասերը, հարձակում գործելով լայն ճակատով, պետք է գետնին սեպելին սպիտակ գվարդիականներին, հնարյավորություն չտային նրանց ներքին նոր վերախմբավորումներ կատարելու և նրանց պարտության մատնելին Գատչինավի մասուցներում: Այս եր սպիտակ բանակը շրջապատելու և լինապես ջախջախելու պլանը:

19-րդ հրաձգային դիվիզիան և 11-րդ հրաձգային դիվիզիայի  
1-ին բրիգադը շեշտագի հարձակում սկսեց կռւղա քաղաքի վրա և  
այնուհետև Վ.Ալոսովոյի վրա։ 11-րդ հրաձգային դիվիզիան հարձակ-  
ման անցավ Սամբո Լճի դժվարանց ռայոնով և դուրս յեկավ Յամ-  
բուրգի մոտ հարավից։ Վերջապես, 10-րդ հրաձգային դիվիզիան գրո-  
հեց սպիտակ գվարդիական զորամասերին Գդով տանող ճանապարհ-  
ների վրա։ Սպիտակիների համար միանգամյան անսպասելի յեր 15-րդ

բանակի հարձակումը։ Տաք կոիվներ տեղի ունեցան Լուգա քաղաքի հարակարգելյան մատուցներում։

Մեր գորամասերը հարձակվում ենին հրետանու, իսկ աջ թևում, բացի դրանից, և՛ զրահագնացքի կրակի ուժեղ աջակցությամբ։ Մար-



Սխեմա 16. 7-րդ և 15-րդ բանակների գորամասերի կողմէց Ցռվենիչի Հյուսութա-  
արկածոյան սպիտակ բանակը զարգածախեց պլանը:

տը չեր դադարում նույնիսկ գիշերը։ Առաջալոր շղթաների յետեից ընթացող թնդանոթները, չնայած մթությանը, հետևակի առաջին պահանջով, կրակ ելին բացում և ուղղակի նշանառությամբ քարու քանդ ելին անում հակառակորդի դիւադրության ոջախները։ Սպիտակ գվարդիականները կատաղի գիմադրություն ելին ցուց տալիս, բայց չելին կարողանում կասեցնել մեր առաջիսաղացումը։


Հոկտեմբերի 29-ի լուսաբացին, 19-ը դեկտեմբերից գորամասերը գուշը քշեցին սպիտակներին Ռուսինյա գյուղից։ Այդ առաջին հաշողությունն եր։ Հոկտեմբերի 30-ին սպիտակները նահանջեցին Վիչելուրոկ և Սմիչկովո գյուղերից, իսկ նույն որը յերեկոյան դեմ մեր գորամասերը կատաղի մարտից հետո դուրս էեկան Կոլոդնյա-Մալ և Բոլ Ռակովնյա գծի վրա։ Սպիտակ գվարդիականները, ողարկվելով գիշերացին մթությամբ, նահանջեցին գեպի կուգա գետի անցարան-ները։

Պակովի խճուղու կողմից դեսի լուսա ելին հարձակվում 11-րդ  
հրաձգային դիվիզիայի 1-ին բրիգադի գնդերը։ Առաջինը շարժվեց  
93-րդ հրաձգային դունդը։ Հոկտեմբերի 31-ի լուսարացին նա մոտե-  
ցավ Որլա գետին։ Առաջից ընթացող 8-րդ վաշտը ընդհարվեց կամուր-  
ջը պահպանող սպիտակների պահակի հետ։ Պահակը կրակ բացեց և  
միաժամանակ արքեց կամուրջը, նավթով լիրը տակառը շուռ տալով  
կամուրջի վրա։ Գումարտակի հրամանատարն ու կոմիսարը «հառաջ»  
բացականչելով նետվեցին դեսի վառվող կամուրջը և իրենց յետելց  
տարան կարմիր բանակայիններին։ Սպիտակները կրակ բաց արին  
մի քանի գնդացրերով կամուրջի յետեւմ գտնված բարձունքներից,  
Այդ չկանգնեցրեց կարմիր բանակայիններին։ Նրանք վազեվազով  
անցան վառվող կամուրջի վրայով և գրոհեցին խճուղու յերկու կող-  
մում դարան մտած սպիտակների վրա։ Մարտիկների մի մասը շե-  
նելներով հանգցրին կրակը։

93-րդ հրաձգալին գնդի Յ-րդ գումարտակը, գերիներ վերցնելով՝  
ներխուժեց Լուզա քաղաքը։ Հակառակորդը կընկակուի նահանջեց  
գեպի յերկաթուղային կայարանը։

Այդ նույն ժամանակ 19-րդ հրաձգային դիվլիպայի զորամասերը գրոհեցին սպիտակ գվարդիականների վրա և ուզա գետի անցարաններում և նույնպես ներխուժեցին քաղաք։ Սպիտակները նահանջեցին բաղաքի միջով։ Վոլոգարսկի պողոտայի և Բազարնի անցման անկյուն և տեղի ունեցավ անսպասելի ընդհարում սպիտակների ու մեր 93-րդ գնդի միջև։ Գումարտակի հրաժանաւարը կարմիր բանակայիններին գրոհի տարավ, իսկ 92-րդ և 93-րդ հրաձգային գնդերի գնդացրային իմբերի պետերը անձաւը պառկեցին գնդացիրների յետեր և կործանիչ կրակ բաց արին սպիտակների վրա։ Սպիտակ

գվարդիականները յետ նահանջեցին դեպի գետը և անկարգ փառաւստի նետվեցին՝ թողնելով վիրավորներ և սպանվածներ:




Ոբլա գետի կամուրջը Լուգայի մոտ:

Լուգա քաղաքը վերցված եր, Մեր զորամասերից հետապնդվող պլիտակները շտապով նահանջեցին դեպի հյուսիս—դեպի Մշինկայա: ԹՇՆԱՄՈՒ ՎԵՐՋԻՆ ՃԻԳԸ

Այդ միջոցին Յուղենիչը, չինայելով ուժերն ու միջոցները, ճակատ նետելով սպայական լավագույն զորամասերը, խուժում եր դեպի Կրասնոյե Սելո—դեպի Պետրովը: Նա զիտեր, վոր այդ նրա վերջին ճիգն ե, վոր թափում ե: Կատաղի մարտերի չորս որվա ընթացքում լայն տարածված վիսոցկոյե գյուղն ու մոտակա գյուղերը ձեռքեծեռք ելին անցնում, որվա մեջ մի քանի անգամ բռնամարտեր ելին լինում: Միայն կարմիր մարտիկների բացառիկ հերոսությունը կարողացավ դիմադրել կատաղած սպիտակ գվարդիականության ճնշումին, վոր գալարվում եր հոգեվարքային ջղաձգությունների մեջ:

Կարմիր մարտիկները ցուցաբերին անզուգական քաջագործություն, սասնայունություն, սրամտություն և հնարամտություն, տոկունությունը չեր գավաճանում նրանց մարտի ամենապատասխանառու, ծանր մոմենտներին: Մենք չունեյինք վոչ տանկեր և վոչ հակատանկային հրանոթներ, մարտիկները թշնամու տանկերի դեմ կուլում ելին սովորական նոնակներով: Վիսոցկոյե դյուզի մոտ կարմիր մարտիկների հարձակվող շղթաները դանդաղ ելին առաջ շարժվում մըրկային կրակի տակ: Այն ժամանակ կրասնոյե Սելոյի մար-

տական տեղամասի կոմիսարը, ապրանքատար ավտոմոբիլի վրա դնելով յերկու գնդացիր, արագությամբ հասավ հարձակվող շղթաներին և Վիսոցկոյե դյուզից 500 մետրից պակաս տարածության վրա կրակ բաց արեց սպիտակների վրա: Նրանք պատասխանեցին ուժեղ կրա-



Սխեմա 17. Մարտ Վիսոցկոյեի համար 1919 թ. նոյեմբերի 1-ին:


կով: Գնդացիրներից մեկն իսկույն վնասվեց: Գնդացրային համրանքների համարները դուրս յեկան շարքից: Այն ժամանակ կոմիսարները պառկեց գնդացրի յետեր և կրակ բացեց սպիտակ գվարդիականների վրա ժապավեն ժապավենի յետերից, մինչև վոր վիրավորվեց գլխից: Գնդացիրներով ավտոմոբիլի պաշտպանությամբ հետևակը շեշտակի գրոհեց սպիտակ գվարդիականների վրա և դուրս քշեց նրանց գյուղից (սխեմա 17):

Նովգորոդի և Պիտերի կուրսանուական գումարտակները, հեծյալ գունդն ու հրետանին վորպես ողնական ուժեր գալուց հետո, մեզ համար ստեղծվեց ակնհայտնի գերակշունչյուն սպիտակների հանդեպ, իսկ լուգայի տակ հակատի ճեղքվածքը վերջնականապես լուծեց մարտերի յելքը Պիտերի տակ:

Սպիտակները փորձեցին կասեցնել մեր հարձակումը Սավոյշնա-Սլեպիխոն-Կասկովո-Մուրաստովո-Մինկովա-Մոգովիցի-Վոլոսովով գծի վրա, բայց հաջողություն չունեցան: Զնայած աշնանային վատ յեղանակին և արդին յեկած ձյունին, մեր զորամասերն առանց կանգ առնելու առաջ ելին շարժվում, հաղթահարելով թշնամու կատաղի դիմադրությունը:

Սպիտակները լավ ելին ամրացել Կասկովոյի ծայրամասում: Մեր զորամասերն սկսեցին հարձակում գործել մուսսկիե Անտաշի դյուզից տանող խճուղու յերկայնքով: Սպիտակները մոտ թողեցին

մերոնց, իսկ հետո, անտառից խփեցին մեր թևին։ Այն ժամանակ կարմիւները գիշերը անտառով թիկնանց կատարեցին Ծելկովոյի միջով։ Մեր առաջնորդն եր Ռուսսկին Անտաշիից մի զյուղացի։ Ամբողջ գիշերը անցնում եյին անտառի կածանով։ Առավոտյան դեմ կրկին դուրս յեկան խճուղու վրա, Նովո-Կեմպոլովոյի մոտ, սպիտակների թիկունքում և սկսեցին հարձակվել։ Սպիտակներն այդպիսի հարված



Սխեմա 18. Մաքու կառկովո դյուղի մոա, 1919 թ. նոյեմբերի 6-7:


Հեյին սպասում և միանգամից նահանջեցին դեպի Ստարո—Կեմպոլովոյ ու դուռս յեկան խճուղու վրա միայն Բ. Տեղկովյի մոտ Աքտաեկից նըանք նահանջեցին դեպի Բեգունի լիցի (սիեմա 18):

Բացառություն չեր կասկովոյի տակ գիշերային համարձակ թիկնանցը։ Վոչ պակաս ցուցադրական եր Վոլոսովոյի հարավային մատուցներում Զապոլյեյի և Ողերտիցի համար մղած մարտը (սխեմա 19),

Սպիտակ գվարդիականներն ամբացան յերկու ընդարձակ ճահիճների միջև գտնվող նեղ պարանոցի վրա, Նրանց աջ թեր հենվում եր Ողերսիցի գլուխի մոտ Մորաշկովոյի ճահճի խրուտներին. Ճախիթեր հենվում եր Աստարինոյի ճահիճներին: Այդ յերկու ճահիճներն ել ծածկված եյին անտառով ու թփուտներով և համարվում եյին անանցանելի: Սպիտակների կողմէից գրաված դիրքերի ճակատի առջե-

Վում անմիջապես գտնվում եյին փոքր լճակներ, Նբանց արանքները գտնվում եյին գնդացրային խաչաձև կրակի տակ:

Հնոտ կըակ բաց արին մարտկոցով, և հետեւակը գնաց հարձակման,  
բայց ստիպված եր լիս քաշվել: Հրեանին արկակոծում եր որ ու  
գիշեր յերկու կողմից: Այն ժամանակ կարմիրները գիշերը շարժվե-  
ցին վոչ թե ճանապարհ յերկայնքով՝ այլ ճահճով ու անտառով,  
Մորոշկովոյի ճահճի մէջով: Գնում եյին առանց ուղեցուցիչի, կողմա-



Սլսիմա 19 Մարտ Զապոլոյե և Ոզերսկիցի դժուզերի մոտ

ցույցով։ Հաստոցավոր գնդաղիբները տանում ելին իրենց ուսերի վրա՝ կազմատված վիճակում։ Տեղական գնում ելին համարյա մինչև

Կարմիր Պետրովը այս մարտական մարտերում – ց

դութին ջրի միջով։ Լուսաղեմին հասան Ոզերտիցի գյուղին և դուքս գալով սպիտակների թէն ու թիկունքը՝ միանգամից անցան գրոհի։

Սպիտակները փախուստի դիմեցին։

Այս ճակատամարտի յելքով վճռվում եր Վոլոսովոյե լերկաթուղային հանգույցի բախտը։

Հրաձգային գնդերը, կուրսանտական և բանվորական գումարտակները, նավաստիների ջոկատները, լայնորեն ոգտվելով աշնանային յերկարատև գիշերների մթությունից և անտառածահնային վայրից, անցնելով հակառակորդի ամրացրած դիրքերի թեերն ու թիկունքը, հաղթահարելով աշնանային աննպաստ յեղանակները, անցնելով ճահճային գետերի հունով, իրենց յեռանդուն գործողություններով հնարավորություն չելին տալիս թշնամուն յերկար կանգ առնել վոչ մի միջնական բնագծում, քշում եյին նրան գեղի արևմուտք։ Մեր զորամասերին մեծ ոժանդակություն եր ցույց տալիս տեղական բնակչությունը։ Ճահճային ու անտառուտ աննցանելի ուայսնակարգի կարմիր զորքերն ամբողջ մի շարք կետեր վերցրին տեղական գյուղացի ուղեցույցների ոգնության շնորհիվ։ Որինակ ֆյոդորովկա և Ռազմիկ գյուղերը վերցվեցին Լյալիցիի գյուղացի Ֆ. Ի. Մատվեյեվի աջակցությամբ։

«Այդ ժամանակ ականջովս ընկավ, վոր մերոնց համար ուղեկից և հարկավոր գեղի ֆյոդորովկա գյուղը, վոր զրաված եր սպիտակների կողմից, — պատմում ե ընկ։ Մատվեյեվը՝ — Վորդուս ասացի, վոր նա դնա։ Ուղարկեցի, բայց ինքս շատ անհանդիստ եյի նրա համար։ Հետո արդեն վորդիս պատմեց, թե ինչպես ե լիդեր Նրանք գնացել են վոչ թե ճանապարհով, այլ ճահճներով. այսպես եր հրամայել հրամանատարը. Գնդացիրները տանում եյին ձեռքով, հերթով։ Ճանապարհի մի մասն անցնում եյին սողալով ձյունի ու ցեխի միջով։ Ամեն տեղ հանգիստ եր Նույնիսկ վոչ վոք չեր հազում։ Դրանից հետո, բոլորը լուսությամբ, բայց արագությամբ առաջ նետվեցին։ Միանդամից սկսեցին գնդացիրների տրաքտրաքոցները, լսվեցին բացականչություններ։ Վորդիս գեռ ուշքի չեկած, մերոնք արգեն գյուղումն են յեղել. Այդ ժամանակ սպիտակներն սկսել են փախչել...»։


Բազմաթիվ գյուղացիներ բանվորական ջոկատները մտան և զենքը ձեռքներին թշնամուն քշեցին հարազատ Խորհրդային յերկը աահմաններից։

### ՍՊԻՏԱԿՆԵՐԻ ԲԱՆԱԿԻ ՔԱՅՔԱՅՈՒՄԸ

Դ-րդ և 15-րդ բանակների զորամասերը հարձակում ձեռնարկեցին սպիտակների դիրքերի վրա Յամբուրդի մոտ և միաժամանակ

Յամբուրդի խճուղու, Բալթյան յերկաթուղագծի և ապակու գործարանի մոտով, լուգա գետի յերկայնքով։

Սպիտակները հրետանու պաշտպանությամբ նահանջեցին գեղի իրենց զլիավոր դիրքերը՝ կոսկովվկա գետի մյուս կողմը. Նոյեմբերի 14-ի առավոտից մարտն սկսվեց ամբողջ գծում։ Դիրքելու մեր փորձերը յետ ելին մղվում սպիտակ գվարդիականների կրակով։ Հրետանային կրակ տեղի ուներ վիթխարի լարվածությամբ։ 17-րդ հրաձգային գունդը հարձակվում եր անտառի միջով։ 6-րդ վաշտի հրամանատարը հրամայեց իր տեղակալին շարունակել գնդացրալին կրակը, իսկ ինքն իր ընտրած միքանի լավագույն մարտիկների հետ սողաց գեպի հակառակորդի դիրքերը և նունակներ նետեց սպիտակների վրա։ Հակառակորդը զլուխը կորցրեց. վաշտի հրամանատարը հրաման տվեց՝ «գեղի գրոհ, հուռում» և իր յետեից տարավ ամբողջ վաշտը։ Սպիտակները նետեցին իրենց զենքերը։



Սպիտակ գվարդիական խրամատի մացորդների Յամբուրդի (այժմ կինդիսեպ) մատուցներում։

6-րդ վաշտի կողմից ճակատը ճեղքելուց հետո մարտիկները նետվեցին զրոհի՝ զնդի ամբողջ ճակատով, և ճակառակորդն անձնատուր յեղավ։ Դերիներն այնքան շատ եյին, վոր նրանց թիկունք ուղարկելու համար քիչ եյին ուղեկցորդները. Սկսեցին զերիներին ուղարկել առանց ուղեկցորդների. ցույց եյին տալիս նրանց միայն շտարի ուղղությունը, և նրանք ներկայանում ելին այնտեղ առանց զենքի։ Մասսայական ձեռով սպիտակների գերի ընկնելն ապացուց

եր, վոր Յուղենիչի բանակը՝ քայլայլում՝ Մեր զորամասերը նետ-  
փեցին դեպի Յամբուրգ քաղաքի ծայրամասը:

Սպիտակ գվարդիականները միաժամանակ՝ դուրս քշվեցին նաև  
իրենց ձախ թեր զիրքերից: Կարմիրները հարձակվում ելին կամեն-  
տացիոյ գետակից սկսած անտառի միջնորդ: Յերկար ժամանակ յերկու  
կողմերից ել չեր դադարում հրետանու և գնդացիրների անազորույն  
կրակը: Զնայած այդ կրակին մեր շղթաներն առաջ ելին նետպում  
համարձակորեն և, վերջապես, անցան զրո՞ին լովեցին ձեռքի նոնակ-  
ների պայմանների ձայները, վոր կարմիր բանակայինները տեղում  
ելին սպիտակների ու նրանց խրամատների վրա: Միաժամանակ  
մեր զորամասերը վերցրին Մալ. Լուցկ գյուղը և ճեղքեցին Կոստո-  
լովկա գետի պաշտպանության գիծը: այդ գետը վոտքով անցան մեր  
զորամասերը: Սպիտակները նահանջեցին դեպի Լուցկ գետը և Բոլ-  
լուցկ գյուղը: Այստեղ վերսկսվեց կատաղի մարտը. սպիտակներն  
արդեն յերկար դիմանալ չելին կարող: Նրանք փայտյա փռվածք ելին  
պատրաստել Բոլ, Լուցկի մոտ Լուցա գետն անցնելու համար: Նրանք  
այդ փռվածքով գետն անցան և իսկույն վոչնչացրին այն: Հենց այդ  
միջոցին կարմիրները զրավեցին Յուրկինո և Կուզմինո գյուղերը և  
ներխուժեցին քաղաքը հյուսիսային կողմից: Սպիտակները նահան-  
ջեցին դեպի Ալեքսանդրովսկայա գորկա—Կամոտկա—Ժարինո գիծը:  
Համարյա միննույն ժամանակ սպիտակ գվարդիականների դիր-  
քերը ճեղքեցին նաև Բալթյան յերկաթուղու յերկայնքով:

Սպիտակները ցույց տվին կատաղի դիմադրություն: Մեր շղթա-  
ները գետնին սեպվեցին: Այն ժամանակ «Զերնոմորեց» զրահագնացքն  
առաջ շարժվեց, անընդհատ կրակ վարելով թնդանոթներով ու  
գնդացիրներով: Սպիտակները չդիմացան և սկսեցին նահանջել: Առաջ  
նետված կուրսանտներն ու նավաստիները ներխուժեցին սպիտակ  
գվարդիականների խրամատները. բացված եր մուտքը դեպի քաղաք:

Առաջինը քաղաքի հարավալին մատուցյների սպիտակ գվար-  
դիականների խրամատները ներխուժեց 19-րդ դիվիզիայի 163-րդ  
հրաձգային գունդը:

Գունդը հարձակվում եր Մշինսկայայից Լուցա գետի յերկայն-  
քով: Մոտենալով Յամբուրգին, նա հայտարերեց սպիտակ գվարդիա-  
կանների ամրությունները Վագույ գետի աջ (հյուսիսային) ափում: Այստեղ սպիտակները նախորոք պատրաստել ելին խրամատներ 3-4  
շարք լարափակոցներով: Ճանապարհին զրված եր թնդանոթ: Բացի  
դրանից, յերկաթուղագծի վրա զործում եր զրահագնացքը՝ հողով  
լցված պարկեր դարսած բաց վազունիքը:

Գունդը յերկու անգամ հարձակման գնաց, իր ձախ թեր գըլ-

խավոր հարվածը հասցնելով Լուցա գետի յերկայնքով: Մեր մարտիկ-  
ները գնդացրային և հրետանական մրրկալին կրակի տակ հւկայա-  
կան կորուստներ ելին կրում և յերբեմն ստիպված ելին կանգ առնել:  
Շատ գնդացրողներ դուրս յեկան շարքից: Սողալով առաջ ելին շարք-  
վում հետախուզները լարափակոց-  
ները կարատելու համար: Թշնամու-  
գնդացիրը հարկադրեց նրանց պակել  
խրամում լարափակոցից 50 մետրի  
վրա: Այդ ժամանակ մերոնք առաջ  
բերին թնդանոթը ամենաառաջավոր  
շղթան և սկսեցին գնդակոծել սպի-  
տակների կրակալին կեռելու ուղղակի  
մոտիկից: Հետևակը վոտքի կանգնեց  
և նորից գնաց գրո՞ի: Վորոտացին  
մեր գնդացիրները: Հետախուզները  
նրանց կրակի պաշտպանությամբ  
արագությամբ կտրատեցին լարափա-  
կոցների լարերը, և գունդը ներխու-  
ժեց սպիտակ գվարդիական խրամատ-  
ները:

Սոնի «Հինգ հարյուրի պուրակում»,  
վորի վրա սպիտակ գվարդիական-  
ները կախում ելին իրենց զոհե-  
տեղ ճեղքածքները յեղան սպի-  
տակ գվարդիական խրամատներում: Մեր զորամասերը զանազան տեղերից խուժեցին քաղաք: Թշնա-  
մին վճռական պարտություն կրեց:

\* \*


Յամբուրգը վերցված եր: Քաղաքի համար մղած մարտերում  
համարյա ամբողջությամբ վոչնչացավ սպիտակներից 2 գունդ, նրան-  
ցից մեկը թալաբյան գունդն եր, 600 սպիտակ գվարդիականներ գերի  
ընկան: Մենք վերցրինք հետեւյալ ուղամական ավարը՝ 20 գնդացիր,  
3 հրանոթ, թալաբյան գնդի գրոշը, մեկ զրահապատ, վոր առաջ  
սպիտակ գվարդիականները մեղանից խել ելին կերստովոյի տակ,  
գումակը և ուղամական այլ գույքը: Քաղաքում ազատեցինք մեղնից  
գերի ընկած մինչեւ 500 հոգու:

Սպիտակները ծանր ժառանգություն ելին թողել մեղ: Քաղա-  
քում վառվում ելին բնակելի տներն ու կից կառուցվածքները, այլ



զինվորական զորանոցները։ Փողոցներում կտրատված եյին կտղելարերը։

Թաղաքում շատ տեղեր կտղված եր սպիտակների վայրագ, հրեշտակոր տիրապետության հիշողությունների հետ։ Որինակ՝ քաղաքում բոլորը գիտեն «Հինգ հարյուրի պուրակը»։ Այդ սոճիների մի փոքրիկ պուրակ և քաղաքի հյուսիսային մասում գերեզմանոցի և կալազորային հրաձգավայրի միջև։ Այստեղ եյին բերում ամեն որ սպիտակները դատապարտվածներին գնդակահարելու և կախելու համար։ Թէ տղամարդիկ և թէ կանայք զոհ եյին գնում սպիտակ գվարդիական անողորմ տեսորին։ Սպիտակները դաժանորեն գնդակահարում եյին գերի վեցրած հրամանատարներին ու կարմիր բանակայիններին, կոմունիստներին ու կոմյերիտականներին, չքավոր գյուղացիներին, վորոնք ձերբակալվում եյին կուլակների ու գյուղի



Խրամներ, վորտեղ սպիտակները գցում եյին գնդակահարվածների գիտակները։

տերտերների մատություններով։ Գնդակահարությունն ու կախաղանը սպառնում եյին բոլոր նրանց, ովքեր թեկուզ աննշան չափով կասկածի եյին յենթարկվում խորհրդային իշխանությանը համակերելու մեջ։ Դատավարությունը հասարակ ձևականություն եր։ Շատ գնդակահարություններ կատարվում եյին առանց դատավարության։ Սպանվածների մարմինները սպիտակները նետում եյին խրամների միջև և հաղիկ ծածկում բարակ շերտ հողով։ Յամբուրգն ազատագրելուց հետո, այդ խրամները լիքն եյին չթաղված գիտակների կույտերով։

Սպանված մարտիկներն ու սպիտակ գվարդիական տեռորի զոհները թաղված են Լուգա գետից վոչ հեռու, Կարլ Մարքսի պողոտայի վրա, յեղբայրական գերեզմանատանը։ Առաջին անգամ այստեղ թաղվեցին հերոսական մահով ընկած կոմիսար ընկ. Բարանովը և 13 կարմիր բանակային։ Յամբուրգը սպիտակ գվարդիական ոկուլացիայից ազատագրելուց հետո, «Հինգ հարյուրի պուրակից» այստեղ տեղափոխվեցին և թաղվեցին զոհված ընկերների մարմինները։

Գերեզմանի վրա կանգնեցված ելայն ու հարթ քարե պատվանդան՝ կենտրոնում կոթող (որելիսկ)։ Շուրջը ծաղկանոց ե պատրաստված։

Աշխատավոր բնակչությունը հրճվանքով դիմավորեց մեր զորքերին քաղաք մտնելիս, սաստիկ ատելություն տածելով դեպի դահճները, վորոնք վորձում եյին հրով ու սրով, կախաղաններով, գնդակահարություններով ու կտանքով վերականգնել կալվածատերերի ու կապիտալիստների անհծալ իշխանությունը։

### ՅՈՒԴԵՆԻՉԻ ԲԱՆԱԿԻ ԱՆՓԱՌՈՒՆԱԿ ՎԱԽՃԱՆԸ


Յամբուրգի գրավումով և մեր զորամասերի՝ Լուգա գետի ձախափն անցնելով կործանիչ հարված եր հասցված Յուգենիչի Հյուսարմտյան սպիտակ բանակին։ Արևմտյան ճակատի հրամանատարության կողմից առաջադրված խնդիրը կիսով չափ կատարված եր։ Պետրոգրադն ազատագրված եր սպիտակ գվարդիական ոկուլացիայից։ Մնում եր մինչև վերջը ջախջախել Յուգենիչին, վորպեսզի նա ընդմիշտ հնարավորություն չունենար կրկին ներս սողոսկելու մեր խորհրդային յերկրի սահմանները։

Հյուսիսարևմտյան սպիտակ բանակը, մարտերում ջախջախված, անընդհատ նահանջներից կազմալուծված, Յամբուրգից նահանջելուց հետո կենտրոնացավ Յամբուրգ—Նարվա յերկաթուղարքի ու յունում և նրանից դեպի հարավ ու հարավարեկմուտք, Պլյուսա և Նարովա գետերի ու յունում։ Սակայն բանակը տակավին կենդանի ու ընդունակ եր իր հոգեարքի ջղաձգություններում ինչպես սատկող իժ խայթելու մեր հարձակվող զորամասերին։

Յամբուրգը վերցնելուց հետո կատաղի մարտեր տեղի ունեցան նրա արևմտյան կողմում՝ Ժարինո—Կամուտկա—Ալեքսանդրովսկայա գորկա յերկաթուղարքի վրա, Սալա կիսակայարանից դեպի արեկվելք (սիեմա 20)։

Սպիտակների դիրքերն առանձնապես ուժեղ եյին Ալեքսանդրովսկայա գորկայի մոտ։ Քարաշեն դպրոցը հարմարեցված եր համառ պաշտպանության համար։ Բաց մատուցները խիստ գժվարաց-  
հետո, այդ խրամները լիքն եյին չթաղված գիտակների կույտերով։

Նույն եյին սպիտակների այդ գիրքի գրավումը՝ Այնուամենայնիվ, այդ գիրքը վերցվեց մեր գորքերի համակցված հարվածի տակ, վոր



Ախեմա 20. 7-րդ և 15-րդ բանակների զորամասերի հարձակումը Յամբուրգը վերցնելուց հետո:

կատարվեց անտառի կողմից, միաժամանակ Նարվայի խճուղուց գրոհելով ժարինո—Կամոտկայի վրա: Դրանից հետո, սպիտակ գվար գիտանները նահանջեցին Կոչկինո—Սալա—Դուբրովկա գծի վրա, վորտեղ համառ մարտերով կը կին փորձ արին կանգնեցնել մեր հարձակումը:

Մեր զորամասերը շարունակեցին իրենց հարձակումը՝ հաղթահարելով սպիտակ գվարդիականների համառ զիմադրությունը: Կարմիր բանակայիններն ուժասպառ եյին լեղել յերկարատև մարտերից, մաշվել եյին հագուստներն ու վոտնամանները, ցրտերն սկսվում եյին, իսկ տաք հանդերձանքի տեղափոխությունը վատ եր կազմակերպված: Զորամասերում լեղան ցրտահարության դեպքեր: Այնուամենայնիվ, վոչ մի դժվարություն չկասեցրեց մեր հարձակումը: Ցեխին ու ձունին, աշնանային անձըններին ու ձմեռվա սառնամանիքին կարմիր բանակայինները, բանվորական ու պարտիզանական ջոկատները քայլ առ քայլ, առանց շեղվելու նեղում եյին սպիտակներին նարովա գետի մոտ:

Հարավից հարձակվում եյին 10-րդ հրաձգային դիվիզիայի զորամասերը Գդով—Նարվա յերկաթգծի յերկայնքով: Այստեղ իր փաստական ավարտումն եր ստանում Արևմտյան ճակատի հրամանատարության ոպերատիվ պլանը, վոր նա կազմել եր գեռս հոկտեմբերի կեսերին: Դաժան մարտերից հետո 10-րդ և 11-րդ հրաձգային դիվիզիաների զորամասերը դուրս լեկան սպիտակ գվարդիականների թևն ու թիկունքը և անմիջապես սպառնում եյին շրջապատել նրանց: Դրանով և բացատրվում այստեղ կատարված կոիվների համառ լինել:

Դուբրովկայի մոտ սպիտակները հիանալի գնդակոծի տարածություն ունեյին ամբողջ յերկու կիլոմետրի վրա: Նրանք տառացիորեն հնձում եյին հարձակվող կարմիրներին իրենց գնդացրալին կրակով: Այնուամենայնիվ 12-րդ հրաձգային գնդին հաջողվեց անցնել սպիտակների թիկունքը: Հուսալի, Յուգենիչին նվիրված զորամասերը կովում եյին համառորեն: Նրանցից քերը մնացին ալդ սպիտամարտից հետո: Յուղենիչն ահա այսպես եր բնութագրում դրությունը եսատոնիայի գլխավոր հրամանատար գեներալ Լայդոներին ուղարկած իր հեռագրում:

«Կարմիրները գերազանց ուժերով համառորեն գրոհում են և տեղատեղ նեղում են ինձ հանձնված բանակի զորամասերին, առանձնապես Գդովի կողմից: Ամենաաննշան անհաջողությունը կարող ե խուճապ ստեղծել թիկունքում և կատաստրոֆի ու ամբողջ բանակի կործանման պատճառ լինել: Անհրաժեշտ ե վոչ ուշ, քան վաղը, բոլոր

Թիկունքները տեղափոխել Նարովայի ձախ թեր: Նտիտառեսում եմ հետագա նահանջի հնարավորություն և նույնիսկ անխուսափելիություն...»:

Յուղենիչի բանակի շարքերում սկսվել եր լիակատար քայքայում: Դրան զարկ եր տալիս վերնախավը, վորի մեջ քայքայումն սկսվել եր շատ առաջ: «Զեղծարալությունները, հափշտակություններն ելին թագավորում ամենուրեք, կենտրոնական բարձր վարչություններից ու շտաբներից սկսած մինչև վաշտային շտաբներն ու արհեստանոցները: Սպելուլացիան ծաղկել եր պերճ դույնով: Խաղեր սարքված անրախտ բանակի տանջանքների հաշվին, և այդ խաղին մասնակցում եյին բոլոր մութ տարրերը՝ աստիճաններից ու կոչումներից անկախ, —գրում ե սպիտակ գվարդիականության ղեկավարներից մեկը—Գ. Ի. Գրոսսենն իր հիշողություններում:

Դեկտեմբեր ամսին խիստ ավելացավ սպիտակ փախստականների հոսանքը: «Պյատա գետի վրա մերոնք հարձակվում եյին յերկու զրահապատներով, —պատմում ե այդ մարտերին մասնակցողներից մեկը: Սպիտակները զրահագնացքի հետ դարձն եյին մտել գետի յետեւմ. նրանց հրետանային և գնդացրային կրակը հարկադրում եր մեզ ամեն անգամ յետ քաշվել, իերը մենք հարձակման ելինք անցնում: Մերոնք թիկնանց կատարեցին ճահիճների միջով: Սպիտակները հույսները կորցնելով, թե կկարողանան պաշտպանել յերկաթուղարքին կամուրջը, պալթեցրին այն, այրեցին նրան կից փայտյա կամուրջը և նահանջեցին գետից: Գիշերը հետախուզությունը ղեկուցեց, վոր սպիտակների խրամատներից շարժման ձայներ են լսվում: Մերոնք իսկույն եկթ շղթա կապեցին: Գնդացրեները լիակատար պատրաստականության եյին բերված: Թույլ տվինք, վոր սպիտակներն ընդհուպ մոտենան: «Ո՞վ ե գալիս»: —Սպիտակները: «Ինչո՞ւ յեք գալիս»: —Անձնատուր լինելու: —«Մեկմեկ յեկեք»: Առաջ ե գալիս առաջինը և հարցնում ե. «Ո՞ւր ե ձեր հրամանատարը»: Առաջ յեկավ մեր վաշտի հրամանատարը: Սպիտակ սպան ներկայանում ե. «Վյատկայի շրջ գնդի 6-րդ վաշտի հրամանատար», Յել հանձնում ե նագանը: Այնուհետև մեկմեկ զինվորները հանձնում են հրացանները: Ընդամենը 52 մարդ»:

Դրանից հետո փախստականների թիվը քանի գնում ավելանում եր. իսկ դեկտեմբեր ամսի յերկրորդ կիսին մեր կողմն անցնելու դեպքերը մասսայական բնույթ եյին կրում: Հյուսիսարևմտյան բանակն արագաթափ դեղի իր անփառունակ վախճանն եր ընթանում: Եստոնական գեներալ Տենիսոնն այսպես եր բնութագրում Յուղենիչի բանակի վիճակը. «Հյուսիսարևմտյան բանակն արդեն գոյություն չունի, կա միայն մարդկանց մասին պատճեն կամ անհաջող է այսպիսի պատճեն գոյություն ունենալ»:

Յեվ իրոք, Յուղենիչի բանակի քայքայումն ու կազմալուծումը ծավալվում ելին կայծակի արագությամբ: Գիշերները կարմիր բանակայիններն սկսել ելին խարույկներ վառել, վորպեսզի ցույց տան ճանապարհը փախստականներին, Հյուսիսարևմտյան բանակը վախճանում եր: 1919 թ. դեկտեմբերի վերջին հաշտություն կնքվեց խորհրդային կառավարության և Եստոնիայի միջն, և գրանով վերջապես Յուղենիչի անփառունակ բանակի գոյությանը: Այդ ժամանակ ընդամենը մեր կողմն եյին անցել 7611 սպիտակներ: Հյուսիսարևմտյան բանակից նախկին սպանների, մոլի հականեղափոխականների, գավաճանների անշահան թվով մնացորդներն անցան նարովագետը և գնացին Եստոնիայի տերիտորիան:

1919 թ. աշնանն ու ձմեռը մենք վճռական հաղթանակներ ձեռք բերինք հականեղափոխության դեմ մղած պայքարի բոլոր ճակատներում: Այդ ժամանակ Ստալինի հանճարը կազմակերպեց հարավային հականեղափոխության ջախջախումը Վորոնեժի, Որյովի և Կատորնայի տակ, վորից հետո դենիկինյան բանակները կրնակոխ փախան գեպի հարավ:

Արեւելքում ջախջախվեց Կոլչակը: Նրա բանակները կատարելապես կազմալուծվեցին, իսկ 1920 թ. հունվարին Կոլչակը ձերբակալվեց և գնդակահարվեց: Հյուսիսում, ինտերվենտների հեռանալուց հետո, սպիտակ գվարդիականների զորքերն սկսեցին արագ քայքայվել և տեղափակ անցնել մեր կողմը: Երբեք բանակի գորամասերի ձեռնարկած հարձակման հետևանքով 1920 թ. փետրվարի վերջին ինտերվենտներից ազատազրվեցին Արխանգելսկն ու Մուրմանսկը:

Անտանտի յերկրորդ արշավը նույնպես, ինչպես և առաջինը՝ վերջացավ նրա կազմակերպիչների համար լիակատար անհաջողությամբ:

Հաղթական Կարմիր Բանակի հաջողությունները բոլոր ճակատներում հարկադրեցին բուրժուական Եստոնիային մեզ հետ բանակցություններ սկսել հաշտության վերաբերյալ: Դորպատում (Նախ. Յուրյեվ) փետրվարի 2-ին մենք հաշտության պայմանագիրը կնքեցինք Եստոնիայի հետ: Այդ պայմանագիրը ցույց տվեց լենինյանստալինյան ազգային քաղաքականության հաստատուն լինելն ու հետևողականությունը, քաղաքականություն, վորը բոլոր ազգերին վերապահում ե ինքնորդման իրավունքը:

## ՅԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Թշնամիների գեմ հաղթանակը ձեռք բերվեց ծանր կորուստների գնով: Հաղարավոր հերոս կարսիր բանակայիններ, կուրսանաներ, նաև պատրիներ, բանվորներ իրենց կյանքը զոհեցին լենինի քաղաքի մատուցներում և հետագա մարտերում՝ ջախջախելով անիծյալ թշնամուն: Առանձնապես մեծ եյին կորուստները հրամանատարական և քաղաքական կազմից: Յեղան այնպիսի զորամասեր, վորտեղ հրամանատարներից ու քաղացատողներից մեկ-մեկ հոգի ելին վողջ մնացել:

7-րդ բանակը հոկտեմբերի 20-ից մինչև Նարվայի ոպերացիան, վոչ լրիվ տեղեկություններով, կորցրեց 10 հազարից ավելի վիրավոր, հազարից ավելի կոնտուգիա ստացածներ, 8 հազարից ավելի հիգանդներ ու ցրտահար յեղածներ, իերկու հազարից ավելի սպանվածներ:

Բանակի՝ 20—25 հազար մարտիկների ընդհանուր քանակության դեպքում, այդ նշանակում եր, վոր ճակատ յեկած բոլոր զորամասերը լրացնում եյին միայն կորուստները: Այդ թվերը պայծառորեն վկայում են Հյուսիսարևմտյան սպիտակ բանակի գեմ մզկող կորիների բացառիկ համառության և առողջության մասին, կարծիք Պիտերը պաշտպանող մեր մարտիկների արիության և հերոսության մասին, վորոնք իրենց կյանքի գնով պաշտպանեցին պրոլետարական հեղափոխության մեծ նվաճումները: Պուտիլովի, Խորովյան, Շլիսելբուրգի և մյուս զործարանների ու ֆարբիկների բանվորական ջոկատները անվեհեռությամբ մարտնչում եյին ձեռք-ձեռքի տված թշնամի նավատորմի նավաստիների և կուրսանտական գումարտակների հետ միասին: Ռազմակինժեներական տեխնիկումի կուրսանտների գումարտակը, կորցնելով իր կազմի մինչև 80 %, այնուամենայնիվ, չնահանջեց Պավլովսկի վրա բուռն հարձակում գործող թշնամու առաջ:

Նույնը պետք ե ասել նաև լատիշական հրաձիգների, 479-րդ հրաձգային գնդի մարտիկների մասին, 21-րդ հրաձգալին դիվիզիայի 3-րդ բրիգադի գնդերի մասին: Կոմունիստական հավաքական գունդը բազմաթիվ անգամ սվինամարտի գնաց՝ իր յետեից տանելով կարմիր բանակային զորամասերը և դուրս քշելով սպիտակ գվարդիականերին նրանց խրամատներից:

Առանձնահատուկ պատվագոր տեղ պետք ե տալ մեր պահծալի կուրսանտներին ու նավաստիներին, նրանք ուղարկվում ելին այնտեղ, վորտեղ անկայունություն եր ստեղծվում, և նրանք պատվով ելին կատարում իրենց առաջադրված մարտական խնդիրները: Նովորոտիկի և Զերկասկի կուրսանտներն իրենց դրոշներն անթառամ փառքով պատկեցին Կարմիր Պիտերի մատուցների համար մզկած բեկումնային:

մարտերում: Բալթյան նավաստիները կրամնոյի Սելոյի մոտ գնդացրային կրակի տակ գրոհի գնացին՝ առանց գլուխները խոնարհելուք Պիտերի կուրսանտները վնասուով և նովիյ Բուգոր գյուղերի տակ չտատանվեցին տանկային գրոհի առաջ, ընդհուզ գնդակոծելով թշնամուն զրահահար գնդակներով:

Լենինը հաղթանակի առթիվ շնորհավորելով Պիտերի պրոլետարներին՝ գրում եր:

«Խորհրդային հանրապետության յերկամյա տարեդարձի որը առաջին վողջույնին արժանի յեն Պետրոգրադի բանվորները: Պետրոգրադի բանվորները, վորպես հեղափոխական բանվորների ու դինվորների ավանդարդ, վորպես Ռուսաստանի և համայն աշխարհի աշխատավորների ավանդարդ, առաջինը տապալեցին բուրժուազիայի իշխանությունը և բարձրացրին պրոլետարական հեղափոխության դրոշը ընդգեմ կապիտալիզմի ու իմպերիալիզմի...»

Հենց վերջին որերին անգլիական ռեակցիոններ իմպերալիստներն իրենց վերջին խաղաթուղթը գրին Պետրոգրադը վերցնելու համար: Ամրող աշխարհի բուրժուազիան, և ոռւսականն առանձնապես, արդեն կանխապես վայելում եր հաղթանակը: Սակայն նրանք հաղթանակի փոխարին հարված ստացան Պետրոգրադի տակ:

Յուղենիքի զորքերը ջախջախված են և նահանջում են:

Ընկեր բանվորներ, ընկեր կարմիր բանակավիններ, լարեցեք բոլոր ուժերը: Ինչ զնով ուզում ե լինի՝ հետապնդեցեք նահանջող գորքերին, հարվածեք նրանց, հանգիստ մի տաք նրանց վոչ մի ժամ, վոչ մի րոպե: Այժմ առավել ևս մենք կարող ենք և պետք ե հարվածենք վորքան կարելի յե ավելի ուժեղ, վորպես վերջնականապես ջախջախենք թշնամուն»<sup>1)</sup>:

Լենինի քաղաքի բանվորները, Բալթյան նավաստիները, կարմիր բանակակիններն ու կուրսանտները խանդավառությամբ կատարեցին այդ կոչը:

Անմահ են կարմիր Պիտերի հերոսական պրոլետարիատի սխրագործությունները: Նա յեր, վոր մահացու վտանգի մոմենտին 7-րդ բանակի զորամասերի շարքերը մտավ, վոր ուժապառ եր թվում եր թե բոլորվին կորցրել ե մարտնչելու ընդունակությունը, և վրգենչեց նրանց իր յեռանգով ու դեպի հաղթանակն ունեցած հաստատակամությամբ: Այդ նա յեր, վոր հանձին իր լավագույն զավակների, հանձին իր կոմունիստական և կոմիերիտական ավանդարդի, հանդիսացավ այն ցեմենտը, վորը միաձուլից 7-րդ բանակը մի անպարտելի ուժի մեջ հերոսական քաղաքի մատուցներում:

<sup>1)</sup> Վ. Ի. Լենին, Յորդեր, հատ. XXIV, եջ 516.

Կարմիր Պիտերի պաշտպանությունն անխզելիորեն կապված և ժողովուրդների մեծ առաջնորդ Ստալինի անվան հետ: Պետրոգրադի պաշտպանության դործում, ինչպես հայելու մեջ, արտացոլվեցին նրա իմաստությունը, արտասովոր խորաթափանցությունը, ուղերատիվ և ստրատեգիական արվեստի բարձր վարպետությունն ու յերկաթե կամքը: Ստալինը սովորեցրեց Պիտերի պրոլետարիատին, թե ճակատում ինչպիսի կազմակերպվածություն պետք է լինի թշնամու դեմ զինված պայքարում, վոր հեղափոխական չժուլացող արթուն զգունություն պետք եւ ունենալ թիկունքում դասակարգային թշնամու նկատմամբ: Ստալինյան պլանի կատարումն ապահովեց Պիտերի պրոլետարիատի հաղթանակը թշնամու դեմ:

1919 թ. գեկտեմբերի 5-ին բացված Խորհուրդների VII Համառուսաստանյան համագումարը վորոշեց Պիտերոգրադին նվիրել կարմիր դրոշ՝ Կարմիր դրոշի շքանշանով: Կարմիր Պիտերոգրադը խորհը դային քաղաքներից առաջինը արժանի կերպով դարձավ շքանշանակիր քաղաք:

Այդ ժամանակից անցել եւ տասնութ տարի:

ԽՍՀՄ բանվոր դասակարգը, հաղթականորեն ավարտելով քաղաքացիական պատերազմը, լենինի-Ստալինի մեծ կուսակցության ղեկավարությամբ, ժողովրդի բոլոր թշնամիների դեմ մղած անհաշտ պայքարում ձեռք բերեց համաշխարհային-պատմական հաղթանակ-ներ սոցիալիզմի շինարարության գործում: Այդ շինարարության մեջ լենինգրադի բանվորները հավատարիմ մնացին իրենց հեղափոխական լավագույն տրադիցիաներին: Մեծ Ստալինի բարեկամ և զինակից Ս. Մ. Կիրովի ղեկավարությամբ նրանք ընթանում եյին մեր սոցիալիստական շինարարության առաջին շարքերում, կատարելով և գերակատարելով ստալինյան հնգամյակները: Բանդիտների, լրտեսների ու դիմերաստների տրոցկիստական-զինովյեվկական-բուխարինական հանցագործ ֆաշիստական շայկայի վոչ մի դավադրություն չկարողացավ սասանել լենինգրադի պրոլետարիատի յերկաթյա շարքերը: «Մենք վստահությամբ ու հաստատաքայլ դեպի սոցիալիզմ ենք ընթանում, դեն նետելով տրոցկիստներին, վորոնք փորձում են շեղել կուսակցության լենինյան ուղղուց», — ասում եր Սերգեյ Միրոնովիչը, կործանիչ հակահարված հասցնելով բանվոր դասակարգի գարշելի թշնամիներին, վորոնք ձգտում են իրենց քայքայիչ աշխատանքով հող պատրաստել մեր յերկրում կապիտալիստական ստըրկությունն ու ֆաշիստական բռնությունը վերականգնելու համար:

Պիտերի պրոլետարների սիրելի առաջնորդ Ս. Մ. Կիրովը զոհվեց իր պոստում տրոցկիստական-զինովյեվկական բանդիտների—ֆաշիստների կողմից ուղարկված անարգ մարդասպանի ձեռքով: Այդ

մեծ կորուստի ծանրության տակ Պիտերի պրոլետարներն եւ ավելի սերտորեն համախմբվեցին բոլշևիկների կուսակցության շուրջը: Այդ կորուստը, ինչպես և քաղաքացիական պատերազմի տարիներին, չառաջացրեց վոչ շփոթմունք և վոչ վհատություն նրանց շարքերում, ինչի վրա վոր հույս եր գրել նենդ թշնամին, այլ ընդհակառակը, այդ կորուստն ավելի յեռանդ ու համառություն մտցրեց սոցիալիստական մեծ շինարարության մեջ: Պիտերի պրոլետարները, ի պատասխան այդ նենդ սպանության, եւ ավելի բարձր պարզեցին սոցիալիստական մըրցակցության դրոշը և դուրս յեկան ստախանովականների մեծ բանակի առաջավոր շարքերը: Դրանով նրանք մի անգամ ևս ցուց տվին իրենց աներել հավատարմությունը հեղափոխական լավագույն տրադիցիաներին:

Իզուր չեր, վոր ընկեր Կիրովը, քաջ ճանաչելով Պիտերի բանվորներին, հարազատորեն զովքած նրանց հետ իր ամենորյա աշխատանքում, ասում եր բոլշևիկյան կուսակցության XVII համագումարում:

«Մեզանում, որինակ, լենինգրադի բանվորներն ասում են, վոր լենինգրադում մնացել են միայն հեղափոխական հին սքանչելի տրագիցիաները, մնացած բոլորը նոր ե»:

Ինչպես կարելի յե համեմատել, ասենք թե, 1936 թ. Կիրովյան գործարանը 1913 թ. Պուտիլովյան գործարանի հետ, յերբ նրա արտադրանքն այժմ աճել է 11 անգամ: Իսկ մյուս գործարանները: Մաքս Հելցի անվան գործարանի արտադրանքն աճել է 40 անգամ, «Կրասնայա զարյա» գործարանի արտադրանքը՝ 23 անգամ, կոչկեղենի «Սկորոխոդ» գործարանի արտադրանքը՝ 10 անգամ, «Կրասնոյե զնամյա» գործարանի արտադրանքը՝ 30 անգամ և այլն: Միանգամայն ակնհայտ ե, վոր լենինգրադի արդյունաբերությունը՝ այդ բոլորովին տարբեր արդյունաբերություն ե, համեմատած ցարական մայրաքաղաք Սանկտ-Պիտերբուրգի արդյունաբերության հետ: Լենինգրադի պրոլետարիատը, հավատարիմ ստալինական ընկ. Ժդանովի ղեկավարությամբ, հաղթանակից դեպի հաղթանակ և ընթանում սոցիալիստական շինարարության բոլոր ճակատամասերում:

Մեր քաղաքացիական պատերազմի հերոսական անցյալը շարունակում ե վառ մնալ մեր սքանչելի Հայրենիքի բոլոր ժողովուրդների գիտակցության մեջ: Աշխատավորները Ստալինյան Սահմանադրության մեջ տեսնում են իրենց սքանչելի կղձերի կենսագործումը, վորոնց համար մարտի ելին գնում սպիտակ գվարդիականների և ոտարերկրյա զավթողների դեմ քաղաքացիական պատերազմի տարիներին: Մեր անծալրածիր Հայրենիքի միլիոնավոր աշխատավորների զգացմունքները պայծառորեն արտահայտեց Սահմանադրության

մեծ ստեղծող ընկեր Ստալինը, նա ԽՍՀՄ Խորհուրդների VΙΙΙ Արտակարգ համագումարում իր զեկուցման մեջ ասաց,

«Ղորպիս արգյունք պայքարի ու զրկանքների անցած ուղու հաճելի ու բերկրալի յե ունենալ իր սեփական Սահմանադրությունը, վորը խոսում ե մեր հաղթությունների պտուղների մասին, Հաճելի ու բերկրալի յե գիտենալ, թե ինչի համար են մարտնչել մեր մարդիկ և ինչպիս են ձեռք բերել նրանք համաշխարհային-պատմական հաղթությունը: Հաճելի ու բերկրալի յե գիտենալ, վոր մեր մարդկանց առատորեն թափած արյունը ապարդյուն չի անցել, վոր այդ արյունն իր արդյունքներն ե տվել Այդ հոգեպիս զինում ե մեր բանվոր գասակարգին, մեր գյուղացիությանը, մեր աշխատավոր ինտելիգենցիային: Այդ առաջ ե մղում և ըարձրացնում ե որինական հզարտության զգացմունքը: Այդ ամրապնդում ե հավատը դեպի մեր ուժերը և մորիլիգացիայի յե յենթարկում նոր պայքարի՝ կոմունիզմի նորանոր հաղթություններ նվաճելու համար»:

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Թօնամին Կարմիր Պիտերի դոների մոտ

Ցամբուրդի և Պակովի անկումը	5
Սպիտակների գազանությունները	16
Ճակատը տատանվեց	21

Ի. Վ. Ստալինը Պետրոգրադի նախառում

Պետրոգրադի ճակատը, վորպիս Հանրապետության ամենակարենը ճակատը	29
Հարված թիկունքի հականեղափոխությանը	31
Բոլոր դեպի Պրտերի պաշտպանությունը	35
Խորության լիկիդացիան և կրանախար Պորկայում	40
Կարմուր նավատիների հերոսական գործողությունները	47
Դեպի հաղանակում ամբողջ ճակատով	49
Սպիտակների ջախճախումը 1919 թ. ամառը	52

Սմարկու ուրե (1919 թ. առուն)

Յուրի Նիկոլաևի յերկորդ արշավը	59
Լենինի կոչով	64
Քործում են ստալինյան մեթոդները	68
Մարտական լիակատար պատրաստականությամբ	71
Վճռական մարտեր	76

Յուրի Նիկոլաևի շախախումը

Շրջապատման պլանը	90
Թշնամու գերջին ճիղը	94
Քայլայումը սպիտակների բանակում	98
Յուղենիչի բանակի անփառունակ վախճանը	103

Յեզրակացություն



Գառ. Խմբագիր՝ Հ. Գոնզայ ան  
Տեխ. Խմբագիր՝ Լ. Ռհանցան  
Սրբագրել՝ Ա. Շահբայ ան

Դլամվածի լիազոր՝ Ա.՝ 4127. Հրատ. № 4722.

Պատվեր 686. Տվյալ 5000.

Թուղթ 62×94. Տպագր. Կ մամուլ

Հանձնված ե արտադրության 5/IX 1938 թ.

Սառարարված ե տպագրության 14/X 1938 թ.

Պետհրատը և տպարան, Յերևան, Լենինի փող. 65.



ՀՀ Ազգային գրադարան

NL0415151

CAMPBELL  
2039

WY

WY

WY